Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ



ՈԳՈՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

ՈԳՈՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Սիրտս դառնում է
աչքը ճանապարհի,
լեռան հույսն ի վե՜ր բարձրացող
մի Ելք...
Եվ սկսվում է
Նոր Ժամանակը...

ԼՂՀ ԳՄ
«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն
Ստեփանակերտ-2013

ՀՏԴ 891.981-1 Եսայան
ԳՄԴ 84 Հ-5
Ե 583

Տպագրվում է ԼՂՀ պետպատվերով

Խմբագիր՝ Վարդան Հակոբյան
Նկարիչ՝ Սամվել Գաբրիելյան

Եսայան Ռ.
Ե 583 Ոգու թռչունների հայրենիքում/ Ռ.Ա. Եսայան;
Խմբ.՝ Վ. Հակոբյան.- Ստեփանակերտ: Դիզակ
Պլյուս, 2013.- 400 էջ:

Գրքում ընդգրկվել են հեղինակի 2011-12թթ. գրած բանաստեղծությունները:

Ժողովածուն հրատարակվում է բանաստեղծի ծննդյան 55-ամյակի առթիվ:

ՀՏԴ 891.981-1 Եսայան
ԳՄԴ 84 Հ-5

ISBN 978-99941-2-800-6
© Եսայան Ռ. , 2013թ.



ԴՌՆԵՐԸ ԾԵԾՈՒՄ ԵՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Ճանապարհի իաչքար-աչքերը
թարթվում են
և նրանցից թևո՜ւմ են
աղավնիները:

ԱՅՍՏԵՂԻՑ ԿՍԿՍՎԵՆ

Ես խոնարհվում եմ ակունքին
Ոգու
և հագեցնո՞ւմ ծարավը Հեռվի:
   Այստեղից կսկսվե՞ն
   երթերը վաղվա:

Ճանաչողության աներևո՞ւյթ
հող:
Փողոցի անկյունում
կծկված
անեզրություն,
որ ելնում է տեղից, վազում
հանկարծակի,
ինչպես կատաղած ցո՞ւլ:
   Այստեղից կսկսվե՞ն
   հերկերը վաղվա:

Ժամանակը աճո՞ւմ է
նշաններից տարածության:
Գլորվող կափարի՞չ է
երկինքը
գաղափարի:
   Այստեղից կսկսվե՞ն
   ելքերը վաղվա:

Մի ծիտ ջո՞ւր է խմում
ակից հորիզոնի:
Առեղծվածի երա՛կ:

Անհասցե՞ ճանապարհ:
Այստեղից կսկսվե՞ն
երգերը վաղվա:

Օջախի ծուխ: Աստղի
բիբ,
կամք ու հիշողություն:
Նախնյաց ոգու եռագո՞ւյն
սլացք:
Այստեղ կբուժվե՞ն
վերքերը վաղվա:

7.09.2011թ.

ՎԱՐՔ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ

Ձեռքի հիշողություն,
ոտնահետքի հայացք,
ձայնի ավազան,
տեսողության նրբանցք,-
ահա նշաններ ոգու,
լուսանցքներ ու վարք,
որոնց մեջ կայանո՞ւմ է
տիեզերական կյանք:

20.01.2012թ.

Թե

Թե հիշողության զոհասեղան է
հասցեն լռության
և Անսահմանի կոկո՜ղն է բառը,
ոգին Անհայտի,
ուրեմն տողդ պատվանդան չէ,
այլ
միջո՜ց Հարության:

Թե ձայնի բարուր-
ճանապարհը քո
հայացքի դուռ է,
ոգու հենարան,
տեսիլքի լո՜ւյս է ներշնչանքը քո-
տիեզերքն ասուպ իր ե՜րգն է
գրում
քո ոտնահետքո՜վ...

Թե խոհդ լույսի ավետարան է,
ձայնի պատարագ,
և երազներդ ցատկահարթակ են,
ուղեցույց ելքի,
ոգու աշտարակ,-
ուրեմն երգի՜ր…
Չէ որ քո տողը
պատվանդան չէ՛, այլ
միջո՜ց Հարության:

19.01.2012թ.

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԵՂԱՆԱԿ

1. ՆԵՐԾՆՉԱՆՔԻՑ ԱՌԱՋ

Եվ ծարավի նժարներում
մրրկո՞ւմ է
քամին անապատային:
Ասուպնե՞րն են կախվել
սյուներից հիշողության:
Հավատի լեռների միջև
ժայթքո՞ւմ է
հայացքը լռության:
Հողից բուսնող ամեն համբույր
լցնում է երկինքը
ծաղիկներո՞վ երազի:
Ապագայի կանչերի վրա
բացվո՞ւմ են
առագաստները հոգու:
Խոսքի
վարագույրնե՞րն են ընկնում
Ասելիքի երկաթգծերի վրա:
Ընթացքն՝
ինքն իրենից դո՞ւրս է…
Ինձ շրջանցո՞ւմ է
լռությունը ծառի
և բուրում բողբոջներո՞վ
առավոտի:
Բառերի քարե պատյաններից
հառնո՞ւմ է
ոգին տարածության:

10.01.2012թ.

2. ՆԵՐՇՆՉԱՆՔ՝
ՈՉ ԱՌԱՆՑ ԼՌՈՒԹՅԱՆ

Բարձունքի ասպետ է
իմ լռությունը,
քարաժայռի խոհ:
Լռության ավազա՞ն:
Զոհասեղա՞ն լռության:
Լռությունը պա՞տ է,
որի վրա կանգնում է
բանաստեղծը՝
հայացքով չափելով
հեռունե՞րը հիշողության:
Լռության հայացքից
բուսե՞լ է մի ծաղիկ:
Լռության ասուպնե՞ր:
Փաթիլնե՞ր լռության:
Լռության վիրակա՞պ է
հայացքն այս աղջկա:
Լռության օրհնությո՞ւն:
Շրեմարա՞ն լռության:
Սիրտս են մխրճվել
սվինները լռության:
Տիեզերքի վերքերից
կաթկթող արյամբ
սրբագործվո՞ւմ է
խորանը լռության:
Լռության ապապարա՞նք:
Պարապո՞ւրդ լռության:
Ես փնտրում եմ շեմը լռության:
Ներշնչանք՝
ոչ առա՞նց... լռության:

23.12.2011թ.

3. ԽՈՍՔԻ ԾՆՈՒՆԴԻՑ ԱՌԱՋ

Խոսքի ծնունդից առաջ…
լռությունը համբուրում է
ակունքները
և վերածնվո՞ւմ, որպես
շնչառությունը
խաչքարի,
հետագիծն Անհայտի:
Խոսքի ծնունդից առաջ…
Հետքերիս աչքերը
բացվում են՝ տեսնելո՞վ
ճախրանքը թռչունների…
Մանկության երկնքում
թևածո՞ւմ են
ասուպները հիշողության…
Ապագան
անհանգիստ
շուռումուռ է գալիս
դագաղում անցյալի,
ոտքով հարվածում, թոցնում է
կափարիչը Մահի:
Խոսքի ծնունդից առա՞ջ…
Հեռուն բուրում է
ծաղիկներո՞վ
առեղծվածի…
Հորիզոնի ճախրանքի վրա…
Փետուրի հիշողության երկնքում
ծագո՞ւմ է աստղը Ոգու…

8.01.2012թ.

4. ՆՈՐ ԳՐՔԻ ԾՆՈՒՆԴՆ Է ԴԱ

Տողերիս միջև աղոթո՞ւմ է
Անհայտը…
Անունս հենվում է
հեռավորության ցողունի վրա
և լսում պատարա՞գն Անհունի…
Ոգու ծիածա՞ն է
բառը,
որով միանում են աստղայի՞ն
հանգրվանները:
Ստվերիս պատուհանից
երևում է
մի ուրվանկար.
նոր գրքի ծնո՞ւնդն է դա…
Լռությունը՝
ճակատագրի պատյան:
Թարթիչներից
գիշերային ոգու
կախվում են
ճանապարհները Ցավի:
Մի լույս
բողբոջների պես
պայթեցնո՞ւմ է
բազմակետերը
Առեղծվածի:

26.12.2011թ.

5. ԲՈՒՅՆՆ ԱՆՍԱՀՄԱՆԻ

Աստծո լույսը
ընդարձակում է լռությունը
բառի:
Ծառի կեղևով հոսող արցունքները
նշաննե՞րն են տարածության:
Ունայնության փոս:
Մահվան շրջագիծ:
Գոյության առանցք:
Հանգրվանների դաժան համանվա՞գ:
Ճակատագրի վիհերի վրա
կախվել է
օրը.
դա պորտալա՞րն է
իմ ճանապարհի:
Ձեռքերի աղոթքով
բարձրացնո՞ւմ եմ
երկինքները
ներշնչանքների:
Թռչունները
կտցելով փետուրները
ճանապարհների,
լեռնագագաթներին հյուսո՞ւմ են
բույնն
Անսահմանի:

29.12.2011թ.

6. ԸՆԴԼԱՅՆԵԼՈՎ ՍԱՀՄԱՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ

Ամեն Աստծո օրը՝
էկզոտիկ մի հայելի,
որից դո՞ւրս է մղվում
դատարկությունը,
ինչպես խցա՛ն:
Լռության թևերին վե՞ր է
բարձրանում
հորիզոնը
Ասելիքի:
Իմ և իմ միջև…
Իմ և գրչի միջև…
Իմ և Աստծո միջև…
Ներաշխարհն՝
ինքն իրենից դո՞ւրս է …
Մաշել ճանապարհը
քայլերով սովորույթի՝
նշանակում է
լույսի պես թրթռա՞լ
Անհունի դեռ փակ կոպերի վրա…
Պայքա՞ր է կյանքը
անդունդի եզրին ճակատագրի:
Հայացքիս շրջագծով
շարժվում է մի մրջյուն՝
ընդլայնելո՞վ սահմանը
բացահայտումների:

22.12.2011թ.

7. ԼԱԲԻՐԻՆԹՈՍԸ ԿՈՂՄՆՈՐՈՇՎՈՒՄ Է ԲՈՒՐՄՈՒՆՔՈ՞Վ ԾԱՂԿԻ

Երազը
բռնում եմ ձեռքերով ճանապարհի
և ներքաշում դեպի եզրը
իրականության:
Ներշնչանքի սահմանը՝
բողբոջ
(թե՞ թիրախ),
որ պայթում է
թռիչքներից մեղուների:
Ժամանակի շունչը դառնում է
օազիս:
Ես գրում եմ -
և վայրկյանը
բացահայտվում է,
որպես հանդիպավա՜յր:
Ներդաշնակության
բարձունքներում
վառվում է լռությունը,
ինչպես ճրա՜գ:
Լաբիրինթոսը կողմնորոշվում է
բուրմունքո՜վ ծաղկի:

13.12.2011թ.

8. ԻՍԿ ԱՊԱԳԱՅԻ ԴՌՆԵՐԸ ԾԵԾՈՒՄ ԵՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Իմ քայլերով ընդարձակվում է
շառավիղը Հույսի:
Տառի նկարագիր
և հայացք քարի,
որ ներծծվում են ժամանակի
երակների մեջ,
որպես ճանապարհի արյո՞ւն:
Արմատների
քառսի մեջ աճեցնում եմ
մեխակներ հետքերի,
աստղիկներ երազների ,
որ մայրաքաղաքն առնի
բուրմո՞ւնքը
հրեշտակների:
Իմ աչքերը կերպափոխության
հայելինե՞ր են,
ուր ծաղկում են հավերժության
խնձորենիները:
Մի օր արթնանալով,
ծառերի լուսաբացով գծեցի
հատակագիծը
Սոնետի,
ինքս ինձ առա զնդանի մեջ
ազատության
և կոփեցի,
և կոփեցի,

և կոփեցի՞
ոգիս ճանապարհորդի…
Հիմա հասել եմ դռներին
Հորիզոնի…
Ստվերի պարիսպ է երազանքը,
որ բաժանում է
Անցյալն ու Ներկան,
իսկ Ապագայի դռները
ծեծում են
հասցենե՛րը…

6.01.2012թ.

9. ԻՄ ՆԵՐԾՆՉԱՆՔՆ ՈՒ ՏԱՆՋԱՆՔԸ ՎԵՐԻՆ

Իմ ձեռագիրը քարտե՞զն է ցավի,
իմ տողը՝ բացվող դո՞ւռը Անհայտի,
երգե՞ր են բուսնում թփերից վարդի,
բուժո՞ւմ վերքերը սուրբ ծիածանով:
Հրեշտակների թևերի ծիրով
վերածնվո՞ւմ է ոգին բառերի,-
լեռնագագա՞թ, թե ճախրող արծիվ են
իմ ներշնչանքն ու տանջանքը վերին:

11.01.2012թ.

10. ՆՈՐԱՀԱՅՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խենթության առանցքից
կախվել են
բները համբույրների:
Տիեզերքը
ինքնարտահայտման
բանալի՞ն է գտնում
շնչառությամբ Սիրո:
Իմ դեմքը
կեղև՞ն է երկնային հիշողության,
որից մի պատառիկ է կտրում
ժամանակը
(աներևույթ տեսարանները
բացվում
և ասուպվո՞ւմ են
ոտնահետքերում ճակատագրի):
Անհունը
ճանաչողության կետ է, ուր
բացվում է հայա՞ցքը
Ոգու:
(Հայացքի վիհերը լցվում են
հայելու պես
և բաբախում նորահա՞յտ
առնչություններով):
Տարածության սկի՞զբ է
լեզուն
և տիեզերքի հոսո՞ւն բանալին:
Բառերը
բևեռներ են,
որ լցվում են սերմերո՞վ լռության...

12.01.2012թ.

11. ՏՈՂԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Առաջին տողը՝ կողմնացո՜ւյց հույսի,
երբ վարդի դողը հայացքն է կույսի:
Ոգու հրավեր, ներշնչանքի ծես.-
մնում է երկնես բոլորանվե՜ր:
Ամեն տող ունի ազատության օր,
երբ որ ճեղքում է պատյանն ապահով,
մղվում դեպի գիծն անիմանալի՜,
դառնում օազիս, կարոտի անիվ,
տարածքի կողպեք բացող բանալի՜:
Տող կա՝ կտրվում է պորտալարի՜ պես:
Անհայտի ծնունդ:
Հույսերի երիզ:
Տող կա՝ առասպելի դարպասն է անգո,
և կա տող մի վերին՝ ասուպի՜ վարքով,
որ բացում է թևերի
հրայրքնե՜րը հերթով…
Տող կա՝
շրջանցում է զսպանակները:
Տող կա՝
հսկո՜ւմ է տարածությունները...
Տող կա՝
կտրո՜ւմ է օդով ու սուսերով:
Լռո՛ւմ է՝ ասելո՜վ:
Եվ կա տող-խորան,
ուր հիշողության մոմեր են վառում՝
սերնդեսերո՜ւնդ:

Ամեն ոտնահետք աչքն է անցյալի,
որով տեսնո՞ւմ է Անհունի ոգին:
Եվ ամեն կանգառ՝ խթա՞ն ընթացքի
բանականության զսպանակից դուրս…
Եվ վերջին տողը՝
համա՞ռ, անզիջո՛ւմ,
ճանապարհի լույս
թունելի վերջո՞ւմ…

13.01.2012թ.

ՎԵՐՆԱԳՐԻՑ ԴՈՒՐՍ

Վերնագրից դուրս
թփրտում է լռությունը տողի՝
ձուկը Անհայտի:
Ծառի ճյուղը,
որպես ակունք,
խաղո՜ւմ է
առավոտի տաք մատներով:
Սերը պատա՜նդ է:
Ճանապարհը՝
սապատ երազի,
որ մաշվո՜ւմ է ձայներից
Ապագայի:
Մերթ ընդ մերթ
փոթորկվում է
ոգին բառարանի
բացվող
դռների հիշողությունից:
Վերնագրից դուրս…
Բառերը երազների
հանգրվանն են,
որոնցից լսվո՜ւմ են կանչերը
հորիզոնի:
Սիրտս դառնում է
աչքը ճանապարհի,
լեռան հույսն ի վե՜ր բարձրացող
մի Ելք…

Վերնագրից դուրս…
Վերնագրից դուրս…
Վերնագրից դուրս…
Ուսերս ազատվո՞ւմ են
բեռներից Անցյալի…
Եվ սկսվո՞ւմ է
Նոր Ժամանակը…

17.08.2011թ.

ԻՄ ԿՅԱՆՔԸ

Մտքերիս զարկերակի վրա
գրառումնե՞ր է
կատարում ճակատագիրը,
իսկ ես իմ ժպիտով
ջնջում եմ
և հավատի լուսանցքում գրո՞ւմ
բանաստեղծություններ:
Զգում եմ,
թե ինչպե՞ս են մենակության
ուսերից ընկնում
աճյունները հիշողության:
Որպես կայծակների շղթա՝
պոկվում է բառը հունից
Անհայտի
և դառնում
շեմը հավիտենության:
Մի խուց
ու մի կետ.
աներևույթ Գոյի
անհեթե՞թ բևեռ,-
ահա իմ հասցեն:
Ընկնող բաժակ է
մատնահետքը ծառի...
Ճակատագիրը
մոխի՞ր է ցանում
տողերիս դատարկ
պատվանդաններին:
Մինչդեռ ստվերս
իր բո՞ւյնն է հյուսում
ծաղկած ճյուղերին
հորիզոնների:

01.12.2011թ.

ՅԱՎԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍ

Ժամանակը մի կետ է,
առնչության շրջանակ,
որ ես տանում եմ միջանցքով
Տենդի:
Դեմս՝ ճանապարհն է -
հավատամքի խորան
և փետուրնե՞ր կարմիր:
Խուզարկու լռության ծաղկա՞ծ
լսողություն:
Տողն է դուրս մղվել
տարածքից Ոգու,
ինչպես քարոզից անխնա
ծակծկված մի գանգ,
ինչպես հորիզոնի թևից կառչած
դեղնակարմիր տերև,
կամ ինչպես պայտ,
որ ընկած է լուսանցքում փոշու.
մի հեղ անդրադա՛րձ՝
մեծ արշավանքից
ու կռվից հետո՞…
Երազի՞ պես ձուլվում եմ
քարին տառապանքի:
Քարը՝ թևավոր
մի հաղորդությու՞ն:
Քարը՝ սպիտակ
պատարագ:
Ճակատս խփվում է
ստվերին պարսպի
(պատմության
նոր փո՞ւլն է դա…):

Ո՞վ է սեղմում կոկորդս
փողկապով օրվա:
Հիշողության վերին հարկերում
վառվում են
լապտերները.
խի՜ղճն է արթնացել
հարյուրամյա քնից…
Տենդի զսպանակ;
Անհայտության
հարթակ:
Ճանապարհը՝
ոռնացո՜ղ
լաբիրինթոս
Ցավի:

21.09.2011թ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁՈՀԱՍԵՂԱՆԸ
ՍՐԲԱԳՈՐԾՎՈՒՄ Է ՎԱՐԴԵՐՈՎ ԱՐՅԱՆ

Մի՛ դարձրու քո խիղճը սփռոց
սեղանի:
Մի ստվեր-պատուհան ոգու,
ուր դեռ պատա՞նդ է
անդրադարձը Անսահմանի:
Վերականգնել դեմքը
Ճանապարհի՝
նշանակում է քայլե՞լ,
քայլե՛լ…
Ազատագրված
երկի՞ր է քայլելը Հայի:
Կարմիր հույս է
բխում հորիզոնից Լեռան:
Կարմիր ընդվզո՞ւմ:
Քայլե՛լ:
Օրը լուսանո՞ւմ է և մթնում
քաղաքականության
սեղանի վրա:

Ձանգի լեզվա՞կ է
մանուկը այս քաջ:

Քայլե՛լ, քայլե՛լ, քայլե՞լ …

Քայլդ արմատի պես խրե՞լ,
խրե՛լ …
Մինչև ելքերից բխի՞
սպեղանին
տարածության:

Ղարաբաղը
միակ լեզո՜ւն է իրերի,
խորհո՜ւրդը լռության:
Ղարաբաղը
շնչառությո՜ւնն է տերևի
և աստղի,
ընդհանրացո՜ւմ
տիեզերական:

Հորիզոնն իր երազ
ինքնությո՜ւնն է երգում:

Պատմության զոհասեղանը
սրբագործվում է
վարդերո՜վ արյան:

2.09.2011թ.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏՔԵՐԸ ԾԱՂԿԵԼ ԵՆ

Տիեզերքի շուրթն է ծառը,
որով հաղորդակցվո՞ւմ են
տարածությունները,
որպես տող՝ ամփոփվում
շնչառության մեջ
ժամանակի:
Պատմության զոհասեղանին
լուսանո՞ւմ է
օրը՝
ճիչը Անհայտի:
Դարերի կափարիչը ճեղքող
աղաղա՞կ:
Մանկան խորքից թռչո՞ղ
Հորիզոնի երազ:
Ճանապարհի խաչքար-աչքերը
թարթվում են
և նրանցից թևո՞ւմ են
աղավնիները:
Խաղաղության
սպիտակ կոլորի՞տ:
Պատերազմի հետքերը
ծաղկել են
միմուռի սև
ու սպիտակ
փշալարերո՞վ…
Տիեզերքի
շուրթն է ծառը,
որից կաթկթո՞ւմ են
ասուպները
Հիշողության:

15.09.2011թ.

ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ ԽՈՐՔԻՑ

Ճանապարհս
քսվում է ճակատագրի
մարմնին
և լուսավորում խորքերը բառի:
Անհայտության սպիտակ
մղու՜մ:
Բանալի՜ համբույրի:
Օրը ընկե՜րքն է
նորածին երկրի:
Ուսերիս հենվում են
ճառագայթնե՜րը
անմահության:

28.08.2011թ.

ԵՐԱԶՆԵՐԻ ՁՄԵՌ

Պատերազմ բառը վերադարձել է
բառարան-ամրոցը,
բայց չի՞ հարմարվել...
Արկերը պայթում են
ժամանակից դուրս...
Քամու թևերում ալեկոծվո՞ւմ են
հուշերը անմահների...
Ծառերը
համբարձվել են
երկինքն ի վե՞ր...
Երազների ձմե՞ռ:

24.11.2011թ.

ԿՐԱԿԻ ՍՏՎԵՐՆ Է ԿԱՐԾՐԱՑԵԼ

Ինչ-որ մեկը
բարձրանում է ձայնիս
աստիճաններով
և բացում դռները լռության:
Աստղի հայացքից ընկնում է
դիմակն ակնթարթի:
Ներշնչանքիս ճանապարհները
մաշվո՞ւմ են
քայլերով սովորության:
Ես հատում եմ որոգայթը
մենակության՝
մտնելով տարածքը երկվության:
Կրակի ստվերն է կարծրացել
բևեռների միջև
հաղորդության:

Հուշը փաթաթվել է հևքին
երակներիս
և ժպտում է Անհունի
ծաղիկներո՞վ:

28.11.2011թ.

ԾՆՈՒՆԴ

Անապատի հիշողության դողից
բուսել է մի ծաղիկ:
Միտքս երազի պես
բացում է բողբոջները
Առնչության:
Ձեռքերս մոտեցնում եմ ճիչերին
հույսի
և տաքանո՜ւմ: Աներևույթ մի
հաղորդության
կափարիչը բացում, տեսնո՜ւմ եմ
ծնունդը օրվա:
Ճակատագրի դեմքից սահում են
ծվեները
մոխրի:
Հորս ձայնը՝
տաքո՜ւկ
ապաստարան:
Հորիզոնի քայլերն
ամրապնդվո՜ւմ են
հավատո՜վ Լեռան:
Վազվզում է մեկը՝
մանկության լույսից հանելո՜վ
խաղալիքներ...
(Այդ ե՞ս եմ, արդյոք):
Մայրս հայացքն իր
տեղաշարժում է
լամպի՜ պես.
ահա և դրեց գոգին
պատուհանի՝
ընդլայնելո՜վ սահմանները

երջանկության:
(Ինչ-որ փնտրում էի,
գտնո՞ւմ եմ հիմա):
Ներշնչանքի սահմանները
հատում է ճանապարհը,
ուր տողերն են թևում,
երբեմն էլ իջնում,
    հանգստանո՞ւմ են
զոհասեղանների՛ն:
Անապատի հիշողության դողից
բուսե՞լ է մի ծաղիկ:

24.11.2011թ.

ԹԱՆԳԱՐԱՆ

Պատմության ե՛զր՝
մեկուսարան փառքի,
ուր պատանդվե՞լ են
դրոշները Քաոսի:

28.03.2012թ.

ՅԱՎԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հասնելով ափին ճակատագրի՝
նետում եմ դեմքս,
որպես խարի՜սխ:
Տարածության մատին
հագցնում եմ մատանի.
աչքս՝
մատանո՜ւ ակ:

26.03.2012թ.

ԳԼՈՐՎՈՒՄ ԵՆ ՕՐԵՐԸ՝
ՈՐՊԵՍ ԼՈՒՄՆԻ ԴԱՏԱՐԿ ՕՂԱԿՆԵՐ

Հրաժեշտի կայարա՞ն է
քո հայացքը, սեր իմ:
Ծաղիկների բուրմունք՝
լռության շրթունքին:
Անլուր տարածության
բաբախո՞ղ երգ:
Ես համբուրում եմ
բացակայությո՞ւնդ,
և իմ համբույրից արցունքի
կապույտ
դագաղնե՞ր են սահում
վայրկյանների նեղ ուսերի վրա:
Մաշկս կծկվում է
քարտեզի՞ նման
և ընդլայնվում մեկեն
ըմբոստության
մերկ հորիզոններում:
Իսկ հիշողության լեռների վրա
իմ սերն են հսկում
հրեշտակները:
Լույսը՝
զոհասեղան,
որի վրայով գլորվում են օրերը՝
որպես լուսնի դատա՞րկ
օղակներ...

02.12.2011թ.

ԺԱՄԱՆԱԿԻ ԹԵՎԵՐԻ ՄԻՋԵՎ

Լքված տո՞ւն է օրը:
Ճառագայթն է թափանցել
խորքերը
հիշողության՝
չխախտելո՜վ ռիթմը
դատարկության:
Ես նկարում եմ մատներիս
ծարա՜վ հորիզոնով,
և կախվում է ոգին առասպելի
իմ թարթիչներից:
Ժամանակի թևերի միջև
ակունքվո՜ւմ է երազը:
Ես չե՜մ հորինում:
Այս աշխարհից
ես անջատվում եմ
պատարագո՜վ ստվերիս
և միանում հուշերի
տանիքներին,
ուր աղավնինե՜ր է թռցնում
դեռևս
ծիածանոտված մի տղա:
Հոգուս ճերմակ էջերի վրա
(այս աշխարհից
ես անջատվո՜ւմ եմ
պատարագով ստվերիս),
ակունքվում է օրը
և թևավորո՜ւմ
իմ ժամանակը...

02.12.2011թ.

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՆԴԱԿ

Ճանապարհները
կախվել են
սյուներից ժամանակի,
ինչպես պատառոտվա՞ծ
երազանքներ
(կարդա՝ հագուստներ):
Քո շուրթերով (ուր համբույր
չի՞ ծնվում այլևս)
մի՛ դառնացրու
վարքը բառերի:
Անձրևի հանգրվաններ -
ներշնչանքի նժույգներ,
որոնք բա՞ց են արձակում
սանձերը հորիզոնի:
Մի կին...
Դու նրա միջով նայեցիր և
տեսար... դժոխքը:
Քառսի հետագծեր՝
Ճանապարհի եզրին:
Կանչերը բախվում են
ապագայի պատին:
Հորիզոնի կտավին նկարում է
մի ձեռք.
ամեն վրձնահարվածից ծնվում է
մի ճանապարհ,
որտեղ բնավորվո՞ւմ են գույներն
Անհայտի:
Ծարա՞վն է մրրկում
հայացքում անապատի:
Ստվերս տաշտշում է պատյանը

վայրկյանի:
Հայացքս վիհ է,
որի վրա կախվում է
Անեզրությունը -
արմատահա՜ն մի ծառ,
որի ծաղիկները
արցունքի կաթիլներ են...
Ինչ-որ մեկի հազը դարձավ
հիշողության շեմ:
Հայացքիս ժամանակից
թափվում է այնուհետև
թափո՜նն անցյալի:
Իսկ պոեզիայում (ձայները
բախվում են
հայացքների պատին)
ստեղծվում է գրեթե՜
իրականություն:
Ցանկապատի ստվերը
հագնում է ճանապարհը.
դրանով կատարում է հեռուն
ևս մի քա՜յլ
դեպի իրականություն:
Լույսը թուխս է նստել
Ճեղքերում քարերի:
Բառարանի շնչառության
միջով գնալով՝
կհասնե՞մ ես հորիզոնին
հիշողության:
Ջսպաշապիկ է
իմ ժամանակը:
Հայրենիք:
Դատարկության հո՜ղմ:

Ազգի երակներում՝
ոռնացո՞ղ անապատ:
(ժամանակի ափից կտրում եմ
իմ բաժին հա՞ցը):
Ինքնօտարման մի բևե՞ռ է
այս լռությունը:
Մի վիհ ստվերի:
Եվ պատերազմի հետքը՝
որպես ճիչ մոխիրե,
դո՞ւրս է թռչում...
Ցավն՝ ապաստարան,
ցավը՝ կողմնացույց,
ցավն օրորո՞ց է...
(ժամանակի ակից խմում եմ
իմ բաժին ջո՞ւրը):
Բացվում է
մի դուռ: Մենակությունը
անդրադարձվո՞ւմ է
աշխարհի բոլոր պատերի վրա...
Քառի տարածությունը՝
սեր ու... հանդիպավա՞յր...
Կորչո՞ւմ, կորչո՞ւմ եմ ես,
և ինձ կուլ է տալիս
վանդակն իմ տեսողության:

30.06.2011թ.

ՓԼՈՒԶՎԱԾ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱՐՄԻՐ ՍՏՎԵՐԸ

Պատվանդանները
զոհասեղաննե՞ր են,
թե … հատվա՜ծ ծառեր …
(Սատանայի պա՜ր
թմբուկի վրա
Անտարբերության):
Հիշողության մի բա՜նտ,
որից ազատվում ենք
մենք տարեցտարի
և ժա՜մ առ ժա՜մ…
(Ապագան կարծես
հիշողություն չունի,
Ապագան ունի միայն
կարմիր ստվեր,
որից հառնո՜ւմ են
պատվանդանները…):

4.09.2011թ.

ՀՈՒՇԵՐԻ ՇՐՋԱԳԾԵՐ

Հետքերիս ճերմակ
բաբախյուններով
արթնանո՞ւմ են իմ ճանապարհները:
Բուրմունքն,
ինչպես
համբուրող շուրթ,
ձևավորո՞ւմ է սենյակները օդի...
Ազդեցիկ է
քամին
քարե:
Ձայները,
որպես
ուրվականի բույր,
լցվում են անկյունները
հիշողության:
Բացվող մի դո՞ւռ է
հայացքը իմ մոր...
Ես ներս եմ մտնում.
տոնածառի ճյուղերից կաթկթող
երազը
իմ արյո՞ւնն է...
Սպիտակ խաղերով
բաբախո՞ւմ են իմ
ճանապարհները,
որպես հուշերի շրջագծեր:
Իրակա՞ն է
շեմը
երազի,
անիրական չէ՛
բույրը
Հորիզոն-
ծաղկի: *28.08.2011թ.*

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԵԼՔԸ

Լռության ընդերքում
վառվում են
կրակներ Միֆի:
Ճեղքիր
անհունությունը բառի՝
պատռելո՞վ կեղևն
իրականի:
Սերը ապաստարան
չի դառնա երբեք,
որովհետև այնտեղ մշտարթո՞ւն է
ստվերը ցավի:
Երկնային Տերը
հրեշտակի թևերն է
քսում
լույսին
վերքերիս,
և թևավորվում է
ծովը ցավերի
ու վե՞ր բարձրանում…
Շուրթերը,
որ համբուրում են ճակատը
նեռի
(խաչքար չէր դա ամենևին, ոչ էլ
խորան…
եկեղեցու)…
Շուրթերը…
զսպաշապիկնե՞ր են …
Բանաստեղծությամբ
արթնանում է
առավոտը

և գրում
գիշերվա թերթերի վրա:
Նահապետ դաշտը պարզում է
ինձ մի ծաղիկ՝
որպես արարչակա՜ն
միջնորդություն:
Լռության ընդերքում
վառվում են
կրակներ Միֆի:
Ճեղքիր
անհունությունը բառի՝
պատռելո՜վ կեղևն
իրականի:

*

Հիշողության կարմիր թելե՜ր եմ
հանում
ընդերքից բառի,
դարձնում ճոպանուղի,
որով ճամփորդելով՝
հասնո՞ւմ եմ ես ինձ:
Հասնո՜ւմ եմ տիեզերքի
աներևույթ կետին:

5.07.2011թ.

ՄԱՐԴՈՒ ՄԻ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ, ՄԻ ՀԱՅԱՑՔ ԼԵՌԱՆ

Հորիզոնի ճյուղից ընկնող
արցունք է
ժամանակը:
Շողը
թփրտացող ձուկ է,
որ անձրևի սյուներից իջնում,
սուզվում է
սահանքներում առավոտի:
Ամեն բառ ունի իր վանդակը
և ազատությունը:
Աշխարհի անկյուններից մեկում
նստել է Անհայտը,
որպես կատու՛:
Ո՞վ է գնում դեպի
անհունությունը բառի:

Նոր դռներ՞ են
բացվում
ճախրանքում թռչունների:
Բիբլիակա՞ն ընթացք:
Հավերժությունը մրսած ձեռքերն
է տաքացնում
անցնող վայրկյանների
խարույկի՞ վրա.
դա փրկված հայացքն է
Մասիսի,
որից ելնում են ծաղիկնե՞ր
հավատի:
Աղոթքի բառերից

սքանչանո՞ւմ է
աշտարակը հոգուս:
Փառքի աղի շերտ է
երթը մարդկային,
որը լիզում է... ճանապարհը:
Իմ գրչի ծայրին՝
աչքը
ճանապարհի,
որով գրում է
տարածության ոգին:
Ավարայրի դաշտից մինչև շեմը
Ապագայի՝
մարդու մի շնչառությո՛ւն,
մի հայա՞ցք Լեռան:

7.07.2011թ.

ՀԵՏԱԳԻԾ

Պատմության տարերքը
թևե՞րն է բացում…
Իսկ բանաստեղծը
արթնացնո՞ւմ է ներշնչանքի
դռներ
հողմապտույտում…
Ազատարար հայի հայացքի
ավազանում
սրբագործվեց բա՞ռը…
Ոգու հայրենիքից դուրս մղվեց
օդը
ստրկամեծա՞ր...
Թուրքը՝ մի կափարիչ,
որ գլորվո՞ւմ է պատմության
աստիճաններով…
Մոխիր: Մոխիր: Մոխիր:
Այստեղով անցել է…
անդիմությո՞ւնը…
Պատմության տարերքը
թևե՞րն է
բացում…
Ճակատագրի պատյան է
օրը,
որից հանվո՞ւմ է
սուրն Ազատության:

11.08.2011թ.

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԱԿՈ՞Վ

Թռչունների բիբերը
կարկտահարո՞ւմ են
մարդկային ճակատագրի
տանիքները գորշ:
Անդունդները լցվում են
ճիչերով թևավո՞ր:
Հրդեհում,
մաքրագործում են
կրակով Ոխի…
Թռչունների բիբերը
կարկտահարո՞ւմ են
խեցեփեղկերը մարդկային
խղճի:

6.09.2011թ.

ԵԼՔ ԱՆՍԱՀՄԱՆԻՑ

Բեկոր առ բեկոր
ամբողջացնում եմ կերպարանքը
Ոգու: Առասպելից պոկված
ոտնահետքերով
գալի՞ս է Ապագան:
Տեսողության զոհասեղանից
ծորում է ժամանակը,
ինչպես մե՞ղր:
Հուշն իր տեսադաշտն է
տրամադրում ինձ՝ որպես
արտակարգ
խաղահրապարա՞կ:
Երազի ջնջոցն է շարժվում
ձեռքում ճանապարհի,
ժամանակի դեմքից
ընկնում են
բիբերը խղճի:
Բառն իր կշի՞ռն է վերստանում
նժարներին Ապագայի:
(Համբույրների աճյուն,
ունայնության ցանց):
Հիշողության տաք արյո՞ւնն է
շատրվանում
լռության վերձիգ ճյուղերն ի վեր:
Իրականության
խրտվիլակի դեմքից
հոսում են աչքերը,
որպես առու:
Երազ և անդունդ:

Անհայտի ճիչերով
լուսանկարում եմ հայացքն
հորիզոնի
և կպցնում դռներին
Ժամանակի...
Դրախտի շեմը մերթ անհետանում,
մերթ հայտնվո՞ւմ է
երկնքի և երկրի միջև...
Բեկոր առ բեկոր
ամբողջացնում եմ
կերպարանքը
Ոգու: Առասպելից պոկված
ոտնահետքերով
գալի՞ս է Ապագան: Քաոսի
թևերը կապում եմ
պարանով և ձգում-տանո՞ւմ եմ
լեռներն ի վեր.
մանկության օրերի փուչիկներն
էի՞ այդպես տանում:
Ելք՝ Անսահմանից:

03.12.2011թ.

ՄԵԿՈՒՍԻ ԿՅԱՆՔ

Ես ինձնից հեռացել եմ:

Ճմրթված թուղթ է օրը՝
տխո՜ւր հետագիծը
քաղաքական պատվերի:

Շրջադա՞ռձ է
բառը:

Եղանակների դռների առջև
ծաղիկնե՜ր են բուսել
մեկուսի…

Հորիզոնի խլի՜ռտ՝
իմ պատրանքների
ցողունի վրա…

6.09.2011թ.

ԱՆՀԱՍՈՒԹՅՈՒՆ

Հուշի ակունքներում խլրտու՞մ է
լույսը,
մանկության երկնքում
սավառնող երազներ,
մերթ գտնում եմ ինձ անդունդի
եզրին,
մերթ էլ կորցնում՝ որպես տա՞ք
համբույր
այս տիեզերքի շուրթերի միջև…
- Գգվի՞ր նշանն իմ
բացակայության,
այս տիեզերքի բևեռների միջև
ուզում եմ օդ դառնալ,
վառվել, ինչպես քար,
հորիզոնի ափի մեջ դառնալ
պատարա՞գ
վերջին երազի:
Գգվի՞ր նշանն իմ
բացակայության,
սե՛ր իմ…
Այդ ես չե՛մ, ես չե՛մ…
Հորիզոնն ի՞ վեր
քայլում է ստվերը
Հավերժ Սիրահարի…
Եվ շուրթերիս վրա
մաղվում են թել-թել
մոխրի՞ փաթիլներ…
Հուշի ակունքներում խլրտու՞մ է
աշունը…

28.08.2011թ.

ԱՇՈՒՆԸ

Աշունը կարմիր տերևների վրա
պառկել է, սսկվել
և անդրադարձվե՞լ
երկնքի ճերմակ
բաբախյուններում…
Ճանապարհը չի՞ բացվում,
ինչպես ծաղիկ:
Աշունը…
երկնքի կտցին թփրտացող
ծիածա՞ն…
Ճակատագրի բացվող
կոպերը…
ի ցու՞յց են դնում
սարսափի ու վախի կարմիր
արձաններ…
Աշունը կարմիր տերևների վրա
թողնում է մոխիր ...
Լո՞ւյս է
հետագիծը
Հրեշտակի…

ՊԱՏԵՐԱԶՄ

Զինվորի ձեռքերը
տարածության հասցենե՞ր են...
Երբ հայացքը... կրակո՛ց է,
փլուզվող մի բո՞ւյն է
ձայնն Ապագայի:
Չկայացած թռիչքի
սպիտակ մի ձու
կտցե՞լ է ուզում
հատիկը գարու
շառաչուն
արյան թևերի՛ վրա...

4.03.2012թ.

ԱՂՋԿԱ ԵՐԱԶՈՎ ՎԵՐԱԾՆՎՈՒՄ Է

Աղջկա երազով վերածնվո՞ւմ է
ժամանակը:
Ձեռքերի
հայացքն օրորվում է,
մանկան ծնունդով
ընկնո՞ւմ է մի վարագույր:
Անհայտի
սարսուռն անսպա՞ռ է...
Հորիզոնի ստեղների վրա
գալարվող նվա՞գ...
Աղջկա երազով վերածնվո՞ւմ է
ժամանակը:

6.09.2011թ.

ԾԱՐԱՎ

Ծողերը լիզում են թրթիռները
ըմբռնումների: Ցանկապատ է
ժամանակը, որի վրայով
ցատկող
ճանապարհները
անդրադարձնում են չբռնվո՛ղ
ոգին Անհայտի:
Սիրտս սարսռո՛ւմ է
վրձնահարվածներում
տիեզերքի: Մի դուռ
ընդառաջ է գալիս ինձ, որպես
հոգի:
Երկնքի թևերում բարուրվող
առավոտը
խորա՛նն է բառի:
Հասունանու՛մ է
տարածությունը
անդրադարձներում Մտքի:
Հիշողության աչքերը
բողբոջնե՛ր են,
որ բուրում են
Սյունին անհասության:
Տաքու՛կ խաբկանք:
Ինքնամոտեցում՝
անհայտությունից:
Ինչպե՛ս է գույնն իր
կուսությունը թողնում
վազքում ճանապարհի:
Ինչպե՞ս է երազը դառնում

անդունդ: Երակս լցվում է
արթնացումներո՞վ հիշողության:
Իմ և իմ միջև
զոհասեղան է
լույսը: Խոհը
Ճանապարհ է:
Իմ և իմ միջև
վերածնվու՞մ է դրախտը հույսի:
Բառը
հոգին է
Երկնքի:
Պտղաբեր լույս է կրում
թարթիչներին Անհայտի ոգին,
և անապատի ծարա՞վն է ելնում
հորիզոնն ի՞ վեր…

28.08.2011թ.

ՇԵՄԸ ԱՆՀԱՅՏԻ

Խանդի ճեղքերը լցվում են
մոխիրո՞վ
հույսի:
Ո՞վ է ուղեկցում ինձ՝
որ տեղ չե՞մ հասնում:
Իմ ստվերը հայելին է ծառի,
ծառը
հայելին է քամու, իսկ քամին՝
շեմը Անհայտի:
Հայելիների գերեզմանո՞ց է
ճանապարհը: Ես ապրում
եմ սահմանին Առեղծվածի:
Անցնում եմ փողոցից-փողոց,
ինչպես՝ վանդակից-վանդակ:
Խորասուզվում եմ որմերի միջև
ստվերի,
բացում պատուհան…
Ամեն պահ ունի իր
ազատությու՞նը:
Իմ ստվերը հայելին է ծառի,
ծառը
հայելին է քամու, իսկ քամին՝
շեմը Անհայտի:
Ամեն դուռ ունի իր
անհայտությու՞նը:

28.08.2011թ.

ՎԵՐԱԾՆՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԴԱՐՊԱՄՆԵՐԻ ԴԻՄԱՑ

Զգում եմ, որ իմ և քո միջև
վերածնվո՞ւմ է ժամանակը,
իսկ քո ձեռքը բուրում է բողբոջի՞
պես: Ճակատագրի
աչքը խլրտում է ստինքիդ
պտուկում և արյունում
շուրթերիս կարծր ըմբռնումների
վրա: Բաբախո՞ւմ է
լռությունը: Մի բա՞ռ պոկիր
քամու համր շուրթից: Համր
տարածության երակներից
քաղի՞ր վարդերն
Անսահմանի: Մի տերևով
ծածկիր
վայրկյանի հմայքները: Եթե
աղբյուր
բխի հայացքիդ ծիրից, մի
զանգակ
առու կհունավորես անապատի
միջով
իմ հոգու: Ես
ձո՞ւկն եմ ճանապարհի,
որ թփրտում է քայլերիդ
ալիքներում՝
զարկվելով քարաժայռին
Անհայտի: Ես
վիհն եմ լույսի, որ լցվում է

ճառագայթով
Առեղծվածի: Ոգու
համանվա՜գ են հորինում
վարսերդ
և լցնում դողդողջուն
ծոցը…
Միմիա՜յն
դո՛ւ կարող ես քարանձավիս մեջ
վառել
հայացքդ,
ինչպես մո՜մ…
Դու՝…
արմատահան
մի անեզրությո՜ւն…
Ես՝ ստվերի շե մ,
որով մուտք է գործում…
ծերությո՜ւնը…

30.09.2011թ.

ԴՈՒՌ

Ստվերների պարսպին են
զարկվում
երազներիս աղավնիները:
Ասուպներ են կաթում
ժամանակի զոհասեղանից,
ինչպես արցունքներ:
Ես տեսնո՞ւմ եմ
հողի աչքերով…
Եվ շարունակվում եմ
բառերի նորահա՞յտ
ժամանակով: Ես թռչում եմ
ստվերների կափկափող
երախների միջով
և իմ ընթացքով հասունացնո՞ւմ
պատկերն Անհայտի:
Ծովի արշալույսի վրա
գալարվո՞ղ հորիզոն ձկան:

1.09.2011թ.

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՆ

Հայացքս
արմատներ՝ է ձգում
շնչառության մեջ ժամանակի:
Ոգու տարածությամբ
ընդլայնվո՞ւմ է տողը:
Տողը դառնում է հյուրասենյակ,
ուր տանտերը կարծես միշտ
բացակա՞ է…
Ընթերցողը շրջանցում է կրկին
ինքն իրեն,
դառնում ընթերցարա՞ն:
Ուր որ է կբխի՞
ճյուղն Անսահմանի:
Եվ իմ լռությունը կբուրի՞
Անհայտի
բողբոջներով:
Ներշնչանքի անտառն ինձ
դուրս կմղի
սահմաններից
անտարբերության
և ես կկառչեմ
սյունից
Առեղծվածի:
Մի ստվեր անընդհատ
կծածկի պատուհանը,
կծածկի պատուհանը,
կծածկի՞…
Բայց պտղաբեր լույսը
կճեղքի փակուղին՝

Օազիսն Անհայտի…
Եվ հորիզոնը
կմայրանա՞զագաթին Լեռան:
Մի կին
հորովելի սավանով կփաթաթի
մանկանը
և կբարձացնի
լեռներն ի՞ վեր,
որպես
հաղորդության խորան:

4.09.2011թ.

ՀԱՅԱՑՔԻՍ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՐԿԻՆՔՆԵՐ Է ԲԱՑՈՒՄ

Ցանկապատի ստվերը
ազդարարում է ձմեռնամուտի
ահագնանալը:
Ոչ մի խաբկանք փողոցներից
չի կարող ավլել...
Տարածության աչքերը՝
անդորրավետ բներ,
որոնցից կախվել են պատրանքի
հրեշտակները:
Հիշողության արցունքներով
լվանում եմ սալաքարերը
երկնքի:
Խաչքա՞ր է բառը:
Ձմեռը գծում է իր սահմանները
այս աշխարհի
նոր քարտեզի վրա:
Մարմնավորում եմ
պատկերը
երազի
ժամանակի դատարկ
պատուհաններում:
Լեռնագագաթները
վրեժի
կրակարանն՞ր են…
Հայացքիս ժամանակը
երկինքն՞ր է բացում…
Շուտով կթևավորվի՞
զոհասեղանը հիշատակի…

1.09.2011թ.

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՎՈՒՄ Է ՃՅՈՒՂԸ ԱՆՀՈՒՆԻ

Ճյուղը համբուրում է առավոտը
ցողի,
իբրև աղամանդ:
Ո՞ւմ ձեռքն է զարդարում
մատանին Անհայտի:
Ճակատագրի ոստայնում
թփրտո՞ւմ է
ծաղիկը երազի:
Հիշողության անդունդի վրա
եղանակավորվո՞ւմ է
ճյուղը
Անհունի:

8.09.2011թ.

ԵՍ ԱՊՐՈՒՄ ԵՄ ՈՒ ՏԵՍՆՈՒՄ

Տառապանքի պահո՞ւստ է
իմ հայացքը,
սեր իմ:
Այնտեղ լուսանո՞ւմ է ու մթնում
երակը
ցավի:
Ես ապրում եմ
ու տեսնում,
թե ինչպե՞ս են աստղերը
քարշ տալիս
տարածության դին:

8.09.2011թ.

ՃԱՆԱՊԱՐՀՆ՝
ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ՁԵՌՔԵՐՈՒՄ

Անորոշությունն
աներևույթ բե՞ռ է
ուսերին Լեռան:
Անցորդները՝
նշաններ Հեռվի,
որ վերադառնո՞ւմ են
դեպի ակունքը...
Ճանապարհը
բարուր է,
որ օրորվո՞ւմ է
երկնքի
աներևույթ ձեռքերում:

30.11.2011թ.

ԱՅՍՈՒՀԵՏԵՎ

Ես առնչվում եմ սահմաններին
հիշողության:
Ցավը ընդգծվում է առօրյայի
ֆոնին՝
իր առնակա՞ն շերտով:
Բառե՛րն են ընտրում ինձ՝
դարձնելով խորան...
Քայլերս հատում են սահմանը
դատարկության՝
մուտք գործելով տարածքը
անկշռելիությա՞ն:
Մուսաների հանգրվա՞ն է
քարտեզը ցավի:
Հաղթահարո՞ւմ և ծնունդ:
Տառապանքի գագաթների վրա
թո՞ւխս է նստել
Ոգին անհայտության:
Այսուհետև
(թուղթը զոհասեղա՞ն է)
բանաստեղծություններ
եմ գրելու
հայացքո՞ւմ
անցորդների:

11.09.2011թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Օդը ճանապարհ է,
որով հաղորդակցվո՞ւմ են
անդունդն ու լույսը:
Ժամանակի դռները
ծեծում են հասցեներ՞ը…
Բառը՝ պայքարո՞ղ ոգի,
բարձունքի կարմիր ճիչ,
բառի կեղևը՝ փշերին
նետված հագո՛ւստ է…
Պա-տա-ռոտ-վա՞ծ օր:
Լռության որմերից այն կողմ՝
թևե՞րն են բուսնում
անսահմանության:
Հեռուն դառնում է
լա-բի-րին-թո՞ս ցավի:
Բանաստեղծի ժամանակը
հետգրությո՞ւն է.
դռները ծեծում են հասցեներ՛ը…

9.09.2011թ.

***

Սերս թեև հրեշտակ է,
բայց երբեմն զարկվում է
սյուներին մեղքի,
և ապագայի անդունդը լցվում է
հառաչանքներո՞վ...

8.09.2011թ.

ԵՐԿՓԵՂԿՎԱԾ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ

Աշխարհը լցվում է
մենակությա՜ն դռներով:

Հայացքի մոխրացած դաշտեր,
կանաչ թավուտներում
ծվաղրո՜ղ
առավոտ:

Հոգու անկյուններում
վազվզում է լույսը,
որպես մանկության երազ,
որով կայանո՜ւմ են
աշխարհի բոլոր
դռները:

7.09.2011թ.

ՇՈՒՏՈՎ ԿՀԱՍՈՒՆԱՆԱ ԵԶՐԱԳԻԾԸ

Իրականության հայացքի վրա՝
ելքե՞ր Անհայտի:
Երկնքի ստվերից բխո՞ւմ է մի
աղբյուր:
Հույսի ոտնահետքերում
ծվարե՞լ է
հողմը լռության:
Հորիզոնը քա՞ղշ է տալիս իր
հետևից
դիակը հիշողության:
Ուր որ է կհասունանա՞
եզրագիծը
Կարոտի:
Մի ողողանջ իր բույնը կշինի
ոգու մեջ ճանապարհի:
Մենք դեռ չե՞նք հեռացել
իրարից՝
մինչև անտարբերությա՞ն
դուռը…
Ձեռքերիս հիշողության մեջ
կայծկլտացո՞ղ աստղեր…
Աչքերի աղոթք,
որ հատում է փողոցը
լույսի պես:
Իրականության հայացքի վրա՝
ելքե՞ր Անհայտի:
Երկնքի ստվերից բխո՞ւմ է մի
աղբյուր:

7.09.2011թ.

ԽՐԱՄԱՏ

Այստեղ ժամանակը հավատի
շո՜ւնչ է
և կավիճ,
որով գրողը չի՞ հասցնում
կարդալ
վճիռն Արարչի:

7.09.2011թ.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵԶՐ

Լքված տուն է եղանակը
ձմռան:

Պապիս ճակատը՝
արծաթե մի կնիք
ջրերո՜ւմ աղբյուրի:

Ինչքան խմում ես,
այնքան
ծարավո՜ւմ է …
Հեռաստանը:

Ինչքան քայլում ես,
այնքան խորանո՜ւմ է
արմատն Անհայտի:

7.09.2011թ.

ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՑԵՐ

Կարմիր հույս է վարդը,
լուսա՜յգ հայտնության,
որ բխել է ճյուղից
տարածության:
Քո ներկայությամբ
վերափոխվո՞ւմ է
իմաստը կյանքի:
Լուսանո՞ւմ է հողը
երկնակամարով
մանուշակների:
Ո՞վ է ջուր խմում օազիսներից
Անհունի:
Ազատագրվո՜ւմ է երկիրը,
սակայն ո՞ւմ ուսերին է
կուտակվում
փոշին
ստրկության:
Երկնքի թևերից հառնո՜ւմ են
խորանները բառի:
Քո ներշնչանքը
ժամանակի անտես դռներն է
բացում,
հոսում, անցնում է՝
փշրելո՜վ պատմության
զոհասեղանները…
Իրականությունը
մի կետ է,
որին հենվում ես և շրջագծո՜ւմ
տարածությունը

երևակայության:
Քո բանաստեղծությամբ
հուզում ես անգամ
ոգուն հիշողության,
բայց դու կարո՞ղ ես
վերականգնել
դիմագծե՛րը
Անսահմանության:

18.09.2011թ.

ԲԱՌԻ ՀԱՅԱՑՔԸ

Իրականության
անդրադա՞րձն է հայացքը
բառի,
թե դուռը ոգու… Գուցե
թրթի՜ռն է առեղծվածային
մի նոր Գոյության:
Առասպելների շո՜ւնչն է
փոթորկվում
թևերում հողմի. -
Հնչյունների բացատ,
որտեղ թևացող թիթեռները
տողե՜րն են Անհայտի:
Բառի հայացքը
մի թրծարան է,
որտեղ սրբագործվո՜ւմ է
շնչառությունը
Անինքնության:

19.09.2011թ.

ԿՈՂՊԵՔ

Երբ նայում եմ քեզ,
բացվում են թևերը օրվա...
Թեև անունդ ցանկապատ է,
որ անջատո՞ւմ է իմ հուշը
թրթիռներից Ապագայի:
Բառի շնչառությամբ
վերստանո՞ւմ եմ
իմ դեմքը: Բուսնում եմ
հավիտենության
եզրին, բացվո՞ւմ,
ինչպես ծաղիկ:
Հրեշտակի թև՞ է լռությունդ,
սեր իմ:
Ճանապարհիս լույսը
խարխափո՞ւմ է
քո կրծքի պայծառ անդորրում:
Քո հաղորդությունը՝
կողպե՛ք:
Շրջազգեստի մի շրշյո՞ւն -
և իմ աչքերը կախվում են
ճիչերից հիշողության:
Աղջկական մի հայա՞ցք -
և անդունդ է դառնում
շեմը լռության:
Եվ իմ կարոտն ինձ աքցանո՞ւմ է
անխոնջ թևերով
հրեշտակի:

23.11.2011թ.

ԱՌՕՐՅԱՅԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

Փողոց: Անցորդներ: Մայթի
եզրին՝ շերտեր
լռության: Դիպվածի
կտրված ձեռք,
որից բողբոջո՞ւմ է ճյուղն
հիշողության:
Մի հայացքաչափ
հավիտենություն փաթաթվել
է անվարժ ու պաղ դիրքին
մանեկենի:
(Անհաղո՛րդ երազ ու
մենակություն
անբեկանելի՞):
Ծառն իր ստվերի պարկը
լցնում է
ճիչ ու աղմուկո՞վ երեխաների:
Հողը
ծաղկանոց-աչքն է թարթում
քարե պատյանից հրապարակի:
Տերևներն՝ որպես
մնացորդ երազների,
ե՛տ է ստանում
ոգին բնության:
Ներշնչանքի սահմանը
հատում է
ավտոմեքենան
և մտնում մայրուղին Անհայտի:
Կորուսյալ բախտի

խաչմերուկից
սկի՞զբ է առնում
ելքը
Հիշատակի:
Այնուհետև մի եղանա՞կ է
տիրում
ափում ճակատագրի -
սահմանագծերի՞ ձմեռ:

9.11.2011թ.

ԹԵՎԵՐԻԴ ԵՐԿՆՔՈՎ
ԲԱՐՈՒՐԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Հուշերի մի շղթա է քարշ տալիս
ճանապարհը,
թռչունները կտցահարում են
ստվերը երկնքի,
որպես պատառիկ հացի:
Բողբոջները թիրախնե՞րն են
աներևույթ գարնան,
պայթյունը կյանք է պարգևում
և բուրմունքով կարևորո՞ւմ օրը:
Վայրկյանը
զնդան է,
որի վրա շիկացած մի սպասում
են ծեծում
զարկերը սրտիս:
Դու ո՞ր ճանապարհի խոհին ես
փաթաթվել,
որպես հրեշտակ,
թևերիդ երկնքով բարուրի՞ր
ժամանակը
և նվիրի՞ր քեզ ընդառաջող
հույսիս ձեռքերին:

7.11.2011թ.

ԱՆՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Եվ հիշողության անդունդի վրա
ծիածանվո՞ւմ է
տեսիլքը արյան:
Ճակատագրի ոստայնում
բրածոյացա՞ծ աղաղակներ:
Լռության կառափնարանից
ընկնում է գլո՞ւխն հորիզոնի:
Անհայտ է
լույսը բացվող,
եթե նրա մեջ պահվող գերին
հենվում է փշերին
երկվության:
Հասցեները խարխափո՞ւմ են
առանց հիշողության դռների:
Անպատուհան մտքերում
զոհասեղա՞ն է
սլացքը թռչունի:

8.11.2011թ.

ՇՈՒՏՈՎ ԿԲԱՑՎԵՆ ԴԱՐՊԱՍՆԵՐԸ ԱՆԻՆՔՆՈՒԹՅԱՆ

Բառարմատների շնչառությունը
ծավալվում է
հիշողության լայն թևերի վրա,
և ներշնչանքի երկինքը
կաթկթո՜ւմ է
երկրի ռիթմերի սափորի մեջ:
Հողի խորքերից ալիքվող
հավատը հունդի
ոսկեզօծվո՜ւմ է
թռիչքներում մեղվի:
Այս պահին ցանկապատի
ստվերն է հագնում
Ճանապարհը՝ որպես թիկնոց:
Անցորդի ձեռնափայտից ծիլե՜ր
է արձակում
հույսը հորիզոնի
և առնչվում անկյուններին
Գաղտնիքի:
Մի տաքուկ երազ
հանկարծակի բողբոջո՜ւմ է
նստակյաց
ժայռի անառու
ափերում:
Շուտով
կբացվեն դարպասները
Անինքնությա՜ն…
Եվ իրերի վրա
կնստի ծարավն Անհայտության
ևս տա՜սը տարի…

1.10.2011թ.

ԲԱՐԻ՝ ԼՈՒՅՍ, ԱՂՈ՛ԹՔ

Դիպվածի սյուներից
կախված են
օդապարիկնե՞ր Ոգու:
Բանտի դռներից հոսող Աղոթքի
գետերը
կարմիրո՞վ են ներկում
աստիճանները՝
ըմբռնումնե՛րը
հա-սա-ռա-կու-թյան:
Անցորդների միջև՝ մայթեր,
փողոցներ, անդունդներ
հիշողության:
Իրար են զարկվում
բաժակները
Անինքնության.
«Կենա՞ցդ, երկիր»:
Իրար են զարկվում
եղջյուրները
հորիզոնների.
«Կենա՞ցդ, երա՛զ»:
Քաոսի աչքերը բացվո՞ւմ են
թևահարումից թռչունների,
և արյան կաթիլները դառնում են
բներ ստվերների:
Թփրտո՞ւմ է Անհունը:
(Ապագայի՞ ծաղիկ):
Հոգևոր արժեքը անցո՞ղդ է

մոլորյալ: Կծագի՞ արևը
անդունդից Երկվության:
Ցավի երկնակամարում ծնվո՞ւմ
են աստղերը:
Հրեշտակի թևերով
լուսավորվում են
ճանապարհները՝
զոհասեղանն՝ը...
Բարի՝ լույս, Աղոթք…

29.09.2011թ.

ՉՄԵՌ

Եվ սառցակալում են
հառաչանքները հեռացողների
(քարտեզի գծերը զոհասեղաններ են),
որոնց վրայով կսահե՞ն շուտով
մանուկները մեր՝
անլուր ճիչերով կառչելո՞վ
ճյուղերից
Հորիզոնի:

26.09.2011թ.

ԱԲՍՈՒՐԴԻ ԱԿՈՒՆՔԸ

Բանաստեղծությունից
դուրս մնացած տողը
թուխս է նստել բեկորին հույսի…
Գրչի հայացքով
շրջանցում եմ արգելքը
տաղաչափության:
Մտնո՞ւմ եմ հունը
Անհունի:
Արևի շողը հացի փշրանքի պես
հալվո՞ւմ է լեզվիս տակ...
Ակնթարթի խորքում՝
զոհասեղա՞ն լույսի...
Ծնչառության ափերից քաղում
եմ ծաղիկներ.
այդպես կարգավորո՞ւմ եմ
քաոսը Ոգու:
Հիշողության հիմքերը ցնցվում
են մեկեն
քայլվածքից աղջկա:
Բառի հրապարակում՝
Միֆի իշխանությո՞ւն:
Առեղծվածի բիբերից կաթկթո՞ւմ
են օրերը…

28.09.2011թ.

ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիշում եմ: Համբույրներիդ
զիգզագներից
ընկնո՞ւմ էին
կեղևները անորոշության:
Մի բարկ քամի
բերո՞ւմ էր պատառիկները
մենակության
և ծեփում
ապշահար
դեմքին ժամանակի:
Հույսը
ձեռքեր ուներ
և եզրագիծ
հիշողության,
ուներ առանցք ոգու
և հաղորդությու՞ն:
(Միջնորդավորվա՞ծ …
համբույր
և երազ … միջնորդավորվա՞ծ…)

Հիշում եմ:
Պատյանից երջանկության
հորդում էին անանուն գետերը՝
ճյուղավորվելո՞վ
բողբոջումների սպիտակ ծովում:
(Միջնորդավորվա՞ծ …
ճակատագիր
և լույս… միջնորդավորվա՞ծ…):

Հիշում եմ…
Թևերի երկինքներով
փաթաթված
ազդրե՞ր հողմային:
Քարեղեն ճի՞չ:
Գալարանք
Մութի:
Գլխատված արևի
ճառագայթները
չանգռտո՞ւմ էին
ավազաշերտերը
դեղնակարմիր
Տենդի:
(Միջնորդավորվա՞ծ…
իրականություն
և ապագա …
միջնորդավորվա՞ծ):

ՆԱՅԻՐ ՔՈ ԽՈՐՔԸ

Արյան կաթիլներից ընկնո՞ւմ է
անդունդն անտարբերության…
Իսկ պատրանքների լեռները
փլուզվում են
ճանապարհների զարկերակի
վրա:
Քաոսի աչքերն
աղաղակների թևահարումով
մխրճվո՞ւմ են խորքերը
Մահի:
Տեսնե՞լ երազով
և կասեցնե՛լ Կործանումն այն մեծ…
Բացե՛լ երակը
անսահմանության
և ցանել հունդեր,
ցանել ցերեկնե՞ր…
Բարուրե՛լ ոգու, հղացումների
տա՞ք-տա՞ք գիշերներ…
Եվ ստվերների պարիսպների մեջ
բացե՞լ նոր դռներ
ու պատուհաններ…
Հորիզոնն ի վեր
թող ճախրե՞ն թևեր,
թող ճախրե՞ն ճերմակ-ճերմակ
ասուպներ…
Ոգու դռները
ծեծե՞ն հասցեներ …
Արշալույսների տաք ստինքներից
երազնե՞ր ըմպող
ճակատագրեր…

Փրկություն մի՛ հայցիր
դռներից…
Ճանապարհներից
մի՛ հայցիր
երազ…
Նայիր քո խո՛րքը…
Արյան կաթիլից ընկնո՞ւմ է
անդունդն անտարբերության…
Հաղորդությո՞ւնն է ճախրում
երկնքում,
որպես աղավնի,
որպես հավատի ու սիրո նշան՝
զույգերն են իրենց կնի՞քը դնում,
կնիք համբույրի,
որից ելնո՞ւմ են հրեշտակային
թևահարումներ…
Եզերք և օջա՞խ,
հավատամք և լո՞ւյս…

27.09.2011թ.

ՕՐԸ ԾԱՎԱԼՎՈՒՄ Է

Օրը ծավալվում է ողողանջո՞վ
հույսի:
Եվ քայքայվո՞ւմ է ծառի
կատարին
միտքն Ունայնության:
Ես շոշափո՞ւմ եմ
դեմքս.
ցավի քարտե՞զ է,
հավատի երի զ:
Եվ քարի վրա ապաշխարության
ընկնո՞ւմ են սրերը
տվայտանքների:

28.09.2011թ.

ՀԵՏՔԵՐԻ ԱՎԵՐՎՈՂ ԴԵՄՔԸ

Օ՜, կարմիր տեռոր:
Ստվերների հալածանք:
Ժամանակի սմբակ:
Խեղդվող լուսաբացի ճերմակ
տերևաթա՜փ:
Աղոթող քարաժայռի
շնչառության մեջ
վառվո՜ղ մի մոմ:
Բարձունքների
զոհասեղանից կախվո՜ւմ է
հառաչանքը
ծիածանի:
Հետքերի ավերվող դե՛մքը:
Վերքի հիշողությամբ
ամրապնդվո՞ւմ է
կեղևը բառի:
Բառարանում նիրհող
սահմանագծերի՜ գիշեր,
ուր մահը սեպ չէ,
այլ՝ տիեզերական ակո՜ւնք:
Աստղերի խաչմերուկ չէ
իմ հայացքը,
այլ՝ զոհասեղան:
Իմ և Աստծո միջև մեկուսարան
է տողը,
ճի՜չը Անհունի:

Հետքերի ավերող դե՛մքը:
Լույս.
արմատի փոթորի՞կ է
կորիզներում ցավի,
ձյունի
պատարա՞գ:
Հետքերի ավերվող դե՛մքը:

19.11.2011թ.

54 ՏՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ժամանակի հայացքը բացվում է
սրի շեղբին,
ինչպես… զոհարա՞ն…
Ծառի կատարին քայքայվում է
Աստղի հեռուն:
Տառապանքը կայծքա՞ր է:
Աչքերս նետվում են
պատշգամբից,
ինչպես կատվի ձագեր:
Քարքարոտ ճանապարհը
ուտում է մոխիրն
Արցախի:
Ոգու խավարը զարկվում է
վանդակներին Լույսի:
Տառապանքի պահու՞ստ է
գետը,
որի մեջ խայտու՞մ են ձկներն
անհայտության:
Վերքերի բռունցք:
Ցավի կափարիչ:
Հորիզոնի ակ:
Օրն իր թևերով ծածկում է
գագաթը
Հեռվի,
ուր թու՞խս է նստել
անհայտությունը:
Վիրավոր Անհունն ընկնում է
կրակոցների
ստվերի վրա:

Սփոփել բառերով՝
նշանակում է անցնել անդունդի
վրայով
և մակագրությո՞ւն թողնել
հրեշտակների թևերի վրա…
Հողը երազողի աչքն է փակում,
որպես հունդ վաղվա՞:
Լռության վիհերը ցնցում են
ինձ:
Հիշողության լապտերների միջև
տեղավորվում է
Գալիքը:
Ոչ-ոք…չի՞ մոռացվել…
Մանկության հայացքից
ընկնում են ճանապարհները,
ինչպես…ձկնե՞րը շրջվող
ակվարիումից…
Ճանապարհը կայծքա՞ր է…
Ցավը լաբիրինթո՞ս է…
Հիշողությունն օազի՞ս է…
Մորթվող այգաբացի բացվող
ափերից
թափվո՞ւմ են
թևերը
հրեշտակների…

12.12.2011թ.

ՔԱՌՍԻ ԳԱԶԱՆԸ

Պատմության պատա՜նդն է
Թուրքիայի հետ ստորագրած
պայմանագիրը,
պատմության վանդա՜կը,
ուր բնակվում է
գազանը Քառսի:
Ժամանակի կեղևը ճեղքում եմ
և տեղադրում հիշողությա՜ն
կանթեղներ:
Քաղաքական դիմակահանդես...
Իսկ հայի համար
աշխարհը մի լաբիրինթո՜ս է,
ցավի պտտահո՜ղմ:
Քաղաքակրթության օազի՜ս է
Հայաստանը:
Թուրքիան քարտեզի վրա՝
եռացո՜ղ
հրաբուխ:
Սահմանային
կետեր,
ուր մարդկային հայացքն է
թիրա՛խ,
թիրա՛խ
թիրա՛խ:
Ճանապարհը՝
աքցա՛ն,
որ կտրտում է խորհրդանի՜շը
բարեկամության,
նետում աղբանոցը դարի:

Ճանապարհը՝
դինոզավրի
կտրված պո՞չ…
«Բարև», «եղբայր», «ու՞ր կերթաս»,
«բարիաջողում», «տե՞ր ես»…
բառերը՝ կյանքի հավելվածներ
կամ խաչքարերի սուր-սուր
բեկորներ,
որոնց վրա վե՞ր են խոյացել
մի քանի
շրջված
վիհե՞ր…
Անխաչ եկեղեցիները
վերափոխելո՞վ,
դարձնել… մզկիթնե՞ր…
Պատմության պատա՞նդն է
Թուրքիայի հետ ստորագրած
պայմանագիրը,
պատմության վանդա՞կը,
ուր բնակվում է գազանը Քաոսի:

20.12.2011թ.

ԲԵՎԵՌՆԵՐԸ ՀՈՒՅՍԻ

Երեխաները
տարածության թևերին բուսած
ծաղիկնե՞ր են…
Երազների թռիչքով
երփներանգվո՞ւմ է օրը: Ոգու
ճիչե՞ր է բերում լույսը
ճանապարհի:
Ներկան ապագայի
կողմնացույցն է,
որով կողմնորոշվո՞ւմ է
անցյալը…
Ծառը ձմռան խորանում
տարածում է
մենախոսությունը ձյան:
Դատարկ բներում ծլվլո՞ւմ են
փաթիլները.
ցաք ու ցրիվ երազանքները
հանգրվանում են
թևերին հրեշտակների:
Իմ աչքերում
դադարո՞ւմ է լույսը
ճանապարհի.
թափո՞ւր մի բույն,
որ քամու բերանն ընկած՝
քշվո՞ւմ է
մենախոսության միջով
փաթիլների…
Ծառի հայացքով միավորվո՞ւմ
են բևեռները
հույսի:

24.12.2011թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐ

Ոգու տոն է և երակի ճախրա՜նք,
Զինանշա՜ն է, դրոշ հայկական,
Ինքնահաստատման զորեղ ճառագա՜յթ,
Որ տանում է մեզ դեպի ապագան:

Ժողովուրդն՝ ինքն է կերտում ապագան,
Սահմանում կարգ ու հավասարություն,
Ժողովուրդն՝ ինքն է եկա՜ծ ապագան,
Որ տանում է մեզ դեպի ինքնություն:

Ինքնության դուռ է քո ամեն էջը,
Երկի՜ր իմ Արցախ, հայրենյաց պատգամ,
Ոգու և արյան նոր ելևէջդ
Հզո՜ր է երգով և ազատությամբ:

Հզո՜ր է երգով և ազատությամբ
Քո ամեն օրը, երկի՜ր իմ Արցախ,
Քո ամեն հույսը՝ նա՜վ երջանկության,
Անունդ սե՜ր է և հարության ժա՜մ...

Երկի՜ր իմ Արցախ, հավա՛տ անսասան,
Որ օրհնվա՜ծ է Աստծո բարձունքից,
Որ օրհնված է սահմանադրությամբ,
Հզո՜ր ես երգով և ազատությամբ:

7.12.2011թ.

ԱՆՁՐԵՎԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Եվ ծաղիկներով անձրևի
բուրում է դեմքը աշնան:
Ճանապարհի երակներից
ժայթքում են տերևները
խնդության:
Ճակատագրի կափարիչն է
հրում հրեղեն մի ծիլ՝
բացահայտելո՞վ ելքը
պատմության:
Փակուղին՝
ինքն իրենից դո՞ւրս էր…
Վերահաս օրը կույր է,
եթե չունի դո՞ւռ
խորքում Ապագայի:
Բանտարկյալի հույսը
երկարո՞ւմ է
օրորոցվող ստվերներով
խնձորենու:
Թափուր
բները ծրարնե՞ր են,
որոնք լի են ապսպարանքո՞վ
Աստծո:
Ճանապարհը
լար է
ջութակի,
որ այս պահին նվագվո՞ւմ է
ծաղիկներով անձրևի:

1.01.2012թ.

ՄԻ ԲԱՌ ԵՄ ԳՐՈՒՄ
ԳԱԼԻՔԻ ԷՋՈՒՄ

Այս ստորակետը ընդերքի լո՞ւյսն է,
Որ նշմարվում է… «աշխարհի վերջում»,
Եվ շրջանցելով չափերը լուսնի,
Մի բա՞ռ եմ գրում Գալիքի էջում:

Զոհասեղա՞ն է բառը, ի վերջո՛,
Եվ բռնկվողը աստղային հո՞ւշն է,
Կյանքն է զորանում նոր ելևէջո՞վ,
Կենարար հոսքը արվեստի ո՛ւժն է:

Մի բառ եմ գրում Գալիքի էջում:
Վիճահարո՞ւյց են ելքերը Հույսի:
Վե՞րջն է խորանում աշխարհի վեճում…

Զոհասեղա՞ն է նժարն, ի վերջո՛…
Փրկիչի ձեռքը… Մասիսի լո՞ւյսն է,
Որ նշմարվում է… թունելի վերջո՞ւմ…

5.01.2012թ.

ՀԱՄԱՆՎԱԳ

Ներդաշնակության դիմակն
ընկնում է
քաոսի կարմիր շրջապտույտի
մեջ:

Ականջների պահո՜ւստ:

Տարածության
ներշնչանքներում ճողփում են

առագաստները հիշողության:

Ոտքերի անդունդ:

Քաոսի շուրթերը միացնող
վայրկյանները

համանվա՜գ են:

Աչքերի հրաձգարան:

Ձեռքերի հայացք,

որ օրորվում է ափերում

ճակատագրի,

որպես օրորո՜ց:

Շուրթերի պատարա՜գ:

Ներդաշնակության դիմակն
ընկնում է
քաոսի կարմիր շրջապտույտի
մեջ:

3.01.2012թ.

ՓԱՐԻԶՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Աչքերս, որպես տեսողության
կափարիչներ,
գլորում եմ փողոցներում
Փարիզի,
փռում
անհասության երկաթգծերի վրա
ազատության գո՜րգը
Արցախյան
քարտեզի:

Երազիս վրձինով փշրում եմ
դիմագիծն աշխարհի,
բեկորներով հյուսո՜ւմ
կերպարանքը
Ոգու:

Խոժոռ շենքերի երկինքների
վրա
գրում եմ մի… ճանապա՜րհ,
գրում եմ մի… ճառագա՜յթ,
գրում եմ մի… ճեպազրո՜ւյց:
Առասպելից պոկված
ոտնահետքե՜ր ունեմ
և ունեմ հայա՜ցք,
որի վրա իր մակագրությո՜ւնն է
թողնում
հրեշտակը:

Տեսողության զոհասեղանից
կախվել են
մոմերը աղոթքի
և լուսավորո՞ւմ են
տողերը
Անհայտի:

Թռչունները
ջրից կտցո՞ւմ են
ձկները
երկնքի:

Աչքերս, որպես տեսողության
կափարիչներ,
գլորում եմ փողոցներում
Փարիզի,
փռում
անհասության երկաթգծերի վրա
ազատության գո՞ղը
Արցախյան
քարտեզի:

2.01.2012թ.

ԶԻԳԶԱԳՆԵՐԻ ՃՄԵՌ

Արյան բիբ է և ճանապարհ ոգու:

Անդունդը
ծնկաչոք հայացքն է Անհայտի:

Քարե վանդակ և պատնեշ
սովորության:

Շրջանակից դուրս
գալարվում է կայծակը
հիշողության:

Մենակության խարույկ, դուռ
ճառագայթի:

Քաոսի ստվերը դանակի պես
խոցում է
սի՛րտը խաղաղության:
Զիգզագների ճմեռ՝
թափուր բներո՞ւմ
ծիծեռնակների:

3.01.2012թ.

ՍԵՐԸ

Նա շրջանցել է աշխարհի
բոլոր բառերը
և միացել ոգուն Ազատության.
- Սե՞րն է…
Քո հայացքը
տերև չէ,
որ քամու թևերին
աշնանային
պատճե՞ն է
թողնում…
Քո հայացքը
կրքերի
ապաստարա՞ն է…
Կարոտի
զսպանա՞կ է
մարմինդ:
Աչքերիդ մեջ թևավորվո՞ւմ են
վայրկյանները:
Շուրթերիդ հիշողության
ակունքներում
ծնո՞ւնդ են առնում
առասպելները:
Դու սիրո ապագան ես
շնչավորում
քայլերիդ
ալպիական նվագո՞վ:
Երակներդ համբույրների
ճանապա՞րհն են
կծկում

տարերքով կարմիր…
Աչքերիդ ծիածանով սնվո՞ւմ է
անեզրությունը
լեռան:
Սե՞ր իմ,
բերանդ՝ հայտնության ճերմակ
բաբախյո՞ւն …
Բառերդ
սպասումների կամուրջներ են,
որոնցով անցնում է
լռությունս
և… այլևս ետ չի՞
վերադառնում…
Սե՞ր իմ,
հիացմունքս
քո պատանդը չէ՛
ամենևին,
ո՛չ էլ ինքնակամ
գերին…
Նա շրջանցել է աշխարհի
բոլոր բառերը
և միացել ոգուն Ազատության.
- Սե՞րն է…

7.01.2012թ.

ԿՅԱՆՔԸ՝ ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՍ

Ահա շրջանակը-
տեսողության կյա՜նքը,
ուր ծրարվել է ցավը դարերի.
մոմերի արցունքնե՜րն են կպել
արծաթե դողին ապակու,
և ժամանակը դարձել է անլո՜ւր
անդրադարձ,
ինչպես… ավերակված
մեղվափեթակո՜ւմ:
Ահա շրջանա՛կը…
Կյանքը՝ շրջանակից դո՜ւրս…

Ահա շրջանակը-
հիշողության կյա՜նքը,
ուր մոխրացել է կայծակների
խուրձը.
սպիտակ արահետն է դա
իմաստնության,
որ ձգվում է դեռ
սև վարսերն ի՜ վեր
հորիզոնների:
Ահա շրջանա՛կը…
Կյանքը՝ շրջանակից դո՜ւրս…

Ահա շրջանակը -
երազանքի կյա՜նքը,
անարատ մի փողոց
անդրհիշողության հատակում,
ուր շրջում են մոմերը

և մեռյալների բոցկլտացող
հայացքով
լուսավորո՞ւմ
անկյունները հեքիաթի:
Ահա շրջանա՛կը…
Կյանքը՝ շրջանակից դո՞ւրս…

Ահա շրջանակը-
ճշմարտության կյա՞նքը.
անդունդի եզրին բուսած
հրատերև
ծաղիկ…
Անհայտի զիգզագների վրա
հյուսվող գաղափարի՞
բույն…
Ահա շրջանա՛կը…
Կյանքը՝ շրջանակից դո՞ւրս…

Երկրագունդը
գլորվող
մի շրջանակ է…
Կյանքը՝ շրջանակից դո՞ւրս…

7.01.2012թ.

ՀԱՍՑԵՆԵՐԸ ՑԱՎԻ

Երկինքը ցավի ծրարներից
ջնջո՞ւմ է հասցեները:
Տանիքի
կնճիռներն է լվանում անձրևը:
Զոհասեղան է ճակատն
Անհայտության,
ուր ամպերի ճերմակ փետուրով
գրառումնե՞ր է անում
Դիպվածը:
Քամին շրջանցում է
ապսպարանքն Աստծո
և մխրճվում կիրճերն Անսահմանի:
Հիշողության ծաղկամանից
պոկում եմ մի վա՞րդ:
Ընդլայնվում է տարածությունը
բուրմունքների մի նոր ճյուղո՞վ...
Մի անունով
խորանվո՞ւմ է առավոտը սիրո:
Ծա՛ռ,
թո՞ղ պատվաստեմ ես քո
ճյուղերին
ստվերն իմ մոլորյալի,
որ ծաղկունքի պահին,
մեղուների դեղին թռիչքով
ջնջվե՞ն իմ մաշկից
հասցեները ցավի:

11.01.2012թ.

ԱՌԱՆՑՔՈՒՄ ՔԱՌՍԻ

Օ՜, հայացքի վիհ…
Օ՜, մտքի զոհարան…
Վառվող մոմերից կաթկթում են
ասուպնե՜րը...
Վերևն
ու
Ներքևը
նժարնե՜ր են …
Աչքերս
աննամակ ծրարնե՜ր են…
Դեմքս՝
բանաստեղծությունից դո՛ւրս
մղված
մի բառ,
Կացարա՛ն Պահի:
Ոտքերս
հանգույցնե՞ր են
բախտի,
թե… տարածության
նոր
սկիզբ…
Ցայնիս ժամանակը
ծաղի՜կ է աճեցնում
առանցքում Քառսի:
Առասպելի լույսը
հասնո՜ղ միրգ է…

15.01.2012թ.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՍՊՈՒՆԳԸ

Սովորիր լսել՝ համանվագը
հուշի ստվերների՝
որսալով ռիթմը Անհայտի:
Մի կետ
բեկում է ընթացքը
ճակատագրի:
Վերցրո՛ւ
կափարիչը Տենդի
և ուղեկցիր այգիներում
հորձանք տվող
ջրերին
Ոգու:
Այսուհետ խրվիլակը չե՞ս
պատմության
առանցքի:
Այսուհետ
ընդլայնո՞ւմն ես քարտեզի տաք
Հույսի:
Բարձունքների ցա՞վն ես
հաղթահարում
շնչառությամբ խոտի:
Հայի հիշողության սպո՞ւնգն է
քարտեզը,
որ շարունակում է ներծծել
կաթիլները
արյան
(1915),
ամբարել կայծակները վրեժի
(1988)…

Սովորիր լսել ձա՜յնը
Ապագայի…
Հայի աչքերը
անընդհատ
լցվո՛ղ ու պարպվո՜ղ
պարկուճներ են…
լցվո՜ղ ու պարպվո՜ղ
պարկուճներ են…
Կրակո՜ւմ են անգամ
հանգույցները լռության…

15.01.2012թ.

ԵՐԿՈՒ ԾԱՅՐԵՐԸ
ԱՅՍ ՄԵԾ ԼՌՈՒԹՅԱՆ

Գնացի հետքերով բառերի
և հասա ակունքին լռության
Գնացի հետագծով լռության
և տեսա շեմը... անդրաշխարհի
Գնացի ստեղներով անդրաշխարհի
և իմ ձեռքերով միացրեցի
երկու ծայրերը
այս մեծ Լռության

4.06.2012թ.

ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է ՕՐԸ՝
ԱԶԱՏՎԵԼՈՎ ԲԱՌԵՐԻՑ ՓՈՂԿԱՊԱՎՈՐ

Ռոպեների պատուհաններից
կախվել է
շարասյունը մրջյունների,
ծաղկի ցողունով
բարձրանում և իջնում է
սպիտակ մի հաղորդություն:
Հիշողության կարմիր
սանդուղքով
բարձրանում է օրը,
ազատվելո՞վ բառերից
փողկապավոր,
գնալով դեպի զոհասեղանը
լռության, ուր վերածնվո՞ւմ է
պահը՝
որպես ազատության շե՛մ:
Բարձրանում է օրը,
ազատվելո՞վ բառերից
փողկապավոր…
Հիշողության ափե՞ր են
վերածնվող պահերը,
հիշողության դռնե՞ր են
վերածնվող բառերը,
հիշողության ելքե՞ր են
վերածնվող աստղերը...

Բառի ազատությամբ
վերածնվո՞ւմ է Հայրենիքը:
Բառի հիշողությամբ
կողմնորոշվո՞ւմ է լաբիրինթոսն
Հոգու:
Բառի նկարագրով
կյանքն ունենո՞ւմ է Ժամանակ
և Տարածություն:

16.01.2012թ.

ԵԼՔ

Կնճիռների լույսը
հոսում է
ճանապարհի ճակատն ի վար
և կաթկթում, որպես քրտինքի՞
կաթիլներ,
հողի բաժակներում
փրփրո՞ւմ է
գինին աստղերի:
Սահանքներում արյան
թռիչքների պատրա՞նքն է
ուրվագծում
հորիզոնի տաք ձուն:
Ապագայի բարուրն
արձակում է ձայնե՞ր
արթնացման:
Ցավն՝ ինքն իրենից դո՞ւրս է …
Երազն՝ ինքն իրենից դո՞ւրս է…
Հույսն՝ ինքն իրենից դո՞ւրս է…
Ժամանակի պատերը չե՛ն
տողերը բանաստեղծի,
այլ՝ կողմնացո՞ւյցը
լաբիրինթոսի:
Կարոտի լույսերից ընկնում է
հասցեն
ներշնչանքի:

15.01.2012թ.

ՈԳԻՆ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Ներշնչանքների
կափարի՞չն է բացվել:
Եվ հիշողության քարտեզից
ընկնո՞ւմ են սահմանները:
Եվ ինքն իրենից բարձրանո՞ւմ է
ոգին Հարության:

Ճակատագրի կորիզ:
Որոնումների ասուպ:
Ճանապարհի արցունք:

Ժամանակի փոսերն
այլևս չե՞ն լցվելու
արցունքով մանկան:

Այլևս չի՞ դառնալու
ճանապարհը զսպաշապիկ…
Եթե օրենքը հավելվա՞ծն է
կյանքի…
Եթե երազը հավելվա՞ծն է
կյանքի…
Եթե սերն՝ ինքը հավելվա՞ծն է
կյանքի՛…

Միայն մահն՝ ի՞նքն է…
հավելվածը… Կյանքի:

Արյան թռիչքաշեմ:
Շտեմարան ազատության:
Անհայտության հասցե՛:

Ներշնչանքների
կափարի՞չն է բացվել:

Եվ հիշողության քարտեզից
ընկնո՞ւմ են սահմանները:

17.01.2012թ.

ՆԿԱՐԱԳԻՐ

Ինքն իրեն շրջանցում է
ճանապարհը: Ժամանակը
աճո՜ւմ է ճեղքերից
հիշողության:
Կտա՜վ է
հորիզոնը, որի վրա շարժվող վրձինը
թևերն է արծվի:
Գույների համանվա՜գ:
Ճանապարհի սերմ է
իմ դեմքը,
որ ես ցանո՜ւմ եմ ակոսներում
ժամանակի:
Աներևույթ հո՜ղ է
ճերմակը թղթի…
Ձայնի ավազա՜ն:
Ինքն իրեն գերազանցո՜ւմ է
Ճանապարհը:

21.01.2012թ.

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Դեմքս ընկնում է հորիզոնների
կառափնարանից,
որպես վարագո՞ւյրը
ժամանակի:

Վայրկյանների քարե
հայացքում
խորանվո՞ւմ է
կաթիլը արյան,
ուր վառվող մոմը
իմ գրի՞չն է…

Իմ ճակատագի՛րը,
իմ հավա՛տը,
իմ ձա՛յնը…

Ես գրում եմ տարածության
սպիտակ էջերի՛ վրա:
Ես գրում եմ հայացքի՛ վրա
վայրկյանների:
Ես գրում եմ քարերի
ապսպարանքների՛ վրա:

Թռչունների թռիչքով
ազատագրո՞ւմ եմ լռությունը
Պահի,
դարձնում
ապաստարա՛ն:

Ներշնչանքի ժամանակ
կայանո՞ւմ է բառի
տարածությունը:
Ներշնչանքի ժամանակ
կայանո՞ւմ է Անհայտի
տարածությունը:
Ներշնչանքի ժամանակ
կայանո՞ւմ է լռության
տարածությունը:

Դեմքս ընկնում է հորիզոնների
կառափնարանից,
որպես վարագո՞ւյրը
ժամանակի:

18.01.2012թ.

ԲԱՌԸ

Բառը եզե՜րքն է ասուպների,
բառը՝ հոգևոր ապաստարան,
հավատի լույս է այցը վերին,
որ մղում է ինձ դեպ զոհարան,
լռության անհա՜շտ մի թանգարան,
որտեղ երազը, ինչպես լապտեր,
լուսավորում է ոգին քարի…
Բառը՝ հոգևոր ապաստարան
և անմեռ ոգին բարձունքների՜…

Բերում է ներկան թասով հողի
և ապագան է դարձնում գինի,-
հրեշտակնե՜րն են թևում լռին
երկինքներում ու հևքում նրա…
Երբեմն մտնում բերդը հնի,
զորեղանո՜ւմ է, դառնում աշխարհ,
երբեմն մթնում… լուսանո՜ւմ է,
նորի շեմն հատում, նորանո՜ւմ է,
ստեղծո՜ւմ է եզերք ու ժամանակ…

Խենթության առանցք, գագաթ ելքի,
տարածության շեմ, հավատի դո՛ւռ,
կամուրջ փրկության, տավիղ երգի,
հիշողության սերմ ու հաղթո՜ղ սուր…
Հավատի լույս է ա՜յցը վերին,
որ մղում է ինձ դեպ զոհարան,
բառը՝ հոգևոր ապաստարան
և անմեռ ոգին բարձունքների՜…

18.01.2012թ.

ԼՈՒՍԱՏՈՒ ՄԱՏՆԵՐԸ ՃԱԿԱՏԱԳՐԻ

Առնչության շրջանակ է
հայացքը նկարչի...
Գույնի դագաղն ընկնում է
կտավից Անհունի,
ջարդոտվում է հարվածներից
վրձնի,
սերմի՞ պես խառնվում
շերտին ժամանակի:
Ոգին ծիծաղում է անկյունից
Անհայտի:
Արթնանում են հավատի
խորանները
դողանջից երկնքի
և հորիզոնի զոհասեղանից
պոկում ծաղիկնե՞ր…
Վառվող մոմերը լուսատու
մատնե՞րն են
Ճակատագրի:
Ժամանակն է
(քանի ճամփան մութ չէ)
Նո՞ր շրջադարձի…
Առնչության շրջանա՞կ է
հորիզոնի քայլը…

18.01.2012թ.

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Իմ ճանապարհը՝ հաղորդության շեմ,
ուր կայծկլտում է բիբն հորիզոնի,
ճանաչման քանի՞ օղակ եմ մաշել,
որպեսզի հասնեմ ընդերքիս գոնե՛,
քանի՞ կարոտ եմ պատրանքազերծել,
վառել ճրագը գարունքվո՞ղ հոնի,
անսահմանության սահմանն եմ անցել,
ձուլվել տարերքին բախտ-երգեհոնի:
Տողե՞ր եմ գրել ճյուղերով հոնի,
անհասցե տողեր՝ որ լեռն է հուշել,
բառ ընթերցողը ցավի կոկո՞ն էր,
պարզունակ խոսքի բերդն էր պաշարել
ամբոխը, այնինչ Երթի ոգին է
բացել ասպարեզ… Տողե՞ր եմ շարել՝
բախտի լուսանցքնե՞ր ճակատին հոնի…
Իմ ճանապարհը՝ հաղորդության շեմ,
ուր կայծկլտո՞ւմ է բիբն հորիզոնի:

19.01.2012թ.

ԴԺՈԽՔԻ ՕՐԸ

Ցավի բիբերից ճառագո՞ւմ էր
դժոխքի օրը: Սումգայիթը
ներսուզվում է մինչև հատակը
ոխի: Վայրկյանի դեմքին
հարվածում է վայրի սմբակը...
Խղճի զնդան: Օրերի դեմքը-
մի զոհասեղա՞ն:

Հիշողության փետուրներով
սրբում է քամին
սահանքը արյան,
զոհերի ճիչերն ու աղաղակները
մաքրելով իսպա՞ռ…
Քաղաքի դեմքը ողո՞րկ է,
փայլո՛ւն,
ինչպես…հետո՞ւյք...

Փողոցներից հավաքո՞ւմ է
հրեշտակը
հետքերը Ոգու…

Ցավի բիբերից ճառագո՞ւմ է
Դժոխքի օրը:

20.01.2012թ.

ԹԱՏՐՈՆ

ԼՂՀ ժողովրդական արտիստ
Լեոնիդ Հարությունյանին

Բեմը՝
հիշողության ավազան,
որից ելնող դեմքերը
գործողության բանալի՞ն են
գտնում
իդեալի սեղմ գրպանում:
Ոգու քառսից հանում ես դերեր
և դնում իրականության
առանցքում,
որպես կողմնացո՞ւյց... Սիրո:
Թևող հրեշտակը նոր արա՞ր է
հուշում,
և դու պտտում ես սկավառակը
Ոգու՝
առնչվելով Անհայտի ձեռքի
պտտահողմին:
Դու չե՞ս բեմադրում
հիշողության վարք,
դիմակների կախարան,
զիգզագների ձմե՞ռ...
Պարսպավոր հույսի ճառագայթն ես ձգում
խղճի զնգզնգացող սապատների միջով...
Եվ լողում է աստղը աստանդական Ոգու...
Օ, գագա՞թն է Շուշին թևող հորիզոնի...

30.03.2012թ.

ԵԶՐ

Անսահմանության ծառ:
Հակասության եզր:

Հիշողության
երկինքի աջակցությամբ
քայլե՞լ է սովորում
քարաժայռը:

Անսահմանի սերմ է
կաթիլը արյան,
որից հառնո՞ւմ է ոգին
ճանապարհի:
Իրականության
զսպանակը
հայացքն է
Երկնքի:
Բառի համբույրով
սնվո՞ղ հիշողություն:
Անսահմանության ծառ:
Հակասության եզր:

21.01.2012թ.

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ

Ինքնաորոնման մակերեսի վրա
տարուբերվում են
նժարներ երկու՝
Ներսը և Դուրսը:
Անեզրության շեմը
բա՛ռն է փրկարար,
որ մուտք է գործում
ասպարեզը Լույսի՝
հավասարակշռելո՞ւ
բևեռները Ոգու:
Ներսը և Դուրսը:

26.02.2012թ.

ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Դիպվածի ձեռքերում
հղկվո՞ւմ էր օրը,
որպես դիմաքանդակ,
և դրվում ճանապարհի
պատվանդանին: Մի ձեռք
հատե՞լ էր պորտալարը
մանկան. «Ծնվել է…
1958թ. դեկտեմբերի 26-ին»:
Ծաղկե՞լ է
հավատի խնձորենին՝ ճերմակ
ու կարմիր
աստղաբույլերով…
Եվ ձյուն էր
ուտում ճանապարհի ոգին
ու ամրապնդում
արմատը հույսի…
Ինձ փաթաթե՞լ են
թևերով լռության
և դրել ժամանակի տաք
օրորոցում…
Զոհասեղան
չէ՛ր վայրկյանը,
այլ ճակատը ներշնչանքի,
ուր տողե՞ր է գրել հրեշտակը…
Դիպվածի ձեռքերում
հղկվո՞ւմ էր օրը...
Եվ ճանապարհի
պատվանդանից ընկնո՞ւմ էր…
հորիզոնը:

21.01.2012թ.

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Քո ճանապարհը՝ լույսի զարկերակ,
դու՝ ավյուն Ոգու, հավատի կրակ:
Խաչքարի ձա՜յնն էր քեզ առաջնորդում,
պատմության շունչը՝ հոգիդ փոթորկո՜ւմ...
Հետո՝ Պայքարի կարմրածուփ օրեր.
հնչեցին երգեր, որ այնքան խո՜րն են...
Քո ցավից հիմա բխո՜ւմ է երազ,
ելքդ դառնում է հույսերի երա՜մ:
Խղճի դարպաս էր վարքդ հերոսի,
թեկուզ և ծա՜նր էր... խաչը Հիսուսի:

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԵՂԱՆԱԿ

Հոգուս թրթիռների վրա՝
շրջապտո՜ւյտ լռության: Ո՞վ է ձայնում ինձ
խորքից անցյալի: Վառում եմ շեղջը
կրքերի. վերահաս խարույկը՝
Հարության թռչու՜ն:
Իմ անդրադարձը ցանկապատի վրա՝
իրավ այն բանտը չէ՞,
ուր ինձ փակել էին…
զառանցանքի նժար-
ինքնադատի՜ց հետո…
Մեղքն իր շրջագծից դու՜րս էր…
Ցավն իր շրջագծից դուր՜ս էր…
Հույսն իր շրջագծից դու՜րս էր…
Անհայացք պահերը քայքայվո՜ւմ են
Մեծ առօրյայի անիվների տակ:
Չգրված
տողերս ճյուղե՜րն են երկնքի,
որոնցից կախվել ու ճոճվում են
ասուպնե՜րը հիշողության:
Ես գնում եմ դեպի ակունքը Երազի:
Ստվերների
ծո՛վն իր ափերն է տեղաշարժում
լեռնագագաթների տարածքն ի վար…
Հորիզոնի ճահճում
կո՜ւլ էր գնում
Արևը…
Ոգու մեկուսարան է
այս ճանապա՛րհը,
որով անխոնջորեն քայլում է մի ճամփո՜րդ.
տառապանքի եղանակ…
շրջապտու՜յտ հավատի…

30.12.2011թ.

ՍԵՐԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՍՊԱՌՈՒՄ

Մենակության ափին ընկած մի բանալի-
ստվերը մենակության:
Գրչիս ծայրին
բացվող վարագույրը
ճակատագրիս փե՞ղկն է:
Նստարանն ընդգծում է եզրը դատարկության,
ուր անհանգիստ քամին պայթեցնում է
սարսուռները համբույրների:
Սերը երբեք չի՞ սպառում
խորհուրդը Աստղի:
Ճամփորդն
իմ ոտնահետքերից քաղու՞մ է հայացքը
ճանապարհի,
որպես ծաղի՞կ:

18.12.2011թ.

ՇՈՒՐԹԵՐԻ ՄԵՋ ՍԵՂՄԱԾ ԾԱՂԻԿԸ ՀԵՌՎԻ

Փոքորիկների ճերմակ ճյուղերին
օրորվում են բողբոջները երկնքի,
որոնք պայթում են անսպասելիորեն՝
քսվելով սահանքին ձկների:
Խորխորատների երակներում
հոսում է լույսը՝
անեզրության պտուղներ սփռելով
ջրախոտերի
երկնակամարում:
Ես մղվում եմ դեպի թագավորությունը ջրերի՝
Ճյուղավորելո՞վ հունը կարոտներիս:
Եվ ալիքների պատվանդաններին
քանդակնե ՝ր եմ դնում՝
ոգու,
երազի,
տարերքի տեսքով:
Ջուրն իմ մարմնի երա՞զն է հղկում
հորիզոնների լուսե ափերով:
Եվ ջերմությունից ասուպն է բացվում,
շուրթերի մեջ սեղմած
ծաղի՞կը Հեռվի:

11.01.2012թ.

ՇՐՋԱՆԱԿ

Հույսի պահուստներից վտարվե՞լ է ոգին:
Ապագայի կեռերից կախված
պատառիկները
պարպվա՞ծ բառեր են:
Ասելիքը դեռևս
անհայացք դե՞մք է:
Զսպանակ է քաղաքը,
ուր շրջում է
բևեռների ոգին:
Հիշողության փետուրնե՞րն են աճել…
Անսահմանության բիբե՞րն է կտցում
բևեռների քամին:
Օդապարիկ-խոսքը՝
Ժամանակի սահանք:
Եվ արյան ճիչերից ելնո՞ւմ են աղոթքները…
Կյանքի շրջանակը
համընկնել է արդեն
շրջանակին մահվան:

14.01.2012թ.

ՀԱՏՎՈՂ ԳԾԵՐ

Բառի լռությունը հառնող խաչքա՜ր է…
Աչքերս բուսել են լանջերին լեռան…
Ծաղկած մթնոլո՜րտ է ասպարեզը մեղվի…
Հիշողության թևով
կերպավորվու՜մ է
անհասանելին…
Շուրթերիս միջև («Ես քեզ սիրում եմ») ճառագում են
բառերը
աստղերի պես: Դու որոնվո՜ւմ ես: Ստեղծում
մթնոլորտ
սիրահարությա՜ն: Որոնման պատանդն է
իմ քայլը:
Իմ ձայնը փաթաթու՜մ է
ինձ սփոփանքի՜
սավանով: Ես բարու՞ն եմ
չկայացած հանդիպումների անհանգրվան
ծեսի, թե՞…
Շուրթերիս միջև…
մի քանդակ է
հյուսվում
ածխացած
հույսի փետուրներո՜վ խև …
Աչքերս բուսել են լանջերին լեռան…
Սերը… գգվում է ինձ, պատրանքազերծու՜մ
անդրաշխարհի՞ց…
Ոգու դռներից ջնջվել են իսպառ
հասցեները հուշի:
Մի գիծ է քաշում իմ ոտքերի դիմաց
ճակատագիրը,

(սա՛ է քո վանդակը),
որ ես հատում եմ լեռնաբույր
ժպիտո՞վ
Մասիսի…
Ծաղկած մթնոլո՞րտ է ասպարեզը մեղվի…
Սիրո դուռն է ծեծվում
իմ ներսի՛ց…
Իմ և իմ միջև…
Ներդաշնակության նորահա՞յտ բևեռ…
արարչակա՞ն հուն է իմ ճանապարհը…
Ես՝ հավելվա՞ծ
կյանքի, թե՞…
նոր հարությո՞ւն…
Ես՝ մուտք ու ելքի չկնիքվա՞ծ մատյան…
Բառի լռությունը հառնող խաչքա՞ր է…
Ծաղկած մթնոլորտը ասպարե՞զն է մեղվի…
Աչքերս բուսե՞լ են լանջերին լեռան…

15.01.2012թ.

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԻՎԱՆՅԱՆԻՆ

Մի բուռ հողում իմաստության
նոր շիվեր ես տնկել ոգու,
Ռազմի լույսով բացել ճամփան՝
կայծակո՞վ ես բախտը թրծել,
Դու չուզեցիր, որ դագաղվի
երազը քո երթի խորքում,
Չի կանչո՞ւմ էր Գոյամարտի
հայրենաեռ տագնապը քեզ:
Եվ դու եկար՝ որպես ռազմի
ու պայքարի քարտեզագիր,
Բերիր ոգուդ լույսը վարար
և ավյունդ՝ հացի պես սուրբ,
Եվ ռազմական մի վարժարան,
իբրև կրակ հիշատակի,
Պատգամնե՞ր է հղում կյանքին,
և սիրո՞ պես դարն է հոսում...

ԺԱՄԱՆԱԿԸ
ՔԱՐԵ ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

Ժամանակը կտրտվում է՝
տեղավորվելով
վանդակներում քարե:
Պատուհանն է բացվում
դեպի ազատություն:
Քառսի գազանն է դա:
Խեղանդամ երազների վրա
մեռած կատվի աչքերը
կայծկլտո՞ւմ են,
որպես... վերջակետ:

24.01.2012թ.

ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԽՐՈՆԻԿԱ

Հորիզոնի անկյունում
կծկվել է բառը
և սպասում է հոգու կայծակին,
որ նրա լույսով շարունակի
իր ճանապարհը…

Հիշողությունը
չի՞ տեղավորվում անկյունում սենյակի:

Մեկին «անկյուն» են
կանգնեցրել և մոռացել ասել՝ «թողնե՛լ»,
և մինչև հիմա կանգնա՞ծ է…
Զարկվում է ոգին
անկյունից-անկյո՛ւն…

Բառարանի
անկյուններից հանի՛ր օրերը
փողկապավոր,
նախօրոք ազատելո՞վ հանդերձանքից
ժամանակային…

Գրելու համար
տարածությու՞ն է պետք
և ոչ թե… անկյուն…

Ծնվել է և մահացել…
Վկայում է…ոչի՞նչը…
Ահա ևս մի անկյուն,
մի… եզր,
մի…մենությու՞ն…
Եվ դրանից այնկողմ՝
ևս մի՞…անկյուն…
Զարկվում է ոգին
անկյունից-անկյուն:

22.01.2012թ.

ՏԱՐԱԾԱՉԱՓ
ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՉԱՓ ԲԱՌԵՐ

Ինքս ինձանից դուրս եմ մի…մենակությու՞ն:

Մի…անհասություն
ներսուզվել եմ
համբույրի մեջ աղջկա
և անհետացել…մի ներդաշնակությու՞ն…

Մի երջանկություն
բուսել եմ ափի մեջ Դիպվածի:

Հեռացել եմ ակունքներից մանկության…
մի հաղորդությո՞ւն…
Շրջանցել եմ ինքս ինձ մի…հավերժությու՞ն,

մոտեցել եմ աստղին…Ոգու…

մի անհասությու՞ն…

Ինքս ինձանի՛ց դուրս եմ մի… մենակությու՞ն:

22.01.2012թ.

ՆԵՐՍԸ ԵՎ ԴՈՒՐՍԸ

Հիշողության սահմանին
կանգնած է մենակությունս,
որպես սահմանապա՞հ:

Պատմության ճյուղերին
կայանու՞մ են աչքերս՝
բողբոջներով Ոգու:

Պապիս ճակատը
կնի՞քն է Աստծո,
որ մերթ լուսանում,
մերթ մայր է մտնում…
(Տեսողության երկնակամարում
երևա՞ց մի հրեշտակ):

Կնճռապատ տանիքը
Ավետարանի կազմ է,
որ Անհունի թելից կախված
լամպերից
սփռում է լույսեր,
և օրհնության մա՞ս են
ներսը և դուրսը …

Հավերժության սահմանին
կանգնած է հիշողությունը,
որպես դրախտավա՞յր:

22.01.2012թ.

ԱՆՁՐԵՎ

Անձրև՛,
ոգու՞ քարտեզ,
որ լցնում ես ճեղքերն հողի
երկնքո՞վ ու լույսով,
գգվի՛ր հոգուս բևեռները
ծաղիկներո՞վ Անսահմանի:

Անձրև՛,
դու հեքիաթի՞ թռչող մի գորգ,
տարածության այրող կաթի՞լ,
համբու՞յր ոգու,
ես՝ աղոթող մի ուխտավոր,
խորանում քո աստեղնային…

Անձրև, հորդի՞ր
աչքերի մեջ իմ տողերի,
որպես նվա՞գ,
ասուպների տեղատարա՞փ:

Անձրև՛,
ո՞վ է սանրում քո վարսերը գիշերային,
երբ արծաթե կաթիլներիդ պատվանդանին
քանդակնե՞ր է դնում հապճեպ
հրեշտակը…

Անձրև՞…

23.01.2012թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԱՅԱՑՔԸ

Թևերի օրորոցում
հասունանո՞ւմ է ուղեծիրը թռիչքի:
Ճախրող բույն է
հոգին լույսի:
Բանաստեղծի հայացքը, որպես մեղու,
ծաղիկնե՞ր է բացահայտում
երկնքում Հարության:
Փոթորիկների ճերմակ ճյուղերից
կախվում են տողերը
որպես օրորոց,
որի մեջ աճո՞ւմ է
բարուրն Անսահմանի:

25.01.2012թ.

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Պեղո՜ւմ եմ օդը: Պեղում եմ
շնչառությունը մարդու և հայացքի
բեկորներ հանում
խորքից քաոսի,
ուր մեր նախնյաց ոգին եռում է՝
վեր հրելով կափարիչները
պատմության:
Քարերը թեթև են՝
թևավոր մի լռությամբ,
իսկ նրանց ստվերները՝
ծա՛նր,
ինչպես կասկա՜ծը
Տիգրան Մեծի:
Պեղում եմ ինքնամարտը ստվերի,
իրերի շարժումը՝ ժամանակի ելք,
(զենքերի շաչյունը
հաղթահարման դո՜ւռն է),
պեղում եմ ինքս ինձ
Ոգու սենյակում,
և պատմության խորքից
հառնո՜ւմ է
անսահմանությունը:

ԱՊՍՊԱՐԱՆՔ

Ճանապարհի հայացքում
զնգո՜ւմ է մեղուն,
որպես Գանձասարի զանգից արձակված
ղողանջ:
Դաշտախոտերի վրա սփռվում է
դեղին մի պատարա՜գ:
Օրը,
որպես փողկապ,
հանում ու նետում եմ
ջրերի մեջ գետի:
Որպես Կարմրախայտ,
ալիքավորվո՜ւմ է հիշողության
քամին
և անհետանում խորքում
Անհունի:
Ճանապարհի հայացքում
զնգում է տողը,
որպես Գանձասարի
խաչքարից հղված
մի ապսպարա՜նք:

31.01.2012թ.

ԱՍՈՒՊՆԵՐ ԵՆ ՑԱՅՏՈՒՄ ԹԱՐԹԻՉՆԵՐԻՑ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ

1
Վերքերիս սպիտակ
շնչառության մեջ
ծնվո՞ւմ են ասուպները
երազանքի,
որ փարվելով թևերին
հրեշտակների,
թևում են դեպի տարածքները
ոգու:
Ցավահարույց դռնե՞ր են թևերը
հուշերի,
որ գագաթների զոհարանն են ավլում
փետուրներով հույսի,
մաքրո՞ւմ ավազից մրմուռի…
Կարմի՞ր է
զարկերակը ճանապարհի,
որ տրոփում է կեղևի տակ հորիզոնի:
Իսկ վայրկյանների կողմնացույցը
ստվերն է ծառի,
որով կողմնորոշվո՞ւմ են բողբոջները…

30.01.2012թ.

2

Ճանապարհի հայացքը
բարո՜ւրն է հիշողության,
որ օրորվում է հորիզոնից-հորիզոն…
Քայլերից բխվող վարդե՜ր են պահերը,
որ փարվում են քարաժայռին ճակատագրի,
որպես բույն
իջնում
տարածության ճյուղին:
Լեռնաշխարհը գրում է ճանապարհի բիբով…
Խաչքարի ձեռքերում՝
օրորվող բարո՜ւր.
դա իմ ժամանակն է…
որ դուրս եմ հանում զսպաշապիկից ոգու…
Ասուպնե՜ր են ցայտում թարթիչներից հիշողության…

31.01.2012թ.

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Այս ճանապարհը ձգվում է ոգու
խորխորատներով, լեռներով տենդի,
նոր տարերքներ ու խոսքե՞ր ես ոգում
սպարապետական քո բարձունքներից,
բացում ես աստղը՝ որպես ոգու հա՞ց,
ժպիտդ՝ իբրև հավա՞տ պարգևում
լեռներին, հողին, ծառերին ծաղկած,
որտեղ վեհության օրե՞րն են թևում...
Սպարապե՛տ, կամքդ ուղի է դառնում,
հայացքդ՝ ոգու սրբագործությո՞ւն,
քո մարտիկներն են ելքերից հառնում
և գնում դեպի... սխրագործությո՞ւն:

ԲԵՎԵՌԻՑ-ԲԵՎԵՌ

Բառի կամք,
Բառի երազ,
Բառի հոգի,-
ահա իմ կենսագրության
սկիզբը…
Մանկության հայացքում
բնավորվո՞ւմ են
ճանապարհները…
Թռչում են լուսաբացները
մատներից հուշերի...
Կարոտի ճերմա՞կ-ճերմա՞կ
աղավնիներ են իջնում
ոտնահետքերիս ճիչերի վրա...

Դեմքիս սպին՝
աստղի նշան.
իմ ծնունդով
ճանապարհը կառչեց լեզվակից
երկնքի
և զանգահարե՞ց բևեռից-բևեռ
ոգին տարածության:

Գալարվո՞ւմ է լուսաբացը
տենչի
Ոգու քառսի առանցքի վրա…
Իսկ ես…
ծաղիկնե՞ր եմ
քաղում
երախից հողմի…

21.01.2012թ.

ԴԱ ԻՄ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Ճանապարհն աչքերն է բացում
գագաթին լեռան՝
հիշողության թարթիչով գրելով մի երկրող
թևին հրեշտակի:

Հասունանում է խմորը հիշողության,
որպես պտուղ:

ՀՆԱՐԱՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄ

1. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Նախ պետք է գտնել անտեսանելի կապը
այս բառերի միջև.
հարություն և տառ,
ճանապարհ և փորձ,
սարկոֆագ և քաոս,
սկիզբ և հանգրվան,
սալահատակվել և բառ,
համադրություն և երկինք,
անբնական և կապույտ,
լռություն և մատիտ,
վայրկյաններ և աչքեր,
ընթերցող և զարդարանք,
Անհունի եզր և ծառ...
Հետո բանաստեղծությունը կշարունակվի
առանց բառերի,
բայց ո՛չ առանց … լռության.
այդպես սիրահարների խոսքն է շարունակվում
համբույրով հարատև…
Եվ արդյունքում ունենում ենք
ոչ միայն բանաստեղծություն,
այլև…

2. ՈՒՂԵՑՈՒՅՑ ՈԳՈՒ

Բողբոջների ծիծաղն է լցվում
աչքերի մեջ տողերի,
և պոեզիան դառնում է տա՜ռը Հարության:
Փորձը կնճիռների սպիտակ ճանապա՜րհն է,
որ ընթանում է ժայռերի միջով
հիշողության,
ուր սարկոֆագներ կան քառսի:
Սկիզբը
հանգրվա՛ն է նաև:
Սալահատակված
բառերից կորզո՜ւմ եմ սուրանկյուն
մտքեր: Համոզվել եմ,
որ երկինքը համադրությո՜ւնն է
վերերկրային զգացողության:
Կապույտն անբնական
ճեպանկա՜րն է
երազային Երթի:
Երբեմն
պիտի գրել նաև մատիտո՜վ
լռության,
կյանքի լուսանցքներում թողնելով
ջարդոնը Ոգու:
Թե մտածես նաև աչքերով վայրկյանների,
դու կազատվե՜ս միանգամից զարդարանք-
ընթերցողից,
և բառի փոխարեն մի ծա՜ռ կտնկես
եզրին Անհունի:

19.02.2012թ.

ԴԱ ԻՄ ԺԱՄԱՆԱԿՆ Է

1. ԼԱՊՏԵՐԸ

Մի լապտեր է վառվում անկյունում ճակատագրի:
Մանկության արահետի զոհասեղանից
կախվում են ասուպները:
Հուշերիս ծվե՛նն է կայծկլտում տարածության
բիբերում:
Ոգու գագաթները մխրճվել են
ներշնչանքների երկնքի մեջ:
Արդեն մո՞տ է ծնունդն Անհայտի:
Եվ երազի աշխարհը կայանո՞ւմ է
հոգու բևեռների միջև:

2.02.2012թ.

2. ԼՌՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ է ընթերցում
հրեշտակների թևերից բխող երկինքները-
տողե՛րը հոգուս…
Քառի զոհասեղանից
ընպում է հողն իր ազատությունը:
Ո՞վ է ընթերցում
աչքերը հուշերի,
որոնք ծառերի խշշոցով համբուրո՛ւմ են
ժապավենը առեղծվածի:
Եվ ճանապարհը հաղթահարո՛ւմ է
անորոշությունը հոգու:
Ես իմ լռությունն եմ լցնում
աչքերի մեջ հիշողության…
Եվ հորիզոնի բիբե՛րն են բուսնում
ծաղկամանիս մեջ:

3.02.2012թ.

3. ԱՍԵԼԻՔԸ

Ժամանկի ասելիքը չի՞ տեղավորվում
աքցաններում ճակատագրի:
Ես իմ անունն եմ կորցրել,
որպես հիշողության դուռ…
Պատա՞նդ է լռությունը բառերի
գագաթներին Ոգու:
Տառապանքի ստեղներին նվագող մի՞ շունչ…
Առնչության ձեռքերում
թփրտո՞ւմ են
ձկներն անհայտության:

3.02.2012թ.

4. ԴԵՄՔ

Աչքերի պատմության հոսուն ուռկանում
թփրտում է աստղը:
Տիեզերքը հաղթահարո՞ւմ է ինքն իրեն
լաբիրինթոսում ցավի:
Հայացքի ճանապարհին բուսնող ծաղիկներով
շրջանառվում է
դեմքը լռության:
Ուր որ է՝ կլսվե՞ն հիշողության
քայլերը
անապատում Անսահմանի:

4.09.2012թ.

5. ԲԱՆԱԼԻ

Հիշողության ձեռքից ընկնում է բանալին
կյանքի:
Ո՞ւմ ցավի ասուպն է թևում
բևեռների միջև:
Ճանապարհս ազատվո՞ւմ է իր մաշված հունից,
ինչպես օձն՝ իր մաշկից:
Վիրակապ է
օրը,
որ սահում է քամու ճյուղերի վրա
և անհետանո՞ւմ անցյալի
հորիզոնում:
Ոգու արխիվից բարձրացող ա՞ստղ են
տողերը…
Ելքի:

5.01.2012թ.

6. ԱՐՅԱՆ ՀԱՍՅԵՆ

Արյան հասցեն որոնում է ճանապարհը Ոգու:
Երազի ակունքն է արթնացել թևերի տակ հորիզոնի:
Քառերի նժարներում տարուբերվում է ճակատագիրը:
Ժամանակի բևեռների միջև ճերմակող մազերս
իմ տողե՞րն են,
որոնք ըմպում են ծառի ճյուղերից
կաթիլնե՞ր երկնքի:
Ցավի բռունցքը հարվածում է հասցեներին Անհայտի:
Լեռան գագաթը
բողբոջում է հայացքո՞վ Ապագայի:
Ահա ևս մի … զոհասեղա՛ն:
Երազի ակունքն է արթնացել թևերի տակ հորիզոնի:
Արյան հասցեն որոնում է ճանապարհը Ոգու:

6.02.2012թ.

7. ՈԳԻՆ

Անսահմանության դիմագծերից պոկում եմ
մի բառ՝
ծաղի՞կը երկնքի:
Լուսաբացի թևերով
փաթաթում եմ վերքերը հիշողության:
Ներշնչանքի ասուպները գուրգուրո՞ւմ են
օրը…
օդը զսպանակ է:
Թռուցիկնե՞ր են թափվում
թևերից գաղափարի:
Սպիտակ թղթի շնչառությունը
մի ուռկան է,
ուր թփրտո՞ւմ է ոգին տիեզերքի:

7.02.2012թ.

8. ՄԽԱՆՔ

Ստվերների արշալույսն է հանգստանում
ճյուղերին ծովի:
Ծարավի անապատի տենդում
մխո՜ւմ է զոհարանը երազի:
Անհունի հայելու մեջ գլխատվո՜ղ
ծաղիկներ:

7.02.2012թ.

9. ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ճանապարհը՝
ադրժամանակի դղյակից փողփողացող
դրո՞շ…
Անիի զանգերի կարմիր ղողանջները
տարածվում են
հիշողության կայծքարե թևերով…
Անօթևան ցավերի դո՛ւռ…
Մի դարպաս է բացվում
հիշողության կրնկի վրա...
Հուշերի վիրակապը:
Զանգերի ցավը:
Անհայտության պատարա՞գը:

8.02.2012թ.

10. ՄԻ ԵՐԿՏՈՂ՝
ԹԵՎԻՆ ՀՐԵՇՏԱԿԻ

Ճանապարհն աչքերն է բացում
գագաթին լեռան՝
հիշողության թարթիչով գրելով մի երկտող
թևին հրեշտակի:

8.02.2012թ.

11. ՆԿԱՐ

Լռության թռչնակն
իր թևերով նկարո՞ւմ է
խորհուրդն Առեղծվածի:

8.02.2012թ.

12. ՀԱՄԲՈՒՅՐԻ ԱՉՔԵՐԻՑ ԿԱԹՈՒՄ Է ԱՐՑՈՒՆՔԸ

Համբույրի աչքերից կաթում է արցունքը:
Հիշողության նվագ՝ խորքի՞ց Անհունի:
Պահարանում կախված է հայացքը գարնան,
որպես շապիկ չթե և ծաղկազարդ զգեստ,
գրպաններում սեր է և… մենակությո՞ւն…
Համբույրի աչքերից կաթո՞ւմ է արցունքը:

8.02.2012թ.

13. ՃԱԿԱՏԱԳՐԻ ԽՈՐՇՈՒՄ՝ ԱԶԴԱՆՇԱՆ ՈԳՈՒ

Ճակատագրի խորշում՝ ազդանշան ոգու:
Հիշողության ստեղներով մի նվագ է վազում՝
որպես ապսպարա՜նքն Աստծո:
Ցավի գագաթներին լուսանում է օրը…
Պատարագի հողում հավատա՜մքն է աճում…
Ճակատագրի խորշում՝ ազդանշա՜ն ոգու:

8.02.2012թ.

14. ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍՏՎԵՐԸ ՍԼԱՔՆ Է ԺԱՄԱՑՈՒՅՑԻ

Ճանապարհի ստվերը սլաքն է ժամացույցի:
Հորիզոնի ձայնից արթնանո՞ւմ է բառը:
Ոգու վիհն է եռո՞ւմ երակում Երազի:
Առասպելի ստվերը՝ զոհասեղա՞ն հոգու:
Լաբիրինթոս- երկրում կողմնացո՞ւյց է ցավը:
Ճանապարհի ստվերը սլա՞քն է ժամացույցի:

8.02.2012թ.

15. ԳՐՈՒՄ Է ԺԱՅՌԵՐԻՆ

Տառապանքի հողմը
կտցելով բիբը ճանապարհի՝
գրում է ժայռերին
երգեր անսանձելի՞…

9.02.2012թ.

16. ՔԱՌՍԻ ԴԱՐՊԱՍԻՆ ԹԱՌԵԼ Է ՄԻ ԲԱՌ

Քառսի դարպասին թառել է մի բառ,
թե՞… թռչուն…
Ո՞վ կարող է գտնել ոգու անդունդում
մարգարի՛տը Ելքի…

7.06.2012թ.

17. ԱՆՍԱՀՄԱՆԻ ՍԵՐՄ

Ժամանակի ոտնահետքերում
լողո՜ւմ է դեմքը Անհայտի:
Հեռավորության ցողունի վրա
վառվում է դեմքս, ինչպես մո՜մ…
Ճանապարհը հարվածում է
բռունցքով Ոգու:
Ճակատագրի անկյունում՝
հիշողության արձան-
Անսահմանի սե՜րմ…

10.02.2012թ.

18. ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Լուսավորի՞ր շուրթերս համբույրով ձայնիդ…
Թե բացես պատուհանը ճակատագրի՝
Ժամանակի մաշկը
կբուրի՞ բողբոջով…
Օրվա ծաղկամանում
ընձյուղվե՞լ է գիշերը…

10.02.2012թ.

19. ԿԱՐՈՏԻ ԼՈՒՍԱՆՑՔՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ՄՂՎԵԼ

Կարոտի լուսանցքներից դուրս են մղվել
տողերը Ոգու:
Շոյանքի կարոտ ժամանակը
մուրո՞ւմ է … համբույր…

7.06.2012թ.

20. ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծը փրկելով երազը բառերի՝
հասնո՞ւմ է ինքն իրեն:
Արթնանո՞ւմ է համբույրը տիեզերական կյանքի:

11.02.2012թ.

21. ԲԱՌԸ, ՈՐՊԵՍ ՀՈՐԻԶՈՆԻ ԱՉՔ

Բառը, որպես հորիզոնի աչք,
թարթվում է կայծակով…
Սահմանագծերի ձմեռվա միջով
թևում է հրեշտակը
և հույսի ծրարնե՞ր սփռում
անդորրության մեջ խրամատների:
Զինվորը հսկո՞ւմ է մենակությունը
տիեզերքի:
Բռունցքված ճանապարհի հայացքում
լողո՞ւմ է
լուսինը…

31.01.2012թ.

22. ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժառանգականության կողմնացույցից
պոկված մի սլա՜ք է
իմ ճանապարհը…
Ահա… Մեծ բեկման առաջին ակնթարթը…
Հորիզոնի դեմքից անջատվում է մի ժպիտ…
Ապագայի վա՜ղը…
Հորս անունը կրող
հիշողության նժա՜ր:
Ժամանակի հետգրությո՛ւնը:

11.02.2012թ.

23. ԵԼՔԸ

Բառարանի հիշողության դռները բացվում են
դեպի ասպարեզը ոգու:
Ցավի քարտեզից ընկնո՞ւմ են
սահմանագծերը:
Աստված
ընդլայնո՞ւմ է զոհասեղանը
Արարչագործության:

12.02.2012թ.

ԲԱՑԱԿԱ՛Է

Արյան պես թափառում է Ոգին Տարածության:
Անհայտության սյուներից կախվել են դրոշները
հույսի:
Ցավի երկունքը մեկուսարան չէ՛:
Լռությունը ելք է,
ոչ թե … կառափնարան:
Ժամանակը պատանդ է:
Չծնված տողերի
սենյակներում
քայլում է բանաստեղծը:
Թռիչքների անհայտը
գետնասեր թռչուն չէ՛:
Բացակա՞ է հիշողությունը
դարակներում Ոգու:
Բացակա՞ է խիղճը
Տիեզերական Ելքի:
Արյան պես թափառում է Ոգին Տարածության:
Անհայտության սյուներից կախվել են դրոշները
հույսի:
Ցավի երկունքը մեկուսարան չէ՛:
Լռությունը ե՞լք է,
ոչ թե… կառափնարան:

14.02.2012թ.

ՃԱԿԱՏԱԳՐԻ ՈՒՍԵՐԻՑ ԹԱՓՎՈՂ ՏԵՐԵՎՆԵՐ

Քաղաքականության սեղանից կախված
հորիզոնի ճի՛չ:
Ժամանակի զոհասեղանին վառվում է
ճանապարհը,
որպես մո՞մ… Ո՞վ է
հավատում… աչքերին երկդեմ
լռության:
Անորոշությունը բե՞ռ է
ուսերին ժամանակի:
Զգացմունքների պարտեզն իր բուրմո՞ւնքն է
հղում
դաշտերին Ոգու:
Աստղե՞ր են ծլում
ափում հիշողության և լույսով ընդլայնվո՞ւմ է
ճակատը հույսի:
Ցավի զանգերից ազատվո՞ւմ են, արդյոք,
ղողանջները Ոգու:
Քաղաքականության սեղանից կախված
հորիզոնի ճի՛չ:
Ճակատագրի ուսերից թափվող
պատարագնե՞րը...

14.02.2012թ.

ԱՆՀՈՒՆԻ ՀԵՏԱԳԻԾԸ

Անհունի հետագիծը
հորիզոնի ծաղկած ճյո՛ւղն է-
ներդաշնակության պատուհանը,
ուր ինքն իրեն է որոնում մարդը՝
որպես հանգրվանը Հոգևոր Ելքի:

Հիշողության քայլը ակունքն է աղբյուրի,
որից ջո՛ւր է խմում ցողունը հեռավորության:
Անհայտի ճանապարհը կտցահարո՛ւմ է
հորիզոնի ձուն:
Եվ ինքն իրեն ընդառա՛ջ է գնում ոգին ճանապարհի:
Տառապանքի բիբով գրում եմ մի քանի տող
դռներին անհայտության:
Անհունի հետագիծը
հորիզոնի ծաղկած ճյո՛ւղն է:

16.02.2012թ.

ԴՌՆԵՐ ԵՆ ԲԱՑՎՈՒՄ

Եվ հիշողության պարսպին զարկվող գնդա՞կ է
դեմքս,
որ պատռվում է,
ծվեն առ ծվեն թափվում Անհունի
զոհասեղանին:
Վերքերից թռչող ասուպների՞ պես
հանգրվանում են
տողերս
ճանապարհների թևերի վրա:
Դռներ են
բացվում՝
բևեռնե՞ր հոգու:
Դեմքիս բեկորները...
կախվել են քիվերից Լուսնի:

16.02.2012թ.

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Երկրագնդի հետագծով գլորվող
կափարիչներ են
մարդիկ:
Տիեզերքի լեզուն:
Հրեշտակների թևերից բխո՜ղ
աղբյուր:
Աստծո
ձեռագրերում
տեղադրվում են նրանք,
որպես կետադրական
նշաններ:
Մահվան հանգույցը բացվում է
քայլերո՜վ Անհայտի:

7.06.2012թ.

ՍԻՐԱՀԱՐՆԵՐԻ ԶՐՈՒՅՑԸ

-Եվ ներս մտնելով՝
մնում եմ դրսո՛ւմ:
-Ներս չմտնելով՝
մնում ես սրտո՞ւմ:
-Կյանքն ավետելով՝
փթթո՞ւմ ենք… ցրտում:

07.02.2012թ.

ՔՈ ՊԱՏՈՒՀԱՆԸ

Եթե պատռել ես դիմակը ներդաշնակության,
նրա ճեղքերից հոսող ժամանակը
քո ո՞ճն է:
Եթե հանել ես ոգու ստվերից հայացքն Ապագայի
և փոխանցել արմատների արթնացող
դողին-
քո ե՞լքն է:
Եթե հավատդ մի աքսորյալ է
և կասկածների տանջարանում կծկվում է հոգիդ,
ընդունի՛ր հարվածները Ապագայի…
և մաքառի՞ր …
Ցա՛ծ նետիր կուռքերի ստվերները
պատգարակներից հիշողության…
Քո պատուհանը
Ապագայի մեջ բաբախող քո տո՞ղն է…

30.01.2012թ.

ՃԱՆԱՊԱՐՀ

Հեռավորության ցողունի վրա հասունանո՞ւմ է աստղը:
Ճամփորդը գրկել է բարուրը տարածության…
Լեռան ճակատը համբուրո՞ւմ է ալպիական մի խոհ:
Ոգու սպանդից ելնո՞ւմ են բռունցքներ խղճի:
Արյան կանչն, ինչպես հրաբխային մի ել՞ք…
Թվում է, թե լուսանում է օրը,
այնինչ՝ դա իմ ցավի ծնո՞ւնդն է ազդարարում
բարձունքների հավքը:
Գրել ճանապարհի բիբով՝
առնվազն խելագարությո՞ւն է…
Հորիզոնը լիզում է ակունքն Անսահմանի:
Չհագեցող խոսքի բիբլիական ծարա՞վ...

17.02.2012թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՉՔԵՐՈՒՄ ԼՈՒՍԱՆՈՒՄ Է ՑԱՎՆ ԱՌԱՎՈՏԻ

Արցունքների թևերից
հրեշտակներն են կախվել,
ես քայլում եմ
 սիրո չարտաբերված լռության վրա:
Կանչերի օազիսում
ամփոփվում են թերթերը վարդի:
Ես քեզ մի բա՜ռ պիտի ասեի:
Դու իմ մազերի ճերմակ էջերն ես թերթում
լուսանցքում տենդի:
Ասուպների թևերից
կախվել են ճանապարհները
և լսո՜ւմ են աղոթքը հրեշտակների:
Բանաստեղծի աչքերում
լուսանո՜ւմ է ցավն առավոտի:

ՊՏՈՒՂՆԵՐ ՈԳՈՒ

Բացվում են բողբոջները արյան
փոթորիկների ճերմակ ճյուղերին,
որոնց միջով հոսում է երկինքը,
որպես ավի՜շը հարատևության:
Իրերն ըմպում են իմ մատներից
դեմքս կորուսյալ…
Եվ Անցյալն ու Ներկան,
որպես նժարներ,
կշռո՜ւմ են Ապագայի ակնթարթը…
Ազատագրվո՜ւմ է զոհասեղանը ցավի…
Եվ երազների ճյուղերից կախվում են
արշալույսները ծովի
ու օրորում իրենց զամբյուղներում քարե
պտուղնե՜ր Ոգու:
Տիեզերքի բանալի՛ն:

23.01.2012թ.

1992թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26

Քարին տակ: Բռունցքվո՞ւմ էր
Ոգին: Եվ ճանապարհի հևքում
փակվում էին աչքերը
վիրավոր լույսի:
Թշնամու դեմ մաքառո՞ւմ էին
և օրորոցները:
Գերեզմանաքարերը
սրո՞ւմ էին հիշողության
դանակները:
Երեխաների կամքը
եփվո՞ւմ էր
հնոցներում հույսի:
Գնդակները ծակում էին
շերտերը ոխի,
և առավոտի վերքերից
արձակվո՞ւմ էին նետերը
Վրեժի…
Պատմագիր
Ապագան ընթերցում է էջերը
լույսի:
Երազների զոհասեղան էր
օրը,
ուր իջնում էր ծաղիկը Հայտնության:

ՇՈՒՐՋՊԱՐ՝ ԱՂՈԹՔՆԵՐՈՎ

Թռչունն իր երգով արթնացնում է ծառի
հիշողության բողբոջները,
որ իբրև մոմեր վառվում են հետզհետե,
լուսավորելով
աղոթող վայրկյանների սպասումնալից ձեռքերը.
շուրջպա՜ր ձմեռային:

Բառն իր խորքերի նվագով արթնացնում է երկրի
հիշողության բողբոջները,
որ իբրև մոմեր վառվում են հետզհետե,
լուսավորելով
աղոթող բնակիչների ճակատագրերը.
շուրջպա՜ր աստղային:

Քարն իր առասպելով արթնացնում է դարի
հիշողության բողբոջները,
որ իբրև մոմեր վառվում են հետզհետե,
լուսավորելով
պատարագող եկեղեցիների ողողանջող հավատը.
շուրջպար՝ աղոթքներո՜վ:

21.02.2012թ.

ՀՈՐԻԶՈՆԸ ՓՌՈՒՄ ԵՄ
ԼԱՎԱՇԻ ՊԵՍ

Ներշնչանքի աչքերից
ցայտում են հասցեները…
Հասունանում է խմորը հիշողության,
որպես պտո՛ւղ:
Թոնրապատերից ծհանով հանում եմ
հորիզոնը կարմիր
և լավաշի՞ պես փռում
քարերի երակների վրա…
Ժամանակի վրձնից թևո՛ւմ են
կտավները Հարության:

21.02.2012թ.

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դիմակների փուչիկնե՞րն են պայթում
գագաթին բարձունքի,
և բառերն ազատվո՞ւմ են կապանքներից…
Ահա լռությունը ծառի՝
ավազանը Ոգու:
Հոգին արյան շիթից հառնո՞ւմ է,
որպես խորան Խոսքի:
Ձայնի ծաղկաթերթն ընկնում է,
իբրև վարագույր…
Եվ հրդեհվո՞ւմ է
ցանկապատը Սեղքի…
Տիեզերական ոգու խաչքարին
վառվող մոմե՞ր են
ընթերցողները…

22.02.2012թ.

ՎԱՌՎՈՒՄ Է ԱՐՑՈՒՆՔՍ,
ԻՆՉՊԵՍ ՄՈՄ

Ափերիս քարտեզում նշումներ կատարող
քամին անհետացել է՝
քարշ տալով անապատում
գլխատվա՜ծ մի երազ:

Հիշատակի լույսը վերականգնո՜ւմ է
դեմքը ճանապարհի:

Նժարների ճանապարհը կշռո՜ւմ է իմ քայլը:

Ես գրում եմ փետուրով հիշողության:
Ես ջնջում եմ … աստղերո՜վ ցավի:

Հորիզոնի ցողունի վրա
վառվում է արցունքս,
ինչպես մո՜մ:

22.02.2012թ.

ՍԿԻԶԲ

Լեռան խորքից խրխնջո՞ւմ է վաղնջական
ժամանակը:
Ապագայի թիկունքում
սկզբնավորվում է
բանաստեղծության դարը: Քարը
աչքերն է թարթում
պատարագներում Արևի,
ուր տարածության սանձներն են պրկվում
ձեռքում Անհայտի:
Ստվերների դեմքն ընկնում է
քայլի մեջ լույսի:
Հորիզոնի հայացքը
ժամանակի ջրհորն է,
որից ջո՞ւր են հանում…
ծառերն Հիշողության:

24.02.2012թ.

ԾՆՈՒՆԴ

Ծաղկող քարերի մանկությո՞ւնն է բուրում
օրորոցներում լեռնապարերի:
Երազների հո՞ղ,
տեսիլքի զսպանա՛կ:
Առասպելների տողերը հոսուն
ջրվեժում են
թռիչքահարթակից ժամանակի…
Անհունի դեմքը բռնում են տողերը,
որպես վրձնահարված,
և փոխանցում Հարության հասցեների՞ն…
Մոմի լույսերը
Ոգու դռներ են,
որոնք բացո՞ւմ են
պատարագները…
Վարդաբույր Ելքի բիբլիական խորհո՞ւրդ:

24.02.2012թ.

ԵՐԲ ԵՐԿՆՈՒՄ ԵՍ ԴՈՒ

Ճանապարհի հայացքն է շարժվում
ցավի քարտեզի սահմանագծով…
Եվ հիշողության բողբոջները պայթում,
տարածում են բուրմո՞ւնք առեղծվածային:
Լռության խորքից ժայթքում է անտառն
Անսահմանի…
Երբ երկնում եմ ես դու,
լսո՞ւմ ես ձայնը նախաարարման…
Ժամանակի ակնախոռոչում շարժվող լույսը
քո գրչի ծա՛յրն է…
Բի՞բը Հարության…

25.02.2012թ.

ԸՆԹԱՑՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

Ավերակների մանուշակներով
մխիթարվո՞ւմ է եղանակը:
Օրենքի պատյանը
ճեղքվել է տեղ-տեղ
ձնծաղիկներո՞վ…
Ուսերս՝ ազատության
չրմբռնվա՞ծ քանդակ …
Քայլող ակունքնե՞ր են
պատվիրաններն Աստծո…
Անգաղափար հորիզոնի
ծարա՞վն է բառը…
Իրադարձությունների պատվանդանին
տեղադրվում է
Լեռը…
Ընթացքի խորհրդանիշը…

26.02.2012թ.

***

Ժողովրդավարության վանդակներում՝
գունավոր հեղափոխությո՞ւն:
Ոգու սրերով գլխատվո՞ւմ են հորիզոնները:

26.02.2012թ.

***

Անցորդների ժպիտը
մի պատյան է,
որի մեջ պահվո՞ւմ է սուրը անվստահության:

26.02.2012թ.

ԻՆՔՆԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

Ճանապարհի թիրախներում
արթնանո՞ւմ են
ոտնահետքերն ապագայի:
Առանց երկխոսության՝
անհարի՞ր է լռությունը:
Լիցքավորման ակունքը
ինքնամարզո՞ւմն է:
Ես իմ դեմքից հանում եմ
հայելին ժամանակի
և մնում… ինքս ինձ հետ:
Աչքերս
հեռավորության գագաթնե՞րն են:
Տիեզերական մենակության
շե՛մը:
Մի մոմ վառելով երախում Քաոսի՝
իմաստավորո՞ւմ եմ բացակայությունս…

26.02.2012թ.

ՄԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժամացույցի սլաքները՝
ծիծեռնակի թևեր,
որ երազների երկի՜նքն են ընդլայնում
թռիչքներով…
Տապ է:
Հայացքս ծեփում եմ պատին,
որպես բույն,
ուր հանգստանո՜ւմ է մենակության թռիչքը:
Դատարկության ա՜ստղը:

26.02.2012թ.

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՊԱՀԵՐ

1.
Կանչերի օազիսում
բռնկվում են թերթերը վարդի:
Իսկ ղարաբաղցի աղջիկները քայլում են
փողոցներում
և նրանց աչքերի լուսանցքներում
թփրտո՞ւմ են հրեշտակները…
Օրվա այդ պահերին
վարդե՞ր են բխում
շնչից լռության …

2.
Աբսուրդի ակունքն է լռությունը բառի:
Հողի լեզվի տակ խլրտում է ճանապարհը:
Եվ արթնանո՞ւմ է հիշողությունը հանգրվանի:

3.
Բանաստեղծությունից դուրս մնացած տողը
լիզում է այգաբացը շուրթերիդ
և վերածնվո՞ւմ,
որպես հրեշտակ:

27.02.2012թ.

ՕՐՎԱ ԱՆՀԱՍՑԵ ԴՌՆԵՐԸ

Երազի ցանցում
թփրտո՞ւմ է գիշերն իմ հույսի:
Լուսայգի շերտով անցնում է միտքս.
հայացքաչա՞փ անդունդ:
Ծառի
ճյուղն ընթերցում է երկտողը օրվա՝
պահելով այն… մտքո՞ւմ:
Օրվա անհասցե դո՛ւռ…
Ուր որ է՝
դուրս կգաս դու տնից
և օդի ափերից կըմպե՞ս
գիշերն իմ հույսի:
……

29.02.2012թ.

ԲԱՑԱՀԱՅՏՎՈՒՄ Է ԴԵՄՔԸ ԼՌՈՒԹՅԱՆ

Բացահայտվում է դեմքը լռության
ափերում քո տաք,
որոնք ծարա՞վն են սպառում
աղբյուրի.
շուրթերի սպիտակ կա՞նչը…
Հույսի դարպասներից
քո հայացքը ջնջո՞ւմ է հասցեները…
Չկողմնորոշվո՞ղ եղանակ
Սիրո:
Ճանապարհների նժարներում
մասնատող կշռաքարե՞ր են
քո քայլերը:
Անհեթեթության անդունդի եզրին
բուսե՞լ է մի ծաղիկ:
Շուրթերով որսո՞ւմ եմ
աստղերը
անձրևի…

2.03.2012թ.

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

Լուսնի քիվերն ի վեր բարձրանում է
շունչը մարդու,
որպես հորովե՞լ…

7.03.2012թ.

ԺԱՄԿԵՏԱՆՑ ԽՈՍՔ

Հնարավո՞ր է, արդյոք, կրկնօրինակել ոգին:
Տիրոջ հայացքում դու շարժվում ես, որպես
անհարկի՞ նշում:
Ցա՛ծ դիր գրիչդ,
եթե քո բառը ժամկետա՞նց համբույր է,
և տողդ ուժի մեջ է… մինչև հաջորդ օրվա
ժամկետա՞նց հուշը…

1.03.2012թ.

ՄԻ ԴԵՂԻՆ ՀՐՃՎԱՆՔ ԿԱԽԵԼՈՎ
ԹԵՎԵՐԻՑ ԱՆՀՈՒՆԻ

Վայրկյանների փլվող բներում
չի՞ հասցնում ձվադրել օրը:
Կաղապարի հոգեվա՞րք է ապրում
բանաստեղծության ելքը:
Ներշնչանքի հասցեներն օրորվո՞ւմ են,
որպես տերևներ:
Կյանքի նոր վերե՞լք է բխում
ակունքներից ոգու:
Ուր որ է՝ կհնչի ողողանջը
լռության
և ես գրասեղանից կհավաքե՞մ
թարթիչները
ներշնչանքի:
Մի ձեռք
դուրս կհանի ճանապարհս
պատյանից ցավի:
Ոտնահետքերիս բացված ծաղիկներից
կթևեն մեղուները՝
մի դեղին հրճվա՞նք կախվելով
թևերից Անհունի:

2.03.2012թ.

ԱՆԻ

Անդունդի պատերին խփվում են
թևավոր ճիչերն ավեր քաղաքի:
Անի՜:
    Անհունի ծիրից
    կախված պատարա՜գ
և հողից հառնող արմատների
    բռո՛ւնցք,
զինվորի հետքերն ընթերցվելո՞ւ են,
որպես դասագի՜րք,
գալիքի լուսանցք-փողոցներում այս…
Անի՜…
    Ցավի հորիզո՜ն,
    խաչքարի կայծա՛կ:
Եկեղեցիներիդ պատանդ-ղողանջները՝
    ճիչե՜ր թևավոր…
Անի՛…
Ճակատագրի
    պատյանից հանվող սո՛ւր…
Անի՜…

7.03.2012թ.

ԴԻՊՎԱԾԻ ԿՅԱՆՔԸ

Ցանձրույթը մահ է:
Ոգևորությունը անկրկնելի պահերի
ըմբռնո՞ւմն է
Անհասության կտրված ցողունի վրա:

4.03.2012թ.

ՈՂԲԵՐԳ

1
Քարի տաք հասցեն է կտցահարում
մենավոր մի թռչուն.
լույսի զոհասեղա՜ն:

Անհայտության քամին ցրում է բառերը,
որպես ասուպնե՜ր արյան:
Ճանապարհի աչքերը որսո՜ւմ են թակարդները…
Պատա՜նդ է ժամը Հարության:

5.03.2012թ.

2.
Փողոցի անկյունում
վառվո՜ւմ է հիշողության մոմը:
Թռչունները լույս են կտցում և բորբորքո՜ւմ կրակը
արցունքների:

6.03.2012թ.

Ո՞Վ Է ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ
ԸՄԲՌՆՈՒՄԻ ՆՈՐ ԼԱՐԻ ՎՐԱՅՈՎ

Հիշողության անդունդի վրա
ծիածանվո՜ւմ է տարերքը արյան:
Դատարկության ճյուղերից ընձյուղվում են
պատրանքի շիվերը: Ո՞վ է
վերադառնում
ըմբռնումի նոր լարի վրայով,
որպես… կաթի՜լ արցունքի:
Ո՞վ է հղկում պատկերն իր
հայելու կրակե ձեռքերով:
Մեկը հաղթահարում է ինքն իրեն
կամքով տողերի.
ինքնամոտեցմա՜ն անդունդ:
Մյուսը
հեռանում է ինքն իրենից՝
մի հայացքաչա՜փ:
Լաբիրինթո՜ս է ճանապարհը բառի:
Ոգու կողմնացո՜ւյց է
կաթիլը
արյան:

13.03.2012թ.

ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐՈՎ ՀՂԿՎՈՒՄ Է

Մենակության բռան մեջ մի բանալի՞ է
քո ոտնաքայլը:
Հույսի
հանգրվան: Իմ դեմքը
ազատելով հայելու կապանքներից,
նվիրո՞ւմ եմ
քեզ,
որպես «բարի՞ լույս»:
Դու ինձ ես պարզում քո ձեռքը,
որպես
բալենու ճյուղ,
ուր գուրգուրո՞ւմ եմ հիշողության
օդը…
Քա՛ր է
հիշողությունը ցավի,
որ համբույրներով հղկվո՞ւմ է,
որպես
խաչքար:

15.03.2012թ.

ԱՆԴՈՒՆԴ

Մի դուռ է
կախվել լարից հորիզոնի:
Հոգեվարքի հրդե՞հ:
Եվ ճակատագրի գրատախտակից
թռչում են տողերը,
որպես ասուպներ…
Մենակության բևեռների միջև աղոթող
ստվերները
հոգեվարքի ծառե՞ր են.
հիշողության անդունդը:

15.03.2012թ.

ՀՈՐԻԶՈՆԻ ԲՈՂԲՈՋԸ

Բառարանի ժամանակն է հատում բառը՝
որպես հորիզոնի բողբո՜ջ:

Մեսրոպյան ոգու ակունքն է լույսը,
Տիեզերքի նժա՜րը:

Ճակատագրի՜ հող է
հորիզոնի բողբոջը:
Անհայտի դո՛ւռը:

17.03.2012թ.

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Հայացքիս քայլերում ջարդվում են քարերը,
ծառեր են աճում սահանքներում հուշի,
ցավից լեռ է հառնում մի ակնթարթում,
երազները հույսի
գագաթնե՞ր են,
որտեղ հիշողության աստղիկներ են թարթվում,
և ոգու լույսից ճառագում է տարածության ուժը…

Կյանքն է հառնում բառից,
ելքն հիշողության դուռ է,
ճանապարհը ոչ թե երկինք, անտեսանելի հո՛ւր է,
ճանապարհը ոչ թե կամուրջ, ասպետական
սո՛ւր է,
աչքերը թեև բաց են, սակայն հոգին կո՞ւյր է,
զոհասեղան-ճանապարհը եթե կա, տեր իմ, ասա՛,
ո՞ւր է…

Հայացքիս քայլերում ջարդվում են քարերը,
հասցեներ են կախվում թարթիչներից
դատարկության,
ո՞ւր են թառում հայրենական ասուպներն
անփույթ,
մոռացա՞ծ լույսը ոգու,
մոռացած և՛ երազ, և՛ կարոտ, և՛ ցավ…

Երբ ձայնը սե՛ռմն է հուշի,
կողմնացո՛ւյցը հոգու…
Ճանապարհի բաբախյունն ընկալող ուղևո՛րն է
վերջին…
աչքերը թեև բաց են, սակայն հոգին կո՞ւյր է,
զոհասեղան-ճանապարհը եթե կա, տե՛ր իմ, ասա՛,
ո՞ւր է…

18.03.2012թ.

ԺԱՄԱՆԱԿԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Անհայտի էջը՝
տառապանքի՞ պահուստ:

Բառը հանգրվանն է լույսի, հաղորդության
շեմը:

Բացվող կափարի՞չ է
օրը:
Աղոթող ձեռքերի՞ երկինք:
Ծառի արմատները՝
երազների հասցեներ,
որոնցով կողմնորոշվո՞ւմ է հայացքը Խոսքի:

Այս տողերից հետո…
ևս մի քանի՞ տող…
Հետո գալի՞ս է…
Ժամանակը…

19.03.2012թ.

ՄԵՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՐՄՈՒՆՔԸ

Իմ շնչառության ալիքների վրա
տվայտանքի բներն են օրորվում,
մոխրացել են սյունները հույսերի,
և հայացքիս դաշտում մի ծաղիկ
տարածո՞ւմ է բուրմունքը մենության:
Սե՞ր:
Բառի մեկուսարանում տառապող
հավերժությո՞ւն:
Հիշողության դուռը ճոճվո՞ւմ է
հարվածներից
ճակատագրի:
Իմ շնչառության ալիքների վրա
տվայտանքի բնե՞րն են օրորվում…
Ես՝ նստած Անհունի մերկ ճյուղի վրա,
երազի հանգրվա՞նն եմ հորինում…

19.03.2012թ.

ԳԼՈՐՎՈՒՄ Է ՕՐԸ,
ՈՐՊԵՍ ԱՐՑՈՒՆՔ

Հիշողության սահմանները հսկող
հրեշտակները
համբույրնե՞ր են գլորում
մեր կարոտների տանիքների վրա…
Միֆի դարպասին նստած թիթե՞ռ է
օրը,
որ փորձում է տեղափոխվել
թեթև
մեր շնչառության միակ ճյուղի վրա,
չիմանալո՞վ,
որ համբույր- ծաղիկն այդ…
բացակա՞ է…
……..
Ճանապարհի
կոպերի վրայով
գլորվո՞ւմ է
օրը,
որպես
ա
ր
ց
ու
ն
ք…

20.03.2012թ.

ԱՊԱԳԱՅԻ ԴԵՄՔԸ

Լեռնագագաթը
եռացող ոգին է առասպելի:
Ծաղիկը
հասցեն է գարնան,
որ կուրացե՞լ է ավազներում
Եղեռնի:
Խլրտո՞ւմ են սերմերը
անդունդների քարե
կանչերում:
Հիշողության արցունքը
պրկված
բռո՞ւնցք է...
Բացվում են
փակագծները՝
մեկուսարանները Ոգու...
Ապագայի դե՞մքը:

21.03.2012թ.

ԹԵՎՈՒՄ ԵՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ
ԱՆՏԵՐՈՒՆՉ ՑԱՎԻ

Օ՜, ճախրանքի սահման,
որ հրեշտակների շուրթից նվագնե՜ր ես կորզում
ոգու երկինքների դարպասների դիմաց,
ընթերցվո՞ւմ են, արդյոք, թևերի երկինքները՝
փաթիլների ճերմակ օրհնությունն՝ե՜ը
ճակատագրի սեղմ գրատախտակներից…
Ո՜չ…
Ես լույսի դե՞մքն եմ ստվերում
իմ ամեն քայլով…
Բանաստեղծի սիրտը՝
ել՜քը տիեզերքի…
Ճախրում են հոգուս սահմանները,
որպես անհայտության ասուպներ…
Սլա՜ցք է
երազը…
Սահմանագծերի գարնան
կայծակնային շե՛մն է
ճակատը հորիզոնի…
Տառի ձա՜յնն է որսում
փետուրը լռության:
Վերքերի տիեզերքից
թևո՜ւմ են հրեշտակները անտերունչ Ցավի:

23.02.2012թ.

ՈԳՈՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Բառի ձեռքերով
քաղո՞ւմ եմ հորիզոնի պտուղները:
Հարության երկինքն եմ առնում
թևերիս մեջ,
փայփայում՝ որպես թռչունի…
Անհայտության սյունից կախվել են
տողերս,
որոնց պորտալարն է հատում
ժամանակի բիբը…
Տարածության լուսանցքներում
սկզբնավորվո՞ւմ է
տիեզերքի դուռը…
Ոգու թռչունների հայրենիքում
ճախրող բնե՞ր են
երկինքները Լույսի:

23.03.2012թ.

ՍԵՐԸ

Սերը՝ հույսի շե՞մ, սերը՝ զոհասեղան,
մենակության տող՝ ոգու երթերի՞ մեջ,
իսկ նրա ճամփան վառվող մո՞մ է եղել,
անհայտության բույր՝ լույսի թևերի մեջ:

Սերը թիրախն է տենդի սահմանների,
կյանքի պաշտամունք՝ առանց պատվանդանի,
ծագո՞ւմ է՝ միայն… լուսաթարթից վերին,
և հանգչում… ցավի անտե՞ր հրվանդանում:

23.03.2012թ.

ԷՏՅՈՒԴ

Իմ արմատներից հանում եմ
ըմբռնումների ծիածանները
և փռում ճանապարհի զարկերակի վրա:
Հասնո՜ւմ եմ
դռանը Ոգու:
Ժամանակի ձեռքից
վերցնում եմ
լավաշն անեզրության
և կերակրում
ճնճղուկներին:
Տարերքն
իմ մեջ քանդակում է դեմքը
հորիզոնի:
Մի ծառ
իմ միջից ծաղկած ճյուղն է
հանում
և ներկայանում Վերին Հանդեսին:
Տողերիս մեկուսարանում
լռություն է: Այստեղ ժամանակը
հողից հանված արմատ է…
Տարածության նժարներով
կշռում եմ քայլերս
և դնում շեմին… Ապագայի:
Ծառի ճյուղն իմ ափից
ետ է ստանում բույրն իր՝
տեսքո՜վ գգվանքի…

27.03.2012թ.

ԱՅՍՈՒՀԵՏ

Այսուհետ…
բառերս
զսպաշապիկնե՞ր են…
Քայլերս
անդունդի սերմե՞ր են,
որ պայթում են
սրերի շեղբին…
Այսուհետ…
ձայնս
մեկուսարա՞ն է…
Ժամանակը՝
ինքն իրենց դո՞ւրս է…
Այսուհետ…
գրիչս
կուրացո՞ղ աչք է…
Սերերս
ճոճվող դռնե՞ր են…
Ամայության
բևեռների միջև…
պտտահո՞ղմ է
ցավս…
Այսուհետ…
Ստվե՛րս է
իմ խորհրդատո՞ւն…

28.03.2012թ.

ՁՄՌԱՆ ԿԱՅՔԷՋՈՒՄ

Արևի հեռահար համբույրից
ձյունակարմիր են ծառերը: Առա-
վոտը հրատապ լուրեր է տեղադրում
Ճանապարհների սպիտակ կայքէջում:
Շերտավոր օրը
ընթերցարան է,
ուր մանուկները ձնագնդեր են շինում
և խփում առեղծվածի թիրախներին:
Ավտոմեքենաները կծկում են իրենց
անվադողերին
հիշողությունը հեռաստանների:
Ճանապարհի լուսանցքից ցատկում է
մի աղվես՝
երազախա՞բ պահեր գլորելով
բլրալանջն ի վար…
Բևեռներից ընկնող վարագույրները
փոթորկվում են,
սառցե բեմերով անցնում են
վայրկյանները դահուկավոր…
Մի աղջկա համբույր եմ կորցրել
ձմռան կայքէջում…
Կարոտի կոպերից ելնո՞ւմ են
ձնծաղիկները…
Տառապանքի շերտից ձնագնդեր եմ շինում
և խփում Ապագայի թիրախների՛ն…

1.02.2012թ.

ՍԱԼՎԱԴՈՐ ԴԱԼԻԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԿՏԱՎԸ

Ավտոմեքենաները կանգնած են լռության մեջ
ապագա՞ ընթացքի:
Հաղորդակցության տիեզերախո՞ւյզ
խաչմերուկ: Մի մարդ սայլակով տանում է
հորիզոնը հույսի: Ես…
մենակ չեմ:
Իմ մեջ ակունքվո՞ւմ է տապանը Հիշողության:
Ուր որ է՝ կգա Արտուր Մնացականյանը՝
մարտական ընկերս,
որպես Սալվադոր Դալիի կտավին պակասող
վրձնահարված:
Կխմենք
թթի օղի՝ վայելելո՞վ երազը
հողի:
Եվ հիշողության ոտնահետքերում
կբուսե՞ն
ծաղիկներ:
Խաղաղությունը՝
սահմանագծով ընթացող ոգի Նժդեհյան…
Մասիսի ձյունից հառնո՞ւմ է
դրոշը…
Մի մարդ սայլակով տանում է
հորիզոնը հույսի:
Ճակատագրերը կանգնած են լռության մեջ
ապագա Ելքի…
Սալվադոր Դալիի երևանյան կտա՞վը…

30.01.2012թ.

ՍԵՐՄԵՐԻ ԵՂԱՆԱԿ

Ճանապարհը գուրգուրում է օդը
և կախվում ծառի
բողբոջից,
որպես
մեղո՞ւ:

ՍԿԻԶԲ

Մենակության հանգրվանները ավլում եմ
կտորտանքներից զգացմունքների,
որոնք հայելու փայլուն մասեր են
(անդունդից մինչև լույս),
որ չեն արտահայտում սակայն
ամբողջությունը ճակատագրիս:
Ժամանակը, որպես
սպիտակ թուղթ,
գիրն ընդունում է՝ իբրև սե՞ռմ:
Թեմաները բացվող դռներ են.
մտնում եմ ոչ թե հյուրասենյակ,
այլ ոգու ակնհայտ լաբիրինթոս…
Ճանապարհը, որպես բանալի,
պահվում է առավոտի
քղանցքների տակ:
Ջսպաշապիկ է առաջին բառը,
որը չեմ հագնում…
Մնացած բառերը
հրեշտակի թևե՞ր են…

1.04.2012թ.

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԵԼՔԻ

Հույսը զարդարում է սպիտակ պարով
օրն անբռնելի՞…
Պատմության ընթացքը
մարմնավորո՞ւմ է
Ապագայի դեմքը:
Ուղղությունը Ելքի:

2.04.2012թ.

ՍԵՐՄԵՐԻ ԵՂԱՆԱԿ

Թռչունի թևերից
թափվում են սերմերը՝
երկնքի թարթվող լույսերը,
որոնք ծի՞լ են տալիս Ոգու
պտտահողմի մեջ:
Աղբյուրի հասցեն ծարավե՞լ է
ափագծերում դաշտի:
Մի ծիտ անշարժացել է
շերտերում հողի,
որպես սերմացո՞ւ:
Գարնան որոգայթում
թփրտո՞ւմ են
շերտերը ձյան,
ինչպես ձկներ…
Սերմերի եղանա՞կ…
Դիպվածի ձեռքերում
փետրավորվո՞ւմ են
ձայները լռության:

3.04.2012թ.

ԲԱՌԸ

Բառը կափարիչ չէ
ոգու:
Բառը՝
հիշողության բիբ
և Անսահմանի չբռնվո՛ղ
խորհուրդ:

4.04.2012թ.

ԱՅՍ ՊԱՀԻՆ

Տերևներն ազատության
պատյաններ են,
որոնք պարպվե՞լ են պտտահողմի մեջ,
և երազների խուլ նժարներում
բոցավառվում են կրակներ Ոգու:
Կրակը ե՞լք է:
Այս պահին…
Ծառի ասելիքն ընդգծվում է
տերևաթափո՞վ մենախոսության:
Ասելիքի խորքից
վեր՞ են խոյանում
սյուները Լռության:

4.04.2012թ.

ՃԱՌԱԳԱՅԹԻ ՃԱԿԱՏՆ Ի ՎԱՐ

Ճառագայթի ճակատն ի վար
թափվում են
փաթիլները ձյան:
Ծառերը հույսի ճյուղերով
գրկում են
օրհնությունները
և ուտում, որպես պաղպաղա՞կ:
Կյանքի խաղատախտակին
ցատկոտող երազնե՞ր են
մանուկները,
ապագայի չնշմարվող քայլերից
հոսող աղբյուրնե՞ր…
Ծերունու կնճիռները
հույսի եզրագծե՞ր են:
Եվ եթե շփես
կնճիռները-
կդառնան նրանք
եռե՞փ հնձաններ:

5.04.2012թ.

ՀԱՄԲՈՒՅՐԻ ՏԻԵԶԵՐՔԸ

Ժամանակի արմատն է խրված
ոգու մեջ պոեզիայի:
Անհայտի կափարիչն է գլորվում
ներշնչանքի երակի վրայով:
Հասցեների պտտահողմում
բացվո՞ւմ է դեմքը հողի:
Հայացքի զոհասեղանին
վառվում է ճանապարհը,
որպես հո՞ւյս:
Հողի մեջ եռում են
հունդերն արշալույսի:
Բառերն իրենց հոսքում
բացահայտո՞ւմ են
տիեզերքը համբույրի…
Եղանա՞կը սերմերի:

6.04.2012թ.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հառաչանքի հասցե՝
քարե մատյանում:
Վերածնվող անհայտի
չմասնատվո՞ղ բևեռ:
Հորիզոնի կնիք է
լռությունը բառի:
Մեկուսարանի ճի՛չ:
Բոլոր դռներից
ընտրում եմ այս մեկը՝
հիշողությունը…
Չգիտեմ՝ ե՞ս եմ ընտրել
ելքը հայացքի,
թե… ինձ են ընտրել
հասցեների այս խոլ
պտտահողմում…
Ժամանակի ծա՞ղրը…

5.04.2012թ.

ԼՈՒՍԱԲԱՑԻ ԲԱՐՈՒՐ

Ստվերի աչքերից ցայտում է
գիշերը,
որպես տերև՝…
Ճանապարհի ժամանումը
տողի միջով-
պատուհանի ճի՞չ է...
Լեռան գագաթը
անդունդի ճիչն է փաթաթում
երկնքով
և օրորում, որպես
լուսաբացի բարո՞ւր…

11.04.2012թ.

ԿԻՆԸ

Փողոցը մի կին է հատում,
իր հետ տանում ստվերներ շեկ
և ուղեկցո՜ղ զրուցարան,-
նկատում եմ օրվա հայտում
շրջազգեստի նվագարան
և քայլվածքի ստեղներ պիրկ
և մի հայացք՝ աղեղ նետի,
որից մեկեն արձակվում են
հմայակա՜ն բյուր ասեղներ,
որ գրեթե շրջապատում,
գերո՜ւմ են ինձ հույսերով ջեռ:

Փողոցը մի կին է հատում
իր հետ տանում հավերժի՜ կյանք,-
ըմբոշխնում եմ օրվա հայտում
արյան թրթի՜ռ, վարդերի կա՜նչ,
ծաղիկների խելահեղ բո՜ւյր…
տանում է ու… ետ չի՛ բերում
հիշողության ոչ մի … համբո՜ւյր…
Ցողուննե՜րն է տարուբերում
առեղծվածի, սահում անձա՜յն…
Եվ հայացքիս դուռն է տանում,
զարկում սյունին անհասությա՜ն…

Ընթերցում եմ օրվա հայտում…
շրջազգեստի նվագարան
և քայլվածքի ստեղներ պիրկ
և մի հայացք՝ աղեղ նետի…
Կինը՝ հույսի քայլող խորան,
Կինը՝ ասո՜ւպ- Անհունի դուռ…
Ի՞նչ նվիրեմ հիմա նրան,
որ չտանջվեմ այս անդունդում…
Գուցե մի բառ ես կամրջեմ
հողմապտույտ նրա երթին,
գուցե մի ե՜լք ես անրջեմ
և երգի մեջ փրկե՜մ… հոգի՛ն…

12.04.2012թ.

ԲԻԲԼԻԱԿԱՆ ՄՈՄ

Հայաստանի ջուրը
կայծքարի ոգին է:
Ծարավի խոլ հայացքն է
արթնանում
ցողուններում Անսահմանի:
Ժամանակի կեղևից
ծի՜լ է տալիս հորիզոնը:
Քարն իր խորքերի
ծիածա՜նն է բացում
ջրերի կապույտ երակի վրա:
Հավատի խորանում
վառվում է ճանապարհը՝
բիբլիական
մո՜մ:

14.04.2012թ.

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ճանապարհը
դատարկվում է և լցվում,
ինչպես... հյուրանոց:
Արյան երկու կաթիլ՝
երկու նժար,
կշռո՞ւմ են տարածության խորհուրդը:
Անբռնակ վայրկյանները
փնտրո՞ւմ են
հիշողության դռներ:

ՁԱՅՆ ՈԳՈՒ

Զրահապատ լեռների մեջ
արթնանում է ոգին հուշի,
սահմանները կամքի ջա՜հ են,
դիրքապահը՝ պահուստ ուժի:

Հայացքների մո՜մն է վառում
հիշատակի կարմիր քամին,
քանի՜-քանի՜ անմահ անուն,
ոգու երկինք՝ որ մահ չունի՜:

Եվ երազն է հորդում ժայռից,
որպես աղբյուր անմահության,
որպես խորան ու ելք բառի-
տիեզերքն է ստանում նոր ձա՜յն:

Անմահության ա՜ղն է լիզում
տարածությունն անվերնագիր,
լույս է, լույս է, լույս է լեզուն
և թարգմա՜նը ճանապարհի:

17.04.2012թ.

ՀԱՐՈՒԹՅԱՆ ԴՌՆԵՐ

Առասպելից պոկված ոտնահետքերը
լցվում են երկնքո՞վ Ապագայի:
Քարերին փորագրված տառերը
հարության դռնե՞ր են: Արցախը
սկսվում է ճառագայթից արևի
և ճյուղավորվում հողմապտույտում
հիշողության,
որպես ճանապարհ:
Անսահմանի ծաղկաշշուկ ճյուղից
ցո՞ղ է ըմպում ծիծեռնակը:
Քամին ծի՞լ է տալիս
գոգից պատուհանի, ուր լույսը
մորս ձեռքերի աղո՞թքն է…
Հայրս
կարոտի մեկուսարանից
մի դո՞ւռ է բացում
դեպի երկիր…
Հավերժության բարուրներից
հասնո՞ւմ է ինձ մի այրող ձայն…
Հորս վերնաշապիկը
կախարանից կախված
հորիզոն է:
Առասպելից պոկված ոտնահետքերը
լցվում են երկինքո՞վ Ապագայի:

18.04.2012թ.

ԱՍՏՂԵՐ

Տիեզերքի ոգու սլա՜ցքն է բառը,
որ հաղթահարելով միջանցքը լռության,
հասնո՜ւմ է… ճախրանքին հրեշտակների…
Պատերազմի հետքերը՝ բացվող կակաչնե՜ր…
Հրեշտակի լո՜ւյսն է բարձրանում
իմ ուսերի ծաղկող հորիզոնից …
Շրջապատի մութը
ընկնող վարագույր է…
Մենակության հայացքն եմ գլորում,
խանձո՜ւմ
հուշերի խարույկի վրա:
Անսահմանի կափարիչն եմ բեկում
իմ ուսերով,
շարժվում դեպի օազիսը Անհայտության:
Պոկում եմ Անակնկալի ծաղկամանից
մի վա՜րդ.-
դա քո հայա՛ցքն է, սիրելի՜ս…
Սովորության բանտաճաղերից
դուրս են ցցվում
դրոշները ոգու…
Ես՝ հողմի՜ ծաղիկ…
Ճանապարհի ոգին ծաղկո՜ւմ է
իմ թևերին,
որպես աստղեր…

18.04.2012թ.

ԱՆՀՈՒՆԻ ՈԳԻՆ

Ժամանակը ողկույզի պես քամվում է
տողերիս մեջ և դառնում տարե՞րք:
Հաց է ճերմակը ոգու, որով սնվո՞ւմ է
առավոտը գրչի:
Համբույրի քարտեզով
կողմնորոշվո՞ւմ է շունչը:
Մի պատուհան է բացվում դեպի խորքը
Անսահմանի:
Հրեշտակի թևերից կախված բառերը
երկինքնե՞ր են,
որոնց մեջ ծնվում է ոգին Անհունի:

26.04.2012թ.

ՀԱՍԱՐԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋԵՎ ՃՁՄՎՈՒՄ ԵՆ

Մութի փեղկեր,
որոնց միջով ցայտո՛ւմ են բողբոջները լույսի:
Հասարակարգերի միջև ճզմվո՛ւմ են
բևեռները Ոգու:
Անհայտի երակներում պայթող ճիչերը
Ապագայի խաչքարե՛րն են:
Անտարբերության եզրերը կառչում են
թևերից աստղերի,
սուրում,
ինչպես հրթիռներ…

26.04.2012թ.

ՄԵԿՈՒՍԱՐԱՆ - ԺԱՄԱՆԱԿԸ

Դա այն ժամանակն է,
երբ ակնոցներդ դառնում են աչքեր,
իսկ աչքերդ՝ մանկության ճյուղին բուսա՜ծ
բողբոջներ:

Դա այն ժամանակն է,
երբ հենակներդ դառնում են ոտքե՜ր,
իսկ ոտքերդ՝ հիշողության ալիքները ճեղքող
առագաստներ:

Դա այն ժամանակն է,
երբ շուրթերդ դառնում են պատյաններ համբույրի,
իսկ համբույրդ՝ պատրանքի ժայռից հորդացո՜ղ
մենավոր աղբյուր…

Դա այն ժամանակն է,
երբ ժամացույցի սլաքներից կախվում են
օրերը, որպես մի՜րգ,
իսկ մենակությունդ՝ ճանապարհի ձեռքում՝
միա՜կ անցաթուղթ…

Դա այն ժամանակն է,
երբ կեղևաթափվո՜ւմ է քո ճանապարհը,
իսկ խոսքդ դառնում է …
հորիզոնի այո՜ւն:

26.04.2012թ.

ԷԼԵԳԻԱ

1.

Սիրո քաոսից պոկում եմ հույսի մի ծաղիկ
և շուրթերիս մեջ պահում, որպես լռության բա՜ռ,
դու հայացքիս մեջ հալվում ես, որպես հո՜ւշը աղի,
փողոցն իմ աչքերում բացում է հաջորդաբա՜ր
Անհունի երգն անլար, խոտի երկինքն անծայր
և նարնջագույն տարե՜րքը ճերմակ քո ծիծաղի:

Սիրո քաոսից պոկում եմ կրծկալն Անհայտի,
և ստինքիդ լույսից կաթում են տերևնե՜ր սարսուռի…
Ե՞րբ են շուրթերն համբույրի տիեզերքը հատնո՜ւմ…
Ե՞րբ է հոգին սպառում պահուստնե՜րը սիրո…
Սիրո քաոսից պոկում եմ կրծկալն Անհայտի,
որ նարնջագույն տարե՜րքն է ճերմակ քո ծիծաղի:

Լռո՛ւմ է իմ բառը ձայնիդ սահանքներում, լռո՛ւմ է
հետքը ճանապարհի, կծկվո՛ւմ է
իմ հոգին
բռան մեջ տարածության
(Սարկոֆագում իմ
սիրո՜ ու մահի՜ օր է),
անշարժանում է ձեռքս վայելքի հարվածների՛ց,
ցավի երակն է պոռթկում
դռներո՜վ Անհունի …

Մինչդե՞ռ… օդը դառնում է հույսի մի զսպանակ…
Մինչդե՞ռ… աչքերս մարմնիդ երկինքներում անլուր
բացվում են, որպես աստղեր…
Սպիտակ շրջապտո՞ւյտ
արբունքահաս լույսի ցողունի վրա…

Սիրո քառսից պոկում եմ հույսի մի ծաղիկ
և շուրթերիս մեջ պահում, որպես լռության բա՞ռ,
դու հայացքիս մեջ հալվում ես, որպես հո՞ւշը աղի,
փողոցն իմ աչքերում բացում է հաջորդաբա՞ր
Անհունի երգն անլար, խոտի երկինքն անծայր
և նարնջագույն տարե՞րքը ճերմակ քո ծիծաղի:

28.04.2012թ.

2.

Ճանապարհը կառչելով կաթիլներից անձրևի՝
հոտոտո՞ւմ է ստվերը գարնանածիր լռության,
ըմբոշխնում է գույները երկնահաղորդ կտավի…
Ու համբույրի մի վա՞րդ է մնում ձեռքում ակամա…
Կորագծից քո մարմնի օ՞րն է լիզում տերևի
Ճանապարհը՝ կառչելով կաթիլներից անձրևի:

Թո՞ղ ըմպեմ քո մատներից հոսող երկինքն ու ամպը
և հավաքեմ աստղերը, որպես նռան հատիկնե՞ր…
Դիմավորի՞ քեզ ոգու լռության անշեջ լամպը…
Թող… ոտքերիդ գգվանքը սերմերի՞ պես ես ցանեմ
տաք հայացքում իմ արյան-արմատիս ընծա՞ տանեմ…
Թո՞ղ ըմպեմ քո մատներից հոսող երկինքն ու ամպը:

Բլուրներից երազի մի տաք բա՞ռ է լուսանում.
Սեր է անունը նրա, ճակատագիրը՝ ասո՛ւպ…
Անձրևն ոգի՞ է տալիս, հուշերիս խոտերը սանրո՞ւմ,
վա՞րդ է խրում վարսերում այս լուսնահար քամու…
Թո՞ղ ըմպեմ քո մատներից հոսող երկինքն ու ամպը…
Բլուրներից երազի մի տաք բա՞ռ է լուսանում…

Ճանապարհը կառչելով կաթիլներից անձրևի՝
հոտոտո՞ւմ է ստվերը գարնանածիր լռության,
ըմբոշխնում է գույները երկնահաղորդ կտավի…
Ու համբույրի մի վա՞րդ է մնում ձեռքում ակամա…
Կորագծից քո մարմնի օ՞րն է լիզում տերևի
Ճանապարհը՝ կառչելով կաթիլներից անձրևի:

29.04.2012թ.

3.

Ունայնության անդունդ է և՛ քո ընտրած բառը:
Թե մի դո՛ւռ ես բացում՝ հոգում սե՞րն է ավելանում:
Ցավի էջն էլ, թերևս, լռության լերկ մի քա՞ր է:
Դու չե՛ս գրում՝ քեզանից քառսի մե՞ղքն ես վանում:
Թե մի դո՛ւռ ես բացում՝ հոգում սե՞րն է ավելանում:

Ճանաչողության սահման է և այս ծառը:
Անսահմանը սկսվո՞ւմ է թևերից թռչունի:
Ինչին նայում ես՝ անհայտության մի տա՞ռ է:
Մակերեսը թեև դեմք է, բայց դիմագիծ չունի՞:
Անսահմանը սկսվո՞ւմ է թևերից թռչունի:

Կյա՛նքն է հուշում՝ համբույրը Անհունի ծաղի՞կն է:
Ճանապարհը ոչ թե ոտքով, արյան կանչո՞վ են
բացում:
Ցավի քարտեզից, պոետ, այս վիրակա՞պն էլ պոկիր:
Դու փնտրում ես սիրո ասո՞ւպ, դու փնտրո՞ւմ ես՝
բայց ո՞ւմ…
Ճանապարհը ոչ թե ոտքով, արյան կանչո՞վ են
բացում:

Ունայնության անդունդ է և՛ քո ընտրած բառը:
Թե մի դո՛ւռ ես բացում՝ հոգում սե՞րն է ավելանում:
Ցավի էջն էլ, թերևս, լռության լերկ մի քա՞ր է:
Դու չե՛ս գրում՝ քեզանից քառսի մե՞ղքն ես վանում:
Թե մի դո՛ւռ ես բացում՝ հոգում սե՞րն է ավելանում:

29.04.2012թ.

***

Եվ բառերից գլորվում են կափարիչները ոգու,
և ընդլայնվո՞ւմ են սահմանները արձագանքների,
և ինքնորոնման մակերեսը անեզրության դո՛ւռն է,
և հոգեդարձության ակնթարթները ներհայաց աչքե՞ր են,
և բառերից գլորվում են կափարիչները ոգու…

Եվ աստղե՞րն են լվացվում ջրվեժներում իմ ցավի,
և թռչունի աչքերում լուսանում են հասցեներ,
և ձնծաղկի երգերով ոգո՞ւմ եմ եղանակը սերմերի,
և հուշերը դեմք են դառնում, իսկ դեմքերը՝ հիշողությո՞ւն,
և աստղե՞րն են լվացվում ջրվեժներում իմ ցավի:

Եվ տողերիս հետքերը հյուրասենյակի պես բա՞ց են,
և ազատությամբ շնչող քարը ճակատագրիս միա՞կ
շեմն է,
և ասո՞ւպն է հետագիծը ամեն ապրած ներշնչանքիս,
և հոգիս է Ապագայի ազդականչերը որսում,
և տողերիս հետքերը հյուրասենյակի պես բա՞ց են…

Եվ բառերից գլորվում են կափարիչները ոգու,
և ընդլայնվո՞ւմ են սահմանները արձագանքների,
և ինքնորոնման մակերեսը անեզրության դո՛ւռն է,
և հոգեդարձության ակնթարթները ներհայաց աչքե՞ր են,
և բառերից գլորվո՞ւմ են կափարիչները ոգու…

30.04.2012թ.

***

Հարության դեմքը լուսաբա՜ցն է հողի:
Երազների ակունքները նոր երգո՜վ են հղի:
Ճանապարհն ազատվում է դիմակներից,
մղվում դեպի խորքը Ոգու:
Պահո՜ւստ է
երթը մարդու,
հայացքը՝
թռչունի՜ թև,
որից սլա՛ցքն է հանում
ճանապարհն Ապագայի:
Հարության դեմքը լուսաբացն է հողի:
Երազների ակունքները թռիչքո՜վ են հղի:

30.04.2012թ.

***

Իմ վերքերից հառնո՞ւմ են
աստղերը հիշողության:
Մի լույս
ընկնում է օրվա կախարանից,
որպես գլխա՞րկն իմ հոր:
Արևածաղկի շրջանա՛կ,
Երկրի շրջանագի՛ծ,
որից սերմե՞ր է կտցում
ոգին ճանապարհի:

30.04.2012թ.

***

Դիպվածի աչքերից կախված արցո՞ւնք է
իմ ճանապարհը, տե՛ր իմ:
Կարկտածեծ տանիք է իմ ժամանակը,
որի մեջ հասունանո՞ւմ է առավոտը
երազանքի:
Ես քարից հանում եմ հորիզոնը բառի
և կերտում խաչքա՞ր:
Հիշողության քարտե՞զ է
իմ հայացքը, տեր իմ,
որից կաթկթող արյունը
ընդվզումի դաշտ է…
Ես՝ ոգու բևեռների միջև
սուրացո՞ղ ասուպ…

1.05.2012թ.

ՏԵՐԵՎԱԹԱՓՎՈՂ
ՄԻ ԱՆԵԶՐՈՒԹՅՈՒՆ

Ծառերի ժամանակից
թափվում են տերևները
և սլանում թևերին անձրևի
դեպի վախճանակետ:
Քարն իր հիշողության մեջ
տեղավորո՞ւմ է դեռ
տերևաթափվող
մի անեզրություն:

2.05.2012թ.

ՊՍԱԿ

Հիշողությունս պարիսպ է,
որն հաղթահարո՞ւմ է երազանքիս ոգին:
Հայրս մոմ է վառում
խորանում ժամանակի
և լուսավորո՞ւմ ճանապարհիս դեմքը…
Մի պատուհան է բացվում
դեպի անհայտություն…
Ավերակներում բուսած ծաղիկներից
քաղո՞ւմ եմ առավոտը ներշնչանքների,
որպես պսակ դնում գագաթին
Անեզրության:

2.05.2012թ.

ՈԳՈՒ ԾԱՂԻԿ

Ճշմարտության տարերքի մեջ
ծաղիկնե՞ր են բացվում Ոգու,
լռությունն է դառնում սենյակ,
հուշը՝ կամուրջ ու օազի՞ս,
ճանապարհը հասցեն է մեր,
որով հայի երթն է տոկուն,
պատմությունը բազմադարյա
հարությո՞ւնն է, որ Մասիսի
ցավից ձյունե շերտն է պոկում՝
վիրակա՞պը անգայթ Ոգու:

3.05.2012թ.

ԱՀԱԶԱՆԳԸ

Եվ երազի պատուհանից հորդեց ճիչը ճակատագրի:
Իմ ձեռքերից բուսած առավոտը
ազդարարեց հոգեվա՜ղքը
գագաթների:
Զոհասեղան չէ՛
հայացքը հիշողության,
այլ՝ հարության ծի՜լ,
որից երկինքներ խմեց ճանապարհի ոգին:
Վարագույր չէ՛
բառը, այլ
ժամանակի
զարկերա՜կ:
Անտարբերության բևեռներում
արթնացող ահազա՜նգ է
ոգին խաչքարի:

4.05.2012թ.

ՃԱՆԱՊԱՐՀՍ

Ոտնահետքս թփրտո՜ւմ է
որոգայթում մենակության,
ինչպես ձուկ:

Դեմք է ստվերս,
ու անկում է,
ու երա՜զ է ամեն մի ձայն…

Ճանապարհս՝
մի սերմացո՜ւ,
որ նետել եմ
ակոսի մեջ հիշողության:

Ես չկա՞մ:
Թե ժամանակի զոհարա՜նն եմ...
Պտտահո՜ղմը երազանքի…

Հիշողության աչքերը
գլորվում են,
որպես արցունք,
և տիեզերքի անհուն ոգու
արձագա՜նքն է
ճանապարհս:

5.05.2012թ.

ԿԻՆԸ

Կինը՝
ժամանակի ողկույզից քամվող
անեզրությո՞ւն…

Կինը՝
ճակատագրիս աչքերը գոցող
անհայտության
մի կափարիչ…

Կինը՝
ծիծեռնակի թև,
ու հարատև
առեղծվածի մի շատրվա՞ն…

Կինը՝
լռության շերտ,
ականապատ հիշողությո՞ւն,
անեզրության թարթիչներից
կախված երազ
ու
մահի
սե՞ռմ…

5.05.2012թ.

ԲԱՌԸ

Բառը՝
ճշմարտության կողմնացո՞ւյց:
Միֆի դուռ:
Անհայտության մի կափարիչ,
որ գլորվում է
ներշնչանքի ճերմակ տողի վրայով…

Բառը՝
լռության անի՞վ:
Եվ ճանապարհի ակնախոռչում
շարժվող
հիշողության բիբ…

Հորիզոնի կեղև՞:
Խոտի երազա՞նք:
Անսահմանի զոհասեղա՛ն:
Ժամանակի դարպասները բացող
Անհունի ճի՛չ:

5.05.2012թ.

ԽԱՉԸ

Խաչը նժարն է ներդաշնակության,
ներսը և դուրսը ասպարե՜զն են հոգու,
բառի անհայտից երկինքնե՜ր են հորդում,
ոգու անհունից սևեռվում է մի ձա՜յն:

Բառի անհայտից երկինքնե՜ր են հորդում,
ոգու անհունից սևեռվում է մի ձա՜յն,
ներսը և դուրսը՝ ներշնչանքի խորան,
որոնում եմ մի դուռ կանչերո՜վ արյան.-

Խաչից ելնո՜ւմ է դեմքը ճանապարհի,
խաչից ելնո՜ւմ է տարերքը հույսի,
ես մի մոմ եմ վառում խորանում բառի,
ո՞վ է նժարում անդունդը լույսի,
ոգու անհունից սևեռվում է մի ձայն,
խաչը նժա՜րն է ներդաշնակության:

6.05.2012թ.

ՀՈՒՅՍԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Կյանքի շրջանակը ճեղքում է մի երազ
և ճանապարհի շուրթին բացվում, որպես ծաղիկ:
Կանգառն իմ ընթացքը խթանո՞ւմ է,
որպես տողը հույսի,
խոստովանությո՞ւն է լռության շերտն անգամ…
Ներշնչանքի դուռն է
անհասցե օրորվում
ձեռքերում հիշողության:
Եվ հիշատակի հողմապտույտում
բացվում է ճանապարհը,
որպես վա՞ղդ:
Հորիզոնի ճյուղին ծլվլում է մի բույն
և երկինքներ կտցում
ափից ժամանակի:
Ցավի զսպանակից
դուրս է թռչում օրը,
որպես հույսի հասցե՞:

6.05.2012թ.

ԱՐՄԱՏԻ ՕՐԸ

Առասպելի ոտնահետքից ցայտող
մագաղաթի՝ բուրմունք:
Գրիչս ճանապարհի շնչառությո՞ւնն է,
որ ի մի է բերում լեռան գագաթին
արմատի օրը:
Ինքնամաքրման խորանում
տեսիլքի դուռն է բացվում…
Ճակատագրի աչք:
Երակի հորիզոն:
Տրիոջ դե՞մքն է լուսանում
Ճյուղերին հարության:

6.05.2012թ.

ԵԼՔԸ

Ճանապարհի բիբը
պատմության շեմն է:
Եվ ժամանակի կեռերից
կախված են դեմքերը,
ինչպես... հագուստնե՞ր:
Եվ վայրկյանների քարե ուսերով
փոխանցվում է սերնդեսերունդ
լո՞ւյսն հիշատակի:
Ընթացքի վիհը
լցվում է
թռիչքով ոգու.
տառապանքի՞ փեթակ:
Ճանապարհի բիբը՝
ե՞լքը տիեզերքի:

7.05.2012թ.

ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈԳՈՒ

Բառերն իրենց ներկայությամբ
բացո՛ւմ են դռներ…
Բառերն իրենց հիշողությամբ
արթնացնում են
լույսն հորիզոնի,
որպես լեզո՛ւ …
Ճանապարհն աչքերն է թարթում
գագաթին լեռան:
Բառերն իրենց բացակայությա՛մբ
բացում են դռներ…

7.05.2012թ.

ԱՍՏԾՈ ՕՐԸ

Գրիչը տեսիլքի դուռն է բացում,
որ դիմավորի՞ Աստծո օրը…
Ճակատագրի աչքը՝
ընկնող մի ասո՞ւպ…
Կյանքի շրջանակից դուրս
արարվում է տողը,
որպես հիշողության ճանապարհ,
որը ներծծո՞ւմ է
ոտքերիս առասպելը:
Ոգու պահուստներից
ճախրում են թռչունները,
որպես չգրված երկերի վերնագրե՞ր…
Լռության խորանում
վառվում է մոմը,
ինչպես սպիտակ տո՞ղ…
Կյանքի սահմաններից դուրս՝
հայացքի թրծարան,
ուր խլտրում է ճակատագրի աչքը
և մի տո՞ղ թռցնում
միջանցքից Անհունի…
Գրիչը տեսիլքի դուռն է բացում
և … դիմավորո՞ւմ Աստծո օրը…

8.05.2012թ.

ՈՒՂԵԿՑՈՂ ՍԵՐ

Ժամանակի սիրուց բխում են թևերը գարնան
և բառավորո՞ւմ շնչառությունը տիեզերքի:
Շուրթերի համբույրը խշշում է տերևներով
լռության:
Մեղուների դեղին թռիչքը
ներշնչանքի դո՞ւռ է:
Համբույրների բևեռներում
լուսանո՞ւմ է հուշը,
որպես ոգու հասցե:
Մի աղջիկ է քայլում փողոցում,
որպես ցողունն արշալույսի:
Համբույրի հետքն է տանում շուրթերին-
լռության զոհասեղան:
Ուղեկցող ճանապարհի շնչառությունից
բուսնում է ստվերս,
որպես ծաղի՞կ…

11.05.2012թ.

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ծառի հայացքը շի՞վ է արձակել
ձեռքերիս երկնքում,
ուր հասունանում է աստվածային խորհուրդը,
որպես պտո՞ւղ…
Ցավի ծրարից հանում եմ մի երկտող
և դնում ժամանակի պարապի վրա,
որպես ոգու ձա՞յն:
Հիշողության բառերը ըմպում են իմ ափից
ցողը երազի,
որպես ապսպարա՞նքն Աստծո:

8.05.2012թ.

ՈԳՈՒ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Բառի աչքերը փնտրում են երակն Անհունի
և գտնում… հայացքիս բաբախո՜ղ տողը…
Լռության դռները
թոցնո՜ւմ են հասցեներն Անհայտի,
որպես թռչուններ…
Հորիզոնի ակնթարթը՝
ճանապարհի բիբ…
Ինչ-որ մեկը
գրում է իր տողը
ժամանակի սահմաններից դուրս…
Հիշողության կանչը՝
ոգու լաբիրինթոսում ուղեկցող լո՜ւյս…
Պոեզիայի տարածքներն ընդլայնվո՜ւմ են
հայացքով ժամանակի…
Ժամանակն՝ ինքն իրենից դո՜ւրս է…
Բառի աչքերը փնտրում են երակն Անհունի
և գտնում… հասցենե՜րը ոգու…

9.05.2012թ.

ՆԵՐՇՆՉԱՆՔԻՍ ԴԵՄՔՈՎ

ճանապարհս պատյանն է ազատության,
իմ ընթացքի մեջ աղոթո՞ւմ է սկիզբը,
և կողմնորոշվում են այուները լռության
ներշնչանքիս դեմքո՞վ…

Անձրևի կաթիլները՝ ճակատագրի բիբեր,
որ գլորվում են ճանապարհիս ուսերն ի վար,
և երկինքն է լցվում վայրկյանների գուբը,
խանդի կարմիր ամպն է որոտում հողմահար:

Երազանքիս ափում ծլո՞ւմ են բևեռները,
երազանքիս ափում՝ համբույրների ցողուն,
որ օրորվում է, ի մի բերում երկինքները...
հավերժության հողո՛ւմ:

11.05.2012թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

Ոգու կախարանից
կախված օրորվո՞ւմ են
դեմքերն հանրահայտ…
Մատներից կաթկթող
արյան կաթիլները
Հարության թռչունն՝ե՞ր են…

11.05.2012թ.

ՁՄԵՌՆԱՄՈՒՏԻ ՄՐԳԵՐԸ

Լեռան գագաթից
կախվել է ճանապարհը,
որպես մենախոսությո՛ւնն աշնան:

Ծառն իր մերկ ճյուղերով
ընդունում է ժամանակի
մարտահրավերը,
իսկ ճնճղուկները նստել են
ճյուղերին,
որպես ձմեռնամուտի մրգե՛ր…

11.05.2012թ.

***

Տան դռները բացվում են,
ինչպես մանկան լեզո՞ւն…
Հարցերը կախվում են
կախարաններից,
ինչպես հագուստներ,
իսկ պատասխաններն անէանո՞ւմ են
փուչիկներում ինքնաորոնման:
Ճանապարհի դռները ծեծում են
հասցենե՛րը ոգու…

14.05.2012թ.

ԲԱՌԵՐԸ

1.
Բառերն համառորեն փորում են երազներ...
Ո՞վ է տնկել ծառն այս վերջին…
Կյանքի սահմաններն անէանո՜ւմ են
և պայթում ժամանակից դուրս,
որպես փուչիկնե՜ր:
Ճանապարհի ակնախոռոչում՝
հույսի մոմ:
Բառերը փորում են… խրամատնե՜ր…

14.05.2012թ.

2.
Բառերը պայթում են սերմերո՜վ լռության:
Բառերը սնվում են արշալույսո՜վ Հարության:
Բառերը ծնվում են, ապրում և ապրեցնո՜ւմ
ոգով բանաստեղծի - լույսո՛վ Հայության:

15.05.2012թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ապագայի ճիչով
բացահայտվում է դեմքը քաղաքի,
ուր ապրում է բանաստեղծը՝
կողմնորոշվելո՞վ
բառերի ներքին ուղեցույցով:
Հիշողության քարտեզին հպում է մատը.
այդպես արևի շողն է հանում հողից
ծիլ ու ծաղիկնե՞ր:
Անհայտի պատուհաններում
ակունքվո՞ւմ է
լույսը ներշնչանքի:
Բանաստեղծի ճանապարհը
ազատության շե՞մն է,
ոգու վանդակներից
ազատվո՞ւմ են
լռության հրեշտակները:
Անհայտի ամեն տողը
ոգու հենարան է:
Ճանապարհների անդունդում
գլխատվո՞ւմ է
արշալույսը հայելիների:

16.05.2012թ.

ԿՏԱՎ

Խրամատի վրա կախվում է
ճակատագրի նշանը,
որպես հրեշտակի թևեր,
որոնք համբուրում են
ճակատը զինվորի՝
ջնջելո՞վ քարտեզը
ցավի և …ոխի:
Ժամանակը, որպես
նժարներ ոգու,
տարուբերվում է
խաղաղությունից
մինչև… պատերազմ:
Բևեռների բռունցք՝
արյան պատվանդանին:
Ազատության ճիչ-
հիշողության խարի՞սխ:
Պատմության աչքերում՝
երազների երամ:
Խրամատը, որպես
խղճի զոհասեղան,
համբարձվո՞ւմ է
հորիզոնն ի վեր…

16.05.2012թ.

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՌԵՐ

Ես քայլում եմ ուռկանի մեջ ստվերիս
և բառերով… որսո՜ւմ ազատության քայլեր:
Ներշնչանքն ինձ երբեմն հանում է
ուռկանից ստվերիս
և տանում Ապագայի թևերի վրա:
Ցավի մեջ հնչող զանգի ղողանջներից
արթնանո՜ւմ է հորիզոնը…
Ոգու ժամանակի ջրվեժներով
հոսում են տողերը՝
որպես ձկներ,
և ըմպում աստղալո՜ւյսը Անսահմանի:
Կոճկված լռության բաճկոնից
հանում եմ ներշնչանքի աղավնիներին
և թռցնո՜ւմ երկինք…
Կապույտը դառնում է հույսի ավազան:
Երջանկության թարթիչների վրա
թրթռո՜ւմ են
թևերն Անսահմանի
(ոգու սո՞վ է, թե խթան ճանապարհի):
Ես քայլում եմ ուռկանի մեջ ստվերիս
և քայլերով… որսո՜ւմ ազատության բառեր:

17.05.2012թ.

ԱՐՑԱԽ

Ճշմարտության դեմքից ընկնող դիմակ էին
Ժամանակները խառն՝ իրենց նիստ ու կացով,
հետո փլուզվեցին ամբարտակներ ոգու,
խարույկնե՞ր բռնկվեցին հայացքների կայծով:

Արցախն իբրև երազ, Արցախն իբրև երդում,
պատանդված մի կնիք էր ճակատագրի էջին,
առագա՞ստն էր բացում քամիների վերքում
և դուրս թքում խորքից գերության սույլը վերջին…

Հիմա երկիրը այս-ամրոց ազատության,
հիշողության դուռ է, ըմբոստության կայծակ,
կողմնացո՞ւյց է ցավի-բիբլիակա՞ն մի ձայն,
արդարության կամո՞ւրջ-անմահությա՞ն մի ծառ:

14.03.2012թ.

ԻՆՔՆԱՀԱՆԴԻՊՄԱՆ ՏԵՍԻԼԱԺԱՄԻՆ

Մենակության ձեռքում
բանալի է
ոգին: Արյունս
կաթում է պատվանդանից կուռքի,
որպես ճակատագրի աչք: Մի ձեռք
բռնում է Անհայտի վերքերից ճախրող
աղավնին
և թռցնում հորիզոնն ի՞ վեր:
Անհունի
կափարիչն է ընկնում իմ գլխին,
որպես բառ,
որից ազատվելը առնվազն հերոսությո՞ւն է…
Եվ բռունցքվող ցավից կաթում է
աչքը
հորիզոնի,
որպես արյան կաթիլ,
որով գրելն արդեն
խելագարությո՞ւն է...
ինքնահանդիպման տեսիլաժամին:

17.05.2012թ.

ԱՐՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

(Բանաստեղծություն՝ գրված 13 քոպեում)

Ձեռագրերի համբույրը
լռությունն ընդունում է, որպես ծաղիկ:
Բառերի միջև լուսացո՜ղ օր է
ներշնչանքի հայացքը,
որ փակցվում է դռներին վաղվա,
որպես լուսա՛զդ: Աներևույթ
հող է
շնչառությունը տառերի,
որ լցվում է իմ մեջ,
խտանում,
որպես
հիշողությո՜ւն արյան:

17.05.2012թ.

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՈԳԻՆ

Պատմության ե՞լք է
հիշողության ավազանը,
ուր թռչկոտում են ճնճղուկները հույսի:
Ոգևորության լույսը մի դրոշ է հանում
կամքի անձավից
և տնկում երազի ձյունոտ գագաթին:
Դրոշն այդ ծա՛ռ է,
որ պիտի աճի՝
ոգու աներևույթ շիվեր արձակելո՞վ
Միասնության կապույտ երկնքի տակ:
Բազկի շարժումը
կամքի դուռ է բացվող:
Հիշողության հացը
Անցյալի դե՞մքն է,
որով սնվո՞ւմ է ոգին ճանապարհի:

18.05.2012թ.

ՋՐՎԵԺ

Վարսահյուսքերին թափվող ջուրը
բացվում է,
ինչպես վա՜ղդ:
Ջրվեժն
երկնքով փաթաթում է
մարմինն աղջկա՝
ստինքի պտուկներից կլանելո՜վ
հասցեները...
Քարե օրվա մեջ կանգնած՝
լողանո՜ւմ է հրեշտակը,
իսկ նրա ոտքերից խոտերն ըմպո՜ւմ են
շիթերն աստղերի:

19.05.2012թ.

ԿՏԱՎԻՑ ԴՈՒՐՍ

Հորիզոնի կտավից
սահում են գույները,
որպես անձրևի ծաղիկներ,
որ կայծկլտում են
տարածության բիբերում՝
ներքաշելո՞վ
մեղուների թռիչքները
դեղին:
Քաղաքի մենակության հատիկնե՞րն է
կտցում
անցորդն իր քայլերով:
Քամիների
դալար ցողունի վրա
օրորվում է
օրը,
որպես
արևածաղիկ:
Ինչ-որ մեկը
չրթում է
տառապանքի սերմերը
և դո՞ւրս նետում թեփը
հանդիպակաց
լռության
դեմքի՛ն:

18.02.2012թ.

ԱՐՅՈՒՆՆ ԱԲՍՈՒՐԴԻ

Տերևների թռիչքը
քամիների թևերին-
համբույրների հասցե,
որ որոնում է դռները ոգու: Մի ձայն
թեքում է ուղղությունը լեռնագագաթի,
ուր բռնկվում է լուսայգն Հարության:
Խոսքի ակունքներին սեղմվող հրեշտակները
լռության աղբյուրնե՞ր են բացում
թևերի երկնքում:
Մի լույս
ներշնչանքի նշանն է տարուբերում
տողերի դալար ցողունների վրա:
Հիշողության ոլորտում
թփրտում են թռչունները երազանքի,
որոնց կտուցներից կաթկթում է
արյո՞ւնն աբսուրդի:

19.05.2012թ.

ՀՈՒՍՈ ԱՍՏՂ

Դատարկության արցունքներով
լվանում եմ
հոգինե՞րը աքսորյալների:
Փրկելով երազը ճանապարհի՝
վառում եմ,
որպես ջահ:
Հիշողության լուսանցքներից
դուրս եմ
նետում
բառերի որոգայթները
և որոգայթների բառերը,
որոնց մեջ բզկտվելով,
կոփվե՞լ են
ճակատագրերը ճանապարհների:

Ընդունի՞ր արևի ճառագայթը,
հեռավոր անցորդ,
որպես վարդ,
և շնչիր օդը, որպես վերնագի՞րն այս
բանաստեղծության:

20.05.2012թ.

ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵԼՔԸ

Ճակատագրի աչքերում լողում է
ունայնության դե՛մքը՝
բնության մեծ ե՞լքը:
Սերը իմ շուրթերից վանեց
համբույրի նժարը,-
ունայնության դե՛մքը՝
բնության մեծ ե՞լքը:
Անհունի ձեռքերում թփրտում է
ոգուս թռչունը-
ունայնության դե՛մքը՝
բնության մեծ ե՞լքը:

20.05.2012թ.

ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՇԵՄԸ

Հայացքս դռան պես բացեց մի աղջիկ՝
լուսավորելո՞վ միակ ժպիտով
հատակը
երկվության:
Ետ քաշեցի
ձեռքս
բռնակից օրվա,
ինչպես լույսից մեղքի…
Քամին
ձեռքերի մեջ
տնտղելով մի գանգ՝
զննո՞ւմ է դատարկությունը
տիեզերքի:
Ճանաչողության շեմը
աշխարհից այն կո՞ղմ էր…

20.05.2012թ.

ԵԼՔԸ

Ներշնչանքի ճիչը
աներևույթ աշխարհի միակ ճանապա՜րհն է:
Բառերի երազները կլանո՜ւմ է
բառարանը
դաժան երախով անորոշության:
Կանչերի հորիզոնից սուրում է
կաթիլը արյան,
որպես ճանապարհ...
Եվ շնչառության լեռան գագաթին
բացվո՜ւմ է
ելքը տիեզերքի:

20.05.2012թ.

ԽԱՂ

Օ՜, մայր, դու շե՛մն ես իրականության:
Օրը գնդակ է,
որով խաղում եմ,
իսկ երբեմն էլ՝ ուժգին
հարվածում
աներևո՜ւյթ
մահի սպիտակ դարպասին:

20.05.2012թ.

***

Վայրկյանների գագաթներին տրոփում է սիրտս:
Վայրկյանների միջև անդո՞ւնդն է ճակատագրի:
Վայրկյաններից դուրս… վերածնվո՞ւմ է տիեզերքը:

20.05.2012թ.

ՈԳՈՒ ԿԻՐԱԿԻ

Եվ մենակության վարագույները
բացում են բողբոջները լույսի,
սիրո հետքերից բռնկվում են
ծաղիկները համբույրի,
վառվում,
որպես ջահե՛ր:
Ինքնամոտեցման լաբիրինթոսում
թփրտում է ճանապարհը,
ինչպես ձուկ:
Ծարա՜վն է բխում ստվերից ելքի:
Անտարբերության բոլոր փողոցները
տանում են դեպի փակուղի:
Հիշողության ձեռքերում օրորվում է
երկիրը,
որպես
արևածաղի՜կ:
Մի բույն է ընկնում ճյուղից ճառագայթի,
և ընկնում է թռչունների պայծա՜ռ
աղաղակը:
Մի նոր սկիզբ է հենվում
ցողուններին կյանքի,
որպես
ոգու կիրակի՜:

21.05.2012թ.

ԻՆՔՆԱՄՈՏԵՑՄԱՆ ՎԻՀԸ

Խանդի պատյան: Պարկուճ
արցունքի: Ազատության
վիհ,
որից ելնո՞ւմ է դեմքը
դատարկության: Երազները
կառչում են գագաթներից
հավատի
և օրորում ոգին ճանապարհի:
Մենակության ցողունն ի վեր
բարձրանո՞ւմ են
ակնթարթները
հոգեդարձության:
Ճանապարհների թևերի վրա
սուրո՞ւմ են
երկինքներն ապաշխարության:
Թե տո՛ղն է հասցեն տիեզերքի,
դարձրու այն դե՞մքը
լռության, ոգու պայծառ
ճիչը,
ինքնամոտեցմա՞ն վիհը,
որից համբառնում են
հրեշտակնե՛րը
Անսահմանության:

22.05.2012թ.

ԸՆԹԱՑՔ

Խիղճը՝
հայացքի խորան,
ուր վառվող մո՞մ է
իմ լեզուն:
Ոգու տիեզերքի դուռն է
բառը,
որից ավի՞շ է ստանում
հիշողության արմատը:
Ժառանգականության պատուհանից
ողջունում է ինձ
դարը,
որպես ծաղկման,
ուր աճո՞ւմ է
հիշողության ներկան:
Ապագան միշտ բացակա՞ է,
և դա՛ է նրա ներկայության խարիսխը:
Ժամանակի բևեռների միջև
քայլող լաբիրինթոս է
մարդը-
ե՞լքը
տիեզերքի:

22.05.2012թ.

ԿԵՐՊԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԸ

Փողոցը՝
ժամանակի բևեռների միջև լողացող
մի նավակ է,
որ հիշողության տարե՞րքն է ճեղքում
թիակներով տենդի:
Ալիքների հասցեները կտցում են
թռչունները,
իբրև ձկներ,
և վե՞ր հանելով,
ամպերի ջրավազաններում
սկզբնավորո՞ւմ են
սերմերի ժամանակը:
Կերպափոխության նորագույն շրջանը
հո՞ղ է կորզում
քառսից Ոգու:

22.05.2012թ.

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆ

Քաոսի երախից փրկո՞ւմ եմ բառը,
քաոսի երախից փրկո՞ւմ եմ անունը տարածության,
ժառանգականության սյուներին վառում եմ մոմեր՝
լուսավորելով ճանապարհն Աղոթքի:
Հայտնության արմատներից սնվո՞ւմ է իմ ոգին:
Խաչքար է դեմքը Անհայտի: Միտքը՝ կրակարան:
Հոգևոր արժեքներից հանո՞ւմ եմ վանդակները:
Փրկության տառերում վառում եմ իմ շունչը,
որպես խարո՞ւյկ:
Ազատության խոտերի ցո՞ղն եմ համբուրում:
Համբույրս՝ թռչող թիթե՞ռ:
Համբույրս՝ տարածության բաբախո՞ղ հասցեն:
Անհոգի երգի երախից փրկո՞ւմ եմ բառը:
Անհոգի երթի երակից փրկո՞ւմ եմ
անունը տարածության:
Անցորդները՝ ժամանակի բևեռներ,
որոնց միջև ծնվում եմ, որպես փրկությա՞ն տող,
շարժվում, որպես սլաք,
հայտնաբերվո՞ւմ,
որպես տարածության անու՛ն:

23.05.2012թ.

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԼԱՐԵՐԸ

Հաղորդության լարերից բուսնում են ծաղիկնե՞ր:
Հաղորդության լարերը թրթռում են,
ինչպես հորս դիմագծե՞րը՝
լուսադեմին:
Նարնջագույն մի խա՞ղ է արթնանում
ժամանակի կեղևի տակ,
բարձրանում ճյուղերն ի վեր,
որպես ոգու ավի՞շ:
Քարերն իմ անունն են առնում շուրթերին,
որպես աչքալուսանքի՞ բառ:
Քարերն իմ անունով բարևո՞ւմ են խոտերին,
և խոտերն ապրում են համբույրն Անհունի,
դառնում Անսահմանի բաբախո՞ղ մասը…
Քարերի հայացքն իմ մեջ բացահայտո՞ւմ է
Անհայտի դուռը…
Հաղորդության լարերից բուսնում են ծաղիկնե՞ր:
Ժամանակի բևեռների միջև քայլում է իմ ստվերը,
ինչպես հայելի,
որից ընկնող իմ դեմքը
ամփոփվում է հողում,
որպես հիշողության սե՞րմ:

24.05.2012թ.

ԻՆՔՆԱՈՐՈՆՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ

Ճանապարհների անձրևն է մաղվում
ամպերի բլուրներից,
և մասրենու թուփը կարմիր կաթիլնե՞ր է
ըմպում
ափից առեղծվածի:
Քամիների փողկապներից ազատվում է
անձրևը
և հենվելով ծառերի ողորկ բներին,
դառնում հաղորդության սյուն:
Ներշնչանքների ազդանշաններն են խրվում
հողի մեջ՝
լուսանցք բացելով
ոգևորության կանաչ առանցքում:
Ուր որ է՝ կլսվի՞ ձայնը Արարիչի…
Բառերի խորքից կկոցած աչքերով
կնայի՛ ինձ լռությունը…
Ինքնաորոնման սահմաններից դուրս…

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՍՑԵՆ

Կինը՝ ճանապարհի հասցեն,
որ լուսանում է դռներին հիշողության
և շարունակվում որոգայթում ցավի:
Աչքերիս ողկույզն է քամվում
պատվանդանին լռության,
և աչքերիս հյութը բարձրանում է
նրա ոտքերն ի վեր,
ստինքի պտուկներից կաթում է
մենակության արմատին:
Կինը՝ ճանապարհի հասցեն:
Անորոշության
բռունցքով
ջարդում եմ
դեմքը լռության:
Եվ երջանկության թարթիչների վրա
նվագում եմ հասցեն ճանապարհի
և անհետանո՞ւմ ստեղներում հիշողության:

25.05.2012թ.

ԻՄ ԴԵՄՔԸ

Տառապանքի ոտնահետքերում
լուսանո՞ւմ է
իմ դեմքը:
Այլևս չեմ կարող ապրել
մենակության որոգայթում,
ուր հիշողության ճերմակ ծվեները
վիրակապե՞ր են...
Կբարձրանամ իմ արմատներից,
որպես ցավի՞ լույս:
Հիշողության պատվանդանից
ընկնող օրը
կուռքի ստվե՞րն է,
որ կորոնի իմ դեմքը՝
ե՞լքն ազատության:
Ոգու պտտահողմում
կբացվե՞ն
մենակության ծաղիկները:
Ես կա՛մ և չկա՞մ:
Տառապանքի ոտնահետքերում
լուսանո՞ւմ է
դեմքը ճանապարհի:

25.05.2012թ.

ՎԱՌՎՈՒՄ ԵՆ ԹՌԻՉՔԻ ԱՍՊԱՐԵԶՆԵՐԸ

Եվ ճանապարհիս աչքերը գլորվում են
բարձունքից ոգու,
ինչպես եկեղեցիներից՝ զանգե՞րը…
Եվ ստվերների մեղքերն իջնում են
զարկերակի վրա հիշողության
ու ճնշո՛ւմ, ճնշո՛ւմ…
Թռչունի արցունքներից թևածում են
բները-
հառաչանքը երկնքի…
Եվ թռչնագրիպի սահմաններում տիրում է
մի նժար –
անդո՛ւնդը հույսի…
Եվ Երկրի դիմագիծը չընթերցվո՞ղ գիրք է,
որի էջերը վառվում են հետզհետե…
Եվ վառվում են ասպարեզնե՞րը Թռիչքի…

19.06.2012թ.

***

Սահմանագծերը ջնջվում են ափում Ճակատագրի
և դառնում ածո՛ւխ խրամատներում Ապագայի:
Մի ծաղի՛կ է բուսնում Տագնապի լուսանցքներում:
Լռության կառափնարանից ընկնում է գլուխն
Անսահմանի:

19.06.2012թ.

ԱՌԱՆՑՔԸ

Տողերի էկրանին բացվում է
դեմքը ճանապարհի,
որ սկզբնավորո՞ւմ է գործողության ելքը…
Ոխի խավարը բեկվում է սուսերով լույսի:
Մի կարմիր ճիչ կա
արմատներում ոգու:
Անհայտի ցողունով բարձրանում է տեսիլաժա՞մը:
Լույսը արթնացնում է ներդաշնակության
առաջին տողը:
Ժամանակի դեմքը՝
արտասվոր մի հայտ,
որ մոմե՞ր է վառում
հիշողության պատարագներում:
Խորքն իր ցողունով համբուրո՞ւմ է
ճառագայթն արևի:
Ոգեղեն մի առանցք,
որի շուրջը պտտվում է
երկիրը բանաստեղծության:

26.06.2012թ.

ԲԵՌՆԱԿԻՐԸ

Բեռնակիրն էի ես հիշողության
և տանո՞ւմ էի իմ ուսերին լռությունները
պատվանդանների:
Գաղափարի մեջ ճոճվող կախաղանն՝ը…
Տարածության վանդակում՝ մա՞ղն է…
Ազատության ճյուղին նստած՝ քրքջո՞ւմ է
դատարկությունը…
Հիշողության հետքերը
անիվների տակ
ճզմվող աչքե՞ր են…
Ճանապարհի հոգին թփրտո՞ւմ է ոստայնում ոխի…
Հարությունը՝ բառի մեջ ապրող մի պատա՞նդ է…
Բեռնակի՞րն էի ես հիշողության…
Մոռացության գագաթներից պոկում եմ օրերը
և ձնագնդի պես նետում թիրախներին Անհայտի…

26.06.2012թ.

ՀԱՎԱՏ

Իմ հետքը՝ միջակետ հույսի:
Իմ հետքը՝ հիշողության պորտալարից սնվող
ներդաշնակությո՞ւն: Իմ բառը՝ բաբախո՞ղ հոգի:
Այս շրջադարձով բացահայտվո՞ւմ է տողերիս
դեմքը: Արմատներիս համանվագով
բացահայտվո՞ւմ է
դուռը երազանքիս: Լույս,
որ մահից հետո՞ է գալիս:
Ճանապարհի
ոգի, որով կողմնորոշվո՞ւմ է ձայնը
խղճի: Տարածության
ելք,
որ բանաստեղծության բաղձալի դո՞ւռն է…
Երազի աչք է ճանապարհը,
որով տեսնողը՝ կուրանո՞ւմ է
Երկիրի և Երկնքի միացման կետում,
դառնում սե՞րմ կյանքի - հավերժության
շե՛մ:

20.06.2012թ.

ԻՄ ԳՈՐԾԸ

Ես ցույց եմ տալիս ժամանակը Անսահմանի:
Ես մաքրում եմ խիղճը լույսով Հիշողության:
Ես կարկատում եմ տողով գորգը Տառապանքի:
Եվ առեղծվածի բիբերում բոցկլտո՜ւմ է տիեզերքը
Հոգու:

15.06.2012թ.

ԱՄԵՆ ՎԱՅՐԿՅԱՆ

Ամեն վայրրկյան
աշխարն աշխարհին հրաժեշ՞տ է տալիս,
ամեն վայրկյան
աշխարհը հայտնաբերվո՞ւմ է մի նոր աշխարհով:
Լռության բևեռը կողմնորոշվում է բևեռով
Ձայնի:
Լեռան գագաթին
ծնվո՞ւմ ու մեռնում է բիբլիական նկարագիրը:
Ամեն վայրկյան
Ամբողջն իր առանցքից դուրս է գալիս
և վերադառնում,
որպես մասնիկը
ներդաշնակության:
Իմաստը բացում է մի դուռ և փակում մի ա՛յլ
դուռ:
Ամեն վայրկյան:
Աշխարհի որ կողմից էլ նայում ես, տեսնո՞ւմ ես
մի կետ.
Բանաստեղծությունը ոգի՛ն է Անսահմանի:

20.06.2012թ.

ԽԱՉԸ

Խաչից սահում է դեմքը տառապյալի…
Պատվանդանների լռությունը գլխատվո՞ւմ է
սրով հորիզոնի:
Կախաղաններից հարությո՞ւն է առնում
ազատության ոգին:
Ոտնահետքի կայծա՛կ:
Ձեռքերի աղո՞թք:
Խոսքի զոհասեղա՛ն:
Հիշողության անտառները հրդեհվո՞ւմ են
կանթեղից Լուսավորչի:
Խաչից սահում է դեմքը տառապյալի…
Եվ ճանապարհի ձեռքը
կերտում է իմ շունչը
կայքէջում ժամանակի:

20.06.2012թ.

ԴՌՆԵՐԸ

Ահա դռները Պոեզիայի,
որ ծեծո՛ւմ է աներևույթ ձեռքը ճանապարհի:
Ժամանակի բարո՞ւրն է
բառը՝
որ սահո՞ւմ է բառարանից
դեպի գիրկն Ընթացքի:
Տեսիլաժա՞մ է
դեմքը բանաստեղծի,
որով մուտք է գործում շնչառությունը
Տիեզերքի:

20.06.2012թ.

ԱՆՀՈՒՆԻ ԳԱԳԱԹԸ

Կանգնում եմ ես գարնան սևեռուն հայացքի դիմաց,
և աչքերս ծաղկում են համբույրների՝ նման:
Ճանապարհիս ընթացքը ստեղնավորո՞ւմ եմ
Ճակատագրի նշաններով:
Տառապանքի գագաթին
անվերծանելի երա՞զն է,
որ բացում է իմ դիմաց դուռը սիրո…
Անհայտությունը խայտում է ծիծեռնակի թևերով
և ստիպում ինձ՝ ապրե՞լ…
Անհունի լռությունը թարգմանո՞ւմ է մի ձեռք:
Իմ աչքերից գլորվո՞ւմ է կափարիչը հուշի:
Եվ թռչունները ներս են խուժում
հախո՞ւռն աղմուկով…
Անտանի՞ք ժամանակ:
Իմ և Աստծո միջև ձգվո՞ւմ է պատարագը…
Անհունի գագա՞թը…

21.06.2012թ.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿ

Բառի հայացքով կողմնորոշվո՞ւմ է տողը:
Հայացքիս ժամանակը բացում է երկինքը
Հոգու:
Իրականության պատյանից հանում եմ սուրը
Աբսուրդի:
Ինքնահաղթահարո՞ւմ՝
ներսից ու դրսից:
Ճանաչողության ևս մի անդունդ կանցնի
ճանապարհը
և բառն իր դեմքով կմիանա՞ լույսին
Անսահմանի:
Անհայտի դուռը կազդարարի ե՞լքը հորիզոնի:
Եվ իմ խորքից կբարձրանա ձեռքը Հիշատակի:
Սահմանագծերի ամառը կհալվի երակներիս մեջ,
որպես
հիշողության ցերե՞կ:

22.06.2012թ.

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ճանապարհն իր հայացքի նժարով կշռո՞ւմ է
տարածության խորհուրդը: Քառսի երախից
հանում եմ ոգին հիշողության և առնչում
ակունքին լույսի: Ժամանակը
սիրո թևերով գուրգուրո՞ւմ է օդը և ըմպում
երկինքը հույսի:
Իմ և իմ միջև աղոթո՞ւմ է մայրս:
Հայրս երազի մոմե՞ր է վառում խորանում
Ոգու: Ժառանգության սյուներից կախվում է
մտքի հորիզոնը,
որպես առագաստ,
և լողո՞ւմ ոգևորության անաղարտ ջրերում:
Ես իմ ձայնի արձագանքի ետևից վազում եմ
և բռնում թիթեռները պատրանքի:
Եվս մի հաստատուն քա՞յլ՝
դեպի Սկիզբը:
Փրկության տառերի արանքում
որսո՞ւմ եմ ոգին բանաստեղծության:
Ճանապարհն իմ արյան սյուներից ըմպո՞ւմ է
արևածագը:

14.08.2012թ.

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽ

Իմ և իմ միջև ծաղկե՞լ է մի ծառ:
Փուչիկը, որպես
մանկության թիրախ,
պայթո՞ւմ է հայացքում հիշողության:
Ճանապարհը բռնում է թելից հորիզոնի
և վազո՞ւմ… Գաղտնիքի
կանչի՛ ետևից:
Կանգնե՛լ եմ եզրին իրականության:
Օրը՝
անհայտի հարվածից ջարդվո՞ղ
հայելի…
Փշո՞ւր-փշո՞ւր հավաքում եմ
դեմքս
և տեղադրում ցողունի՛ վրա
Անսահմանի:
Հիշողության բևեռ:
Իմ և իմ միջև ծաղկել է մենակությո՞ւնը…

22.06.2012թ.

***

Ծխում եմ հուշերիս ածուխը կարմիր,
և հոգուս խորքից բարձրանո՞ւմ է վեր
ցավերի լույսը- հրեշտակի՞ թև:
Ճանապարհն, ինչպես թռչող մի ասուպ,
սահմանն է հատում ներշնչանքներիս,
մտնում Երազիս տարածքները սուրբ:

22.06.2012թ.

ՈԳՈՒ ՕԼԶԻՍ

Ապաշխարում է քարը մի սպիտակ
ծաղկո՜վ: Տարածության սպիտակ
ներդաշնակությամբ
առնչվում է տողս ոգուն տիեզերքի:
Ի՞նչ պիտի գրեի լռության սպիտակ
պատարագով:
Ինչ-որ չեմ գրել,
մնացել է ներշնչանքի զսպանակի մեջ:
Հանելով ինձ ցավի բռունցքներից,
հանձնե՜լ եմ ժամանակի հայելիներին:
Եվ հիմա ի՞նձ եմ հանդիպում ճանապարհի
ոգու մեջ, թե առնչության մի նոր
հորիզոնի: Ի՞նձ եմ
պեղում ես, թե իմ միջոցով արտահայտվե՜լ է
անհայտությունը:
Գուցե ես շեմն եմ,
որով մտնողը գտնո՜ւմ է իրեն
և կորցնում լռության դիմագիծը…
Բարձրանալով ինձնից՝
խրվե՜լ եմ խորքիս անհայտության մեջ…
Եվ Անհայտի բեռը ոչ թե թեթևացել,
այլ ավելի է ծանրացել ոգուս հենասյուներով…
Իմ տեսողության սահմանը հատող
բառերը գիտեն,
թե ես ինչպե՜ս եմ հանում անդունդից

դեմքը լռության,
ինչպե՞ս բարձրացնում տարածությունը,
որպես կափարիչ…
Ներշնչանքների միջև
հայտնաբերվո՞ւմ է
հայացքս,
որպես ոգու օազիս:

23.06.2012թ.

ՏԵՆԴ

Տեսողության գագաթների միջև
թփրտո՛ւմ է
թռչունն Անսահմանի:
Եվ ստվերների բևեռներում
ձեռքերը իրենց դե՛մքն են կորցնում,
հուշերը տեսնում են առանց ակնոցների,
ճանապարհը հողն է մաղում բարձունքների,
ցավի անդունդը լցվում է ոգու
պատարագներո՛վ,
բառն իր ստվերի
պատա՛նդն է, ոգին
ծաղի՛կ է հանում համբույրից
քարի:
Եվ քայլերիս դարպասներն ուտո՛ւմ են
ճրագները մութի:
Ինչ-որ տեղ մեկը
նվիրվում է՝ կիսվելո՛վ
լույսի և քաոսի միջև: Մյուսը
մերձենում է անորոշության
պտտահողմին:
Ո՞վ է իր ձայնի արձագանքը թողնում
ամայության մեջ,
որպես հուշարձա՛ն:
Ո՞վ է իր անվան պատյանից ելնում,
չճանաչելո՛վ
իր ակունքները:
Խղճի վիհերը գլխատո՛ւմ են օրը
մեղքի պատվանդանին:

26.06.2012թ.

ԲԱՌԸ

Բառը ծնվում է թևերում ոգու
և կյա՜նք արարում լույսով երկնքի,
ունի դեմք, ինչպես ճանապարհը իմ,
ունի հայացք և ներշնչման ակունք,
բառը ծնվում է թևերում ոգու:

Որպես ճանապարհ, հետքե՜ր է կրում,
և ոգու ելքով գտնում է հասցեն,
որպես լռության անմեկնելի ձայն,
բերո՜ւմ է տարերքն անսահմանության,
և ոգու ելքով գտնո՜ւմ է հասցեն:

Որպես զարկերակն հավիտենության,
բառը ոգու նոր դռնե՜ր է բացում,
և բևեռների միջև տարերքի
դառնում է կամուրջ ու հանգուցակետ,
և աստվածային ելքե՜ր է հայցում
իմ խորքի՛ց, նաև՝ ոգուց Անհայտի,
մղվում է դեպի եզրագիծն Հույսի,
վերստանում անուն, և՛ հայացք, և՛ ձայն,
որպես զարկերակն հավիտենության:

26.06.2012թ.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԲԵՎԵՌՆԵՐՈՒՄ

Հիշողության բևեռներում
փնտրում եմ
ճանապարհիս դեմքը:
Մի ստվեր
իր հայելին է առաջարկում
բացակայությունս զննելո՞ւ համար:
Ոգու պատանդն է
իմ դիմաց: Ձայնի
զսպանակ է հայացքիս սայրը:
Երազանքի
կետ,
որ շարժվում է դեպի դուռը հորիզոնի:
Բառը, որպես շեմ,
խորասուզվել է լռության
հորձանուտում:
Ո՞վ է ձայնում ինձ խորքից Անհայտի:
Բալենու մի ճյուղ
իր ծաղիկների բուրող թարթիչներով
վերադարձնում է ինձ
իմ ակունքներին:
Գիշերը հուշերի շուրթերից
ծաղի՞կ է քաղում:

27.06.2012թ.

ԱՆԵԶՐՈՒԹՅԱՆ ՃՈՒ

Իմ մենակության ծաղկամանում
բուսե՞լ է մի վարդ:
Բևեռներիս արցո՛ւնքը:
Տողերիս օազիսը պահվո՞ւմ է
հրեշտակի թևերի տակ:
Ոտքերիս անդունդը ձգել-տարածե՞լ եմ
կյանքի զարկերակի վրա,
որպես ճանապարհ:
Ժամանակի ափում
թողե՞լ եմ իմ հետքը՝
անեզրության ճո՛ւ:

28.06.2012թ.

ՀՈՐՍ

Իմ արյան ժառանգության պատարագներում
խորանո՞ւմ են արմատները հայտնության:
Անունդ փրկության եզրագծերից
ծիլե՞ր է հանում: Կանաչ տարերքների
պահո՞ւստ է հիշողությունը: Կարմիր
երազների տա՞ք շնչառություն: Ոգու
սյուներից ճախրում է արյունս,
որպես Արթնությա՞ն հեռահար ղողանջ:

10.08.2012թ.

ԱՊՐՈՒՄ ԵՄ ԱՅՍՊԵՍ

Վերքերիս օրը
բացում է մի տող: Ցավի ճանապարհը
ընթերցո՞ւմ է լռության սպիտակ էջերը:
Ես խմում եմ խաչմերուկի հայացքը,
որպես հույսի հյո՞ւթ: Ապրում եմ այսպես՝
ի մի բերելով տարածության խորհո՞ւրդը:
Ամենից դժվարը ինձ շրջանցե՞լն էր
ճակատագրի հայացքի դիմաց: Մի ծիտ
կտցում է մատներիս հետքերը, որպես
լույսի սե՞րմ: Իմ
խորքերից ելնող ձայնը
կախաղանի ճոճվող օղա՞կ է…
Ինչ-որ մեկը փրկվե՞լ է… և դարձել
իր իսկ հուշարձանը: Ճանա-
պարհը գուրգուրում է օդը
և կախվում ծառի
բողբոջից,
որպես
մեղո՞ւ:

29.06.2012թ.

***

Շրջափակման
բնին պատվաստված ստվերները
շիվե՞ր են արձակել…
Ոգու մեկուսարանից
չե՞ն լսվում կանչերը…
Ուր որ է՝ կտիրի
սահմանագծերի ձմեռը:

29.06.2012թ.

***

Բառի պատյանից ելնողն իմ երկրորդ ե՞սն է:
Լռությունն իմ դեմքից ընկնում է որպես ճիչ:
Իմ և իմ միջև ճանապարհիս բարուրն է,
որ օրորո՞ւմ է մեկն իր բարձունքից:

3.07.2012թ.

***

Իսկ երբ կոպերիդ վրա արթնանա՞ն
իմ համբույրները,
երակներիդ մեջ կբացվի մի դուռ.
դա իմ հայացքն է՝
հառած զգլխիչ ու մերկ ոտքերիդ…
Կրծքիդ հայացքը
կըմպե՞մ ես ծաղիկի բարակ ցողունով…
Եվ մրջյունները քո մարմինն ի վեր
մի լույս կտանե՞ն…
Եվ ժամանակի բաբախի միջով
կբուսնի՞ հոգուս
անեզրությունը…

30.06.2012թ.

***

Բողբոջի մեջ շողո՜ւմ է բիբը ճակատագրի,
որից ըմպում է ճյուղը խորհո՜ւրդը տիեզերքի:
Ես կանգնել եմ ծառի և Անհունի միջև
և լսո՜ւմ եմ պատարագը լեռնապարերի:

3.07.2012թ.

***

Ժամանակի ձեռքը
հղկում է ճանապարհիս հայացքը,
որպես դիմաքանդակ
և դնում պատվանդանին Ոգու: Իմ
աչքերից թևո՜ւմ են զոհասեղանները
և կանգ առնում հիշողության
ցողունի վրա: Հողը
անեզրության թևերում
ներշնչանքների սերմե՜ր է նետում:
Անսահմանության կոկորդում
գլորվող հա՜ց է
ճանապարհիս ճիչը: Անդունդի
եզրով անցնում է լռությունը՝
որպես հոգևոր լո՜ւյս:
Դարի
աչքերից հանում եմ բևեռները
գաղափարի, որտեղ
նեխո՜ւմ էր անեզրության
ձուն:

4.07.2012թ.

***

Ճակատագրի ձեռքը ծեծում է դուռը
Ապագայի: Ինքնիշխան թախծի
արյունն է կաթկթում սյուներից Ոգու:
Ինձնից հեռացել եմ՝ մինչև ստվերիս
առավոտը: Ես ինձ մոտենում եմ
հոգուս անհայտ դռներից:
Մենակության սպին ողողանջո՞ւմ է
խորքից անցյալի: Վայրկյանների ջահերով
լուսավորո՞ւմ եմ պատարագները ցավի:
Բառը բանալի է,
որով բացո՞ւմ եմ ընթացքը ճանապարհի:
Վերքերիս բռունցքներում
աղոթո՞ւմ է
լույսը:

13.08.2012թ.

ԱՆՋԱՏՎՈՒՄ Է ԴԵՄՔԸ ԿԵՍՕՐԻ

Թևերի շնչառության մեջ
օրորվում է
տարածության բարուրը: Երկինքը
սնո՞ւնդ է մատակարարում ծիլերի
կանաչ ճիչերով:
Թռիչքը-
կատարելության դուռն է:
Ճանապարհի լույսը կողմնորոշվո՞ւմ է
ակնախոռոչում Ապագայի:
Ոգու անդունդը կո՞ւլ է գնում արդեն
մանուկների ճիչում:
Բակում խաղացող երեխաները
ուտում եմ եզրերն անհայտության՝
որպես պաղպաղա՞կ:
Անջատվում է դեմքը կեսօրի
կատարից ծառի
և ձուլվում առեղծվածի ճերմակ
հրդեհին:

4.07.2012թ.

ՄԱՐԴԸ

Հետքերի աշունն է ճգվում
ճանապարհների հորիզոնն ի՞ վեր:
Մտքերի
հետագծերից ընձյուղվո՞ւմ է
Ապագայի օրը:
Երազների շրջանակից դուրս
տեղո՞ւմ է անձրևը:
Կաթիլների
խուտո՞ւտն է ծավալվում
երազանքների մաշկի վրայով:
Մի տող
դուրս է ցայտում զսպանակից լռության,
որպես ձուկ,
և լողո՞ւմ Անհունի պարզկա ջրերում:
Վերադառնում է հիշողության մի կետ
դեպի ակունքը տարածության,
ուր աղոթող մարդը՝
ինքն իրենց դո՞ւրս է…
Ցավերի երկինք,
տառապանքի հողմ,-
ահա այն ամենն,
ինչ խտացել է
տիեզերքի քայլող ցողունի՛ մեջ…
Մա՞րդը…

6.07.2012թ.

ԵՐԿՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԻՋԵՎ

Հրեշտակն իր թևերին տանում է մի գրիչ.
բանաստեղծն այսուհետ գրելո՞ւ է
երկնքի փետուրներով…
Դրախտի միջանցքում հանդիպեցի…
Այստեղ ավարտվեց
երկրային ժամանակը:
Հիշողության թևերով գրկո՞ւմ եմ
զոհասեղանը բառի…
Այստեղից սկսվում է
Հարության ժամանակը:
Ճանապարհը հատում է տարածքը Ոգու
և միանում թիթեռներին Միֆի:
Կանգնել եմ երկու ժամանակի միջև,
որպես զարկերա՞կ:

5.07.2012թ.

ՍԵՐՄԵՐԸ ՈԳՈՒ

Գարնան բացակայությամբ լցվո՞ւմ
են խրամատները...
Պատերազմ է: Արյան
կաթիլները սերմե՞ր են
Ոգու: Մի ծիտ
թառել էր լուսնի պես սպիտակ
գանգատուփին
և իր արտակարգ երգով
լցնո՞ւմ է
դատարկությունը
տիեզերքի:

6.07.2012թ.

ԼՌՈՒԹՅԱՆ ՎԻՀԵՐԸ ԼՑՎՈՒՄ ԵՆ

Լռության վիհերը լցվում են
պատարագներո՞վ:
Ինքնամոտեցման բևեռնե՞ր են
բառերը:
Իմ և իմ միջև
աճո՞ւմ է մի ծառ:
Մի թռչուն հատում է սահմանը լռության
և կտցում հատիկը երգի:
Բևեռների ինքնամոտեցմա՞ն պատարագ:
Ոգու դո՞ւռ է ձայնը: Բառը
ինքնահաղթահարման լռության միջով
հասնում է սահմանին Ելքի:
Ճանապարհի ձեռքում ծածանվող դրոշը
հիշողության վա՞ղն է:
Իմ և իմ միջև աճո՞ւմ է մի պատարագ:

9.08.2012թ.

***

Մեր համբույրներում պատա՞նդ է
ժամանակը: Մեր անցած ճանապարհի
պարկո՞ւճներն են թշշում
ջրերում հույզերի:
Ճանապարհի գնդակով սպանվե՞լ է
երեկոն,
և նրա դիակը քարշ է տալիս
օրը՝
չրթելո՞վ մտքերը արևածաղկի...
Ինչքան իրար մեջ ենք,
իրարից դուրս ենք այնքան…
Դիակի հիշողության դեմքին
դեռ շարունակո՞ւմ են աճել
հորիզոնի մազերը:
Աբսուրդի հրդե՞հ:
Այդպես մեր սե՞րն է դեռ շարունակվում…
Մեր համբույրներում պատա՞նդ է
ժամանակը:
Հիշողության գնդակով սպանվե՞լ է…
Հորիզոնը:

6.07.2012թ.

ԾԻԾԵՌՆԱԿԻ ԹՌԻՉՔԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Իսկ ծառի ճյուղերից թափվո՞ւմ են աշնան
լուսանկարները: Հույսի
հայացքը եղանակավորում է ճյուղերն
Անհունի:
        Ցավի մեջ շարունակվո՞ղ
        պատարա՞գը Ոգու:
        Տողի համբերությունն հատող
        զիգզակնե՞րը հույսի:
Ծիծեռնակի թռիչքի բանաձև՞ը:
Ես գրում եմ ներշնչանքների
ճերմակ հետագծով
և վերականգնո՞ւմ ժայռերին հուշի
դիմագիծն Ապագայի:

7.07.2012թ.

ԼՈՒՅՍԸ ԾԱՂԿՈՒՄ Է ԱԿՈՒՆՔՈՒՄ ՕՐՎԱ

Հիշողության ժայռից սահում են
դիմագծերը մանուշակի,
և բուրմունքների ծիածանի միջով
թռչում է մեղուն,
լույսը ծաղկում է ակունքներում
օրվա:
Բացված պատուհանը հուշում է,
որ նա,
ում սպասում է ճանապարհը,
վաղուց արդեն եկել է,
որպես բուրմունք,
եկել,
որպես ծարա՛վ
և օրհնության
հասցե՛:

7.07.2012թ.

ԳԱԼԻՍ ԵՍ ԼԵՌԱՆ ԳԱԳԱԹԻՆ ԳՈՒՐԳՈՒՐԵԼՈՒ

Քո շուրթերը սև ածուխներ էին,
որ բոցավառվեցին համբույրո՞վ կարմիր:
Քո աչքերը լռության զոհասեղան էին,
որ սավառնեցին իմ արյան միջով, որպես
ասուպներ:
Իսկ քո բառերը՝
հեռավոր բանտի մեկուսարաններ...
Քո դեմքից ես իմ ճակատագի՞րն եմ
ըմպում, սիրելի՛ս:
Քո թարթիչներով փոխանցում ես ինձ
խորհուրդը ծաղկի:
Դու՝ հոգու երազ,
գալիս ես՝
լեռան գագաթին գուրգուրելո՞ւ
սիրտս
ապշահա՛ր:

8.07.2012թ.

ԲԱՌԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ոգու տիեզերքի անցորդն է բառը,
որ կրում է իր մեջ հայացքը ժամանակի:
Դարերի խորքից քայլում է դեպի նպատակակետը:
Բառի զարկերակում ծնվո՞ւմ է ժամանակը:
Գագաթների միջև հաղթահարո՞ւմ է
զոհասեղանը հոգու:
Բառի ճակատագիրը պատյա՞նն է ոգու,
որից դուրս է ելնում այգաբացը Հույսի:

15.08.2012թ.

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Սալաքարերի հուշ.
օդի ափերում փոթորկվո՞ւմ է
լուսանկարների անհայտությունը:
Ժառանգականության օազիսն է եռում
հիշողության առանցքում՝ հայտնաբերելո՞վ
տարածության վարդը:
Իմ և իմ միջև ապրում է մենակության փողոցը՝
լցվելով ու դատարկվելով,
ինչպես հայելի՞:
Իմ ներսն ու դուրսը
հաջորդում են իրար,
ինչպես արևածագն ու մայրամուտը:

10.07.2012թ.

ՆԺԱՐ

Հրեշտակի թևերից կախվել է հոգուս անդունդը
և տարուբերվում է,
ինչպես նժա՜ր:
Լռության վիհերից ժայթքում է ճանապարհս:
Իմ և իմ միջև հասունանո՜ւմ է
երկինքը Անհայտի:
Ստվերս որպես դուռ փակել է մի անցորդ:
Բևեռների հայացքով նայում եմ խորքս.
Մեղքի սյուներին փլվո՜ւմ է
անդունդը ցավի:

11.08.2012թ.

ՍԿԻԶԲԸ

Հայացքի դուռ,
որ բացվում է դեպի հիշողության
ուղեծիրը,
ուր ընկնում է վարագույրը ոգու,
որպես լռության ճի՜չ:
Ինձից մաս-մաս խլում ես
վայրկյանները,
որպես խորքերիս երկինքը լուսավորո՜ղ
մոմեր: Դու
սեր ես կոչվում, բայց իրականում
լաբիրինթո՜ս ես…
Ճանապարհը ուտում է հայացքիս
հացը,
որպես զոհասեղանից արձակվո՜ղ
աղաղակ…
Խոսքի վարագույրը բացվել է,
և բեմը դատարկ է,
իսկ լռությունը դեռ չի՜ ժամանել…
Սկիզբը
օրորվում է վերջի ձեռքերում,
որպես բարո՜ւր:
Հորիզոնի շուրթերից ընկել է ճանապարհը,
իբրև ծծա՜կ:

11.07.2012թ.

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ

Ճանապարհի բիբերում կայծկլտո՞ւմ է
տեսողության հասցեն:
Ոգու կափարիչն է գլորվում
լռության սպիտակ թռիչքահարթակից:
Բառի հորիզոնն է
բացվո՞ւմ ներշնչանքի ճառագայթող ձեռքով…
Ուր որ է՝ կընկնի ևս մի սահման
Անհայտի խոռոչից՝
իբրև ատա՞մ:
Ինքնությունս մա-մաս կո՞ւլ է գնում
Գաղափարի մթին երախում:
Ես ինձ հայտնաբերո՞ւմ եմ ճանապարհի բիբերում,
որպես տեսողության հասցե:

12.07.2012թ.

ԾՆՈՒՆԴ

Տառապանքի ոգուց ծնվո՞ւմ է ճանապարհը
և բարուրվում երազով երկնքի: Անցնորդն
իր քայլերի հորիզոնն է տարածում
աստիճաններով ճակատագրի,
որպես գո՞րգ:
Ինքնամոտեցման բևեռներում տրոփում է օրը:
Անհայտության պատուհանից այս կողմ
տեղադրում եմ մի բառ,
իբրև կողմնացույց,
և հիշողության թելով ձգո՞ւմ եմ երազանքիս
օդապարիկը
ու ամրացնում ճյուղերին քամու:
Սիրո ճիչ:
Անդունդի եզր:
Անհասության հրդեհ:
Հողմապտույտում իմ տեսողության
բացվում են սպիտա՞կ, սպիտա՞կ
ծաղիկներ…
Տառապանքի ոգուց ծնվո՞ւմ է ճանապարհը

12.07.2012թ.

ԱՆՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԱՂԸ

Լիզո՞ւմ է ճանապարհը
աղը անհայտության:
Համբուրում եմ
տառերը հույսի
և լեռների ոգուց քաղում ծաղիկներ...
Որպես հիշողության հունդ՝
խրվում եմ հայացքիդ բաբախյունի մեջ:
Դու լցվում ես Անհայտի
փոթորիկով
և հայտնաբերո՞ւմ իմ արմատները: Քիչ անց՝
իմ միջով բուսնում է շնչառությունը տիեզերքի:
Կայծքարե միտքս
խաչքարի պես հավատավո՞ր է: Ես կա՛մ
հաղորդության առանցքում,
որպես լույսի բիբ:
Դու ինձ այնպե՞ս ես
շոյում,
որ ափիս մեջ վառվում են
արթնության
մոմերը…
Խիղճս
հրե լեզո՞ւն է…
Տառապանքի:

13.07.2012թ.

ԱԲՍՈՒՐԴԻ ԱԿՈՒՆՔՈՒՄ

Աբսուրդի ակունքում
բացվում է բառի ասպարեզը ճերմակ,
ուր տարածվում է իշխանությո՛ւնը Միֆի:
Բանաստեղծությունը հաղթահարում է տիեզերքի
արգելակները
և ճախրում Ոգու հորիզոններում:
Ինչ-որ տեղ ծլո՛ւմ է անսահմանության
կորիզը:
Բառի շնչառության մեջ թո՛ւխս է նստել
տողը:
Շրջանակից դուրս
բաբախում է վերնագիրը լռության,
հայտնաբերելո՛վ տարածության ոգին:
Ես ինձ տեսնո՛ւմ եմ աղոթող բառերի
ճախրող թևերին:
Իմ մեջ բա՛ռ է փնտրում
Անհունի բանաստեղծը:
Նպատակի լեզուն արևի շոգի պես
պեղում է ակոսները լռության:
Ես մտնում եմ հունը լույսի:

14.07.2012թ.

ԻՆՉ ՄԻ ԲԱՌ Է ՊԵՏՔ

Խոսքի ասպարեզը ընդլայնվում է
օազիսով լռության: Երբ գրքից
հանվում են տառերը Ոգու, միշտ
ավելո՞րդ է լինում փայլատակումը երազի
Նպատակի հողմը
ոչ թե մաքրում է հատակը լռության,
այլ ավերո՞ւմ է ճանապարհի հայացքը՝
դեմքը Ապագայի:
Եվ ցավի ձեռքով կողոպտվում են
դռները հուշերի:
Անաշխարհ
աշխա՛րհն է տիրում:
Անհայացք
բառը դիմա՞կ է:
Անկաշկանդ ծիրում ռիթմերի՝
Մեռյալ մի կետ:
Միջանցիկ քամու պես մի տող է անցնում
դատարկության զարկերակի միջով:
Բանաստեղծություն գրելու համար
ինձ մի բա՞ռ է պետք-
սկի՛զբը Լռության:

14.07.2012թ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բառի կամքը
ժամանակի շունչն է բեկում
ռիթմի օազիսում:
Բառի երազը
տարածության փոխակերպո՛ւմն է
հայելու ժամանակի մեջ:
Բառի հոգին
Հարության երկի՛նքն է:

16.07.2012թ.

ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՍՏՂԻ

Ձեռքերիս տարածության մեջ ողողանջո՞ւմ է
մի զանգ, որի լեզվակը դրոշի պես բռնված
թափահարում է ձեռքը Ժամանակի:
Ճանապարհի հասցեն
համբույրի պես առնում եմ քո շուրթերից,
իմ սեր, և փոխանցում տարերքին Անհայտի:
Բացվում է մի դուռ
դեպի խաչմերուկը հավերժության: Փակվում է
մի դուռ, որպես սպի՞: Ես հավասարակշռվո՞ւմ եմ
դռների հիշողության լույսով:
Ճանապարհի
հայացքով գտնո՞ւմ եմ Անհայտի դուռը:
Բարձրանո՞ւմ
եմ ինքս ինձանից, որպես ցավի
աշտարակ:
Անորոշությունը,
որպես բեռ,
ճնշում է ուսերը բառի,
և ժամանակի աչքերից ցայտում է մի ճառագայթ՝
խորհո՞ւրդը… Աստղի:

16.07.2012թ.

ԲԱՌԵՐԻ ԵՐԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԲՈՒՐՎՈՒՄ ԵՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ

Անհունի ձեռքը տիեզերական նժար է,
որ կշռում է խորհո՜ւրդը ճանապարհի,
տողի լույսը դարձնում հաղորդակցության
դեմք-
բնության մե՜ծ ելքը…
Աքսորյալ բառերը վերադառնում են
հիշողության կայարանները,
հանդիպելով առաջին իսկ մարդուն՝
խաչակնքում,
օրհնո՜ւմ են ճանապարհը Ոգու…
Հայրենիքի փնտրտուքի երազը
ուր որ է՝ ճեղք կտա՜ տարերքով նռան:
Տառերի երակներում համբուրվո՜ւմ են
բարձունքները:
Արմատներիս լույսը բացվող պատուհան է:
Տողերիս շնչառությամբ կայանո՜ւմ է աշխարհը…
Լռության պատվանդանին կանգնում է
(կուռքի ժամանակն անցել է)
բանաստեղծությունը,
թ՞ե ոգին Անհունի…

17.07.2012թ.

ԱՆՀՈՒՆԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Ծիածանի արցունքն է կաթում
տաճարի թարթվող կոպերի վրա:
Զոհասեղա՞ն է հիշողությունը օդի:
Անհունի և իմ հիշողության միջև վառվում է մի մոմ:
Արթնանո՞ւմ են քայլերը անցորդի:
Երազի օազի՞ս:
Հավատի շունչը կողմնորոշվո՞ւմ է
լույսով մոմերի:
Մի ծիտ
կտցվում է հասցեն ճանապարհի
և հագեցնում ծարավն իր ոգու:
Լինելիության աղե՞րս:
Ժամանակի թևերով ճախրում է
տարածության ոգին:
Քայլում է օրը
դեպի պատարագն Անհունի:

18.07.2012թ.

***

Եվ դո՞ւրս են թռչում ճանապարհի ոգուց
աչքերն իմ մանկության,
արպես պատարագի մոմե՞ր:
Ես նայում եմ իմ խորքը,
և Անհունի հայացքը լուսավորո՞ւմ է
իմ գոյությունը:

18.07.2012թ.

***

Սպիտակ պատերի հիշողության մեջ
Մի երեխայի ձեռք
օրորում է օրը
Տիկնիկի աչքերում
    սկզբնավորվո՞ւմ է
            Ապագան
Մեղքի առաջին առավոտը

18.07.2012թ.

ՍՊԻՏԱԿ ՄԻ ԷՋ Է
ՃԱԿԱՏԸ ՀՈՒՅՍԻ

Փողոցում բոցավառվո՞ւմ են
ծվեններն Անսահմանի:
Անցյալից մտնում եմ
տարածքը ներկայի
և վերականգնո՞ւմ դեմքն իմ հուշերի:
Ինձ ուղեկցում է ոգին ճանապարհի:
Սպիտակ մի էջ է
ճակատը հույսի,
ուր նշո՞ւմներ է թողնում ծիծեռնակը:
Ընթերցում եմ համբույրը լույսի
շնչառությա՞մբ մենակության:
Հիշողության հա՞ց է ուտում ժամանակը:
Քո ուսերին բուրո՞ւմ են
անձրևի ծաղիկները:
Ինչ ընթերցում եմ հիմա
շուրթերով,
լցվում է աչքերիս մեջ,
որպես
երա՞զ:

18.07.2012թ.

ԶԻԳԶԱԳՆԵՐԻ ԱՄԱՌ

Ծիծեռնակն իր թռիչքով մի մակագրություն է
թողնում էջերում օրվա:
Զիգզագների՞ ամառ:
Կտուցներով գուրգուրվող օդը՝
սիրո ապաստարան,
ուր գույներն առաջին անգա՞մ բուրում են
խայտանքով թևերի՝
Ոգու և Տարածության ջրվեժները լցնելով
երաժշտությա՞մբ:
Ես հարության ճի՞չն եմ բռնում շրթունքով,
որպես բառ,
և տեղադրում համբույրում լռության:
Սի ձայն,
ինչպես ծաղկած ճյուղը քամու,
քսվում է անուրջներիս պատին,
և արթնանում է անապատը հիշողության,
և արթնանում է շուրջպարը Տեսիլքի:
Օ՞, սիրո վերքերից հառնող Անսահմանի ե՞լք…
Զիգզագների՞ ամառ…

23.07.2012թ.

ԱՊԱԳԱՅԻ ՈՏՆԱՀԵՏՔԵՐԸ

Ես գրում եմ՝
արթնացնելով սպիտակ թղթի վրա
ոտնահետքերը ապագայի:
Ես
մի գրի՞չ եմ ժամանակի ձեռքում,
թե ժամանակն է հունը իմ Ներշնչանքի:
Ես դա զգում եմ,
երբ օդի շերտերում բացակայո՛ւմ է
ժամանակը:
Ես դա զգում եմ,
երբ տողերի հիշողության մեջ
թփրտո՛ւմ է
տեսողության վանդակը:
Ինձ կառաջնորդի՞ բանաստեղծությունը
դեպի պատարագն Անհունի:

24.07.2012թ.

ԵՎ ՑԱՎՍ ԴԱՌՆՈՒՄ Է ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՆԳ

Ձեռքերիս հայացքն, ինչպես օրորոց,
օրորում է բարուրը ճանապարհի:
Բռնկվում են աստղերը
հոգուս անկյուններում,
ինչպես երկնային ծաղիկնե՞ր:
Հիշողության խորանում
վառվում է հայացքս,
ինչպես մո՞մ:
Արշալույսի սպիտակ ծվեններով
փաթաթում եմ վերքերս,
և ցավս դառնում է հիշողությա՞ն զանգ:

16.08.2012թ.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՂԸ

Ստվերների քայլ՝
Ժամանակի աստիճանների վրա: Աներևո՜ւյթ
տեղանք: Ոգու հանգրվան: Ճանաչողությա՜ն
կետ: Հավաքում եմ
հրեշտակի թևերից թափվող ազատության
տողերը
և դրանցով հյուսում
ճանապարհիս դեմքը: Ինձնից
դուրս է մնում
հիշողության ոգին:
Կանգնում եմ իմ դիմաց, որպես աներևո՜ւյթ
տեղանք:
Ճանաչողության կետեր են ձեռքերիս մատները,
որոնցով շոշափո՜ւմ եմ զարկերա՜կը տիեզերքի:
Ինձնից դո՜ւրս է մնում
Ճանապարհի ոգին:
Տարածության այտին դառնում եմ մի ժպիտ:
Հիշողության վա՜ղը:

24.07.2012թ.

ԵՎ ԱՐՅԱՆ ԵՐԿՆՔԻՑ
ԿԱՆՉՈՒՄ Է ԻՆՁ ՄԻ ԱՍՏՂ

Երազներիս քառսն է բարձրանում
ժառանգականության սյուներն ի վեր
և գագաթներին վառում հիշողության ջահե՞ր:
Արմատներիս հայտնությունն է դառնում ժպիտը
Տարածության:
Իմ և անցորդների միջև ժամանակը
մեկուսարա՞ն է:
Նոր կյանքի շե՞մն է հատում
երկինքը խոտի: Մեղուների
միջնորդությամբ հասնում եմ ջրվեժին
բուրմունքների…
Ի՞նչ երանություն,
երբ աչքերդ բաց են
և քո մեջ, ինչպես հայելում, երկինքը տեսնո՞ւմ է
իր ազատությունը:
Երբ
բնությունը շնչում է քո թոքերով
և ամբողջանո՞ւմ
վազքով մրջունի:
Սահմանագծերի թարթիչների վրայով
վազում է դեպի լույսը
օազիսն Անհայտի:
Եվ արյան երկնքից կանչո՞ւմ է ինձ մի աստղ:

25.07.2012թ.

ԲԵՎԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՆՎԱԳԸ

Ինքնաօտարման
մա՞սն է իմ ձեռքը, որով հենվում եմ այունին
դատարկության: Ես
ինձնից դուրս եմ
և քայլերիս մեջ
արարո՞ւմ եմ ճանապարհիս վաղը:
Ինձ ունկնդրում է բառի խորքերից
ոգին լռության:
Ինքնամոտեցման
մասն է իմ ձեռքը,
որով գրում եմ ճանապարհիս վա՞ղը: Ինձ
բացահայտո՞ւմ է հուշի խորքերից
ոգին տարածության:
Ես կամ՝
որպես ինքնաօտարման
մա՛ս
և
ինքնամոտեցման
աստղային հնա՞ր…
Բևեռների համանվա՞գը:

25.07.2012թ.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՍՈՒՊ

Վերջակետն
իր սահմաններից դուրս է ժայթքում…
Միջակետերի
ոգուց սկզբնավորվո՞ւմ է ճանապարհի
վաղը:
Իսկ ո՞րն է իմ անցած ճանապարհի
խորհուրդը.
հայացքների հասցե,
դռան ճակատից թռած
հիշողության ասուպ,
ժամանակի վիրահատվա՞ծ
քարտեզի ճիչ…
Հույսի միջակետե՞րը…

25.07.2012թ.

ՀՐԵՇՏԱԿԻ ԹԵՎԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՄ ԵՎ ՆԱՅՈՒՄ ԻՄ… ԱՊԱԳԱՅԻՆ

Հիշողությունների
ամա՜ռ: Ես քեզ գրկել եմ…
թևերով երկնքի: Եվ օրը
անսպա՜ռ է աչքերիդ մեջ: Դու
համբուրում ես իմ բացակայությունը
և արբո՜ւմ… ինձնով:
Ես համբուրում եմ քո բացակայությունը
և արբո՜ւմ… հույսով:
Ներկա ենք
և բացակա՜
վայրկյանի սենյակում:
Հրաժեշտի
կամուրջով անցնո՜ւմ է քմծիծաղը բախտի:
Սիրո ազատության մեկուսարա՛ն:
Ժամանակի աներևույթ տեղա՜նք:
Ոգու անդո՜ւնդ:
Հրեշտակի թևը բարձրացնում եմ
և նայում իմ…
ապագայի՛ն:
Իմ աչքերից լո՜ւյս է խմում
ճանապարհը:
Իսկ թռչունը կտցո՜ւմ է
ոգին մենակության:

25.07.2012թ.

ԱՆՀԱՅՏԻ ՕԱԶԻՍԸ

Քո ձեռքը սահում է
ուսերիս հիշողության միջով
և ալպիական ծաղիկնե՞ր արթնացնում
հորիզոնի եզրին:
Քո համբույրով
հարությո՞ւն է առնում կորուսյալ Աստղը:
Ձեռքերիդ պատարագի միջով
գնո՞ւմ եմ և հասնում ելքին
հմայքիդ: Դու
անսահմանության շնչից մի ծաղիկ ես պոկում
և առօրյան դարձնում բուրումնավե՞տ:
Քամին քո լուսե անդրադարձն է
տանում
և սերմի՞ պես ցրում ակոսներում հույսի:
Միֆի երա՞կն է ծամում
ճանապարհը: Ես սնվում եմ ճառագայթո՞վ
հիշողության:
Թռչունի թևերից կախվում է տողը՝
հայացքը տիեզերքի…
Անհայտի օազի՞սը...

26.07.2012թ.

ՀԱՎԱՏԻ ԲԵՎԵՌՆԵՐԸ

Աստծո ձայնը միակ ուղեցույցն է,
եթե այն լսողը ազատվում է
դիմագծերից բոլոր...

Փողոցի դատարկությունը ծաղկել է
միայնակ մի բառով՝
Աղոթք:
Բևեռների միջև խարխափում է ճանապարհորդի
ոգին՝
չգտնելո՞վ դուռը լռության: Այնտեղ
ինքն իրեն որոնո՞ւմ է հավատը:
Ինքնատիրապետման ուժը
ներթափացման ոգու ճառագայթի մե՛ջ է:
Հավատացյալի ոգին՝ ինքն իրենից դո՞ւրս է,
հավատացյալի սերը՝ ինքն իրենից դո՞ւրս է,
հավատացյալի կամքը՝ ինքն իրենից դո՞ւրս է:
Երկինքը տեսնում է մեզ և ընդլայնվում
ապագայո՞վ…
Տեսողության դաշտը ծաղկե՞լ է
անձրևի սպիտակ կաթիլներով:
Մենք տեսնում ենք երկինքը
ինքնամոտեցման գագաթներից:
Ծաղկել է Պատարագի ծառը:

27.07.2012թ.

ԸՆԹԱՑՔ

Ձեռքիս ճրագը անհայտ բևեռի՝
գնում եմ դեպի խորքերը Ոգու,
լքում և՛ հասցեն իմ ճանապարհի,
և՛ խորանն իղձի, և սե՞րն եմ լքում…
Գնո՞ւմ եմ դեպի խորքերը Ոգու:

Եվ տիեզերքի շո՞ւնչն եմ ես որսում
համբույրով բառի, շուրթով հնչյունի,
թիթեռի հևքն է իմ միջով հոսում,
ճուլվո՞ւմ եմ ազատ ոգուն թռչունի
համբույրով բառի, շուրթով հնչյունի:

Օ՜, բանտարկյա՞լ է անունն իրերի,
բարքն ամեն ինչն է դեռ համահարթում,
ազատությո՞ւնն է ոգին ելքերի
լռության շեմը իմ ձա՛յնն է հատում,
Օ՜, բանտարկյա՞լ է անունն իրերի:

Ձեռքերիս ճրագը անհայտ բևեռի `
գնում եմ դեպի խորքերը Ոգու,
լքում և՛ հասցեն իմ ճանապարհի,
և՛ խորանն իղձի, և սե՞րն եմ լքում…
Գնո՞ւմ եմ դեպի խորքերը Ոգու:

27.07.2012թ.

ԱՌԱՆՑՔ

Պատմության ափին հասած օրը
մասնիկն է Ոգու:
Բաբախում է անհայտությունը:
Զարկերակը բա՛ռն է:
Հուշը հեռադիտակն է
Լույսի: Ես իմ սիրո բևեռների միջև
վառվող լապտեր եմ
և լուսավորո՞ւմ եմ ակունքները
հորիզոնի: Ժամանակի ձեռքը
սեղմում եմ և շարունակում իմ ճանապարհը…
Հետո
հղկում եմ հայացքն Անհայտի
և տեղադրում թիրախներում Ապագայի:
Համբույրներիս անդրադարձներում
բացվում է մի ծաղիկ…
Պատմության ափին հասած օրը
զարկերա՞կն է Ապագայի,
Ժամանակի ձեռքը սեղմում եմ
և նայում աչքերի՛ն հիշողության:

30.07.2012թ.

ՊԱՏԱՆԴԸ

Պատերազմ է: Տագնապի լուսանցքներում
կծկվում է ստվերը ճանապարհի,
որպես կատու:
Վիհերը ոռնում են
խորքերից ցավի
և վնգստում անորոշության դիպո՞ւկ
հարվածից:
Հիշողության
կափարիչ է կամուրջը, որ պայթեցրե՞լ են…
Անվստահության ձե՞ռք…
Թռիչքում թռչունի
երկունքի ցավ կա:
Լույսի վիրակապով
փաթաթե՞լ եմ
հիշողության թևը…
Թփրտո՞ւմ է անհայտությունը…
Խաղաղությունը գլուխն է բարձրացնում
և նայում խրամատներից,
իբրև պատանդ:
Լեռան գագաթին
ձգվո՞ւմ է պատարագը…

31.07.2012թ.

ՀԱՎԱՏԱՄՔ

Գնա՛ դեպի ազատություն.
բա՞ց է ճանապարհը:
Եվ ազատվիր առաջին հերթին
կապանքի՛ց կնոջ:
Այնքա՛ն փող ունեցիր՝
որ ազա՞տ լինես,
այնքա՛ն ազատություն...
որ հարուստ լինես հոգով,
որ հպարտ լինես
և տե՞ր Խոսքի...
Ազատվի՞ր նաև դեմքից… հիշողության:
Եթե կարող ես՝ ազատվիր իսկույն
և՛ ծխախոտից.
օրաթերթերի թույնը հեր՞իք է,
որպեսզի մեռնես մի քանի անգամ…
Երկրում այս միայն մի տանիք ունես՝
հայա՞ցքը Աստծո:

18.08.2012թ.

ՏՈՂԵՐ՝ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՆՑՔՆԵՐՈՒՄ

***

Ժամանակի սյունից կախվել է
բառը,
որպես կողմնացո՞ւյց:
Ճանապարհ-սլաքը թրթռո՞ւմ է
Անհունի միակ երազանքի վրա:

***

Հիշողության լուսանցքներում
մի տո՛ղ է գրվում ճակատագրի ձեռքով,
մի այլ տող՝ ջնջվո՛ւմ շուրթով տարածության:
Համբույրն արարում է
անեզրակա՛ն կյանք:

***

Ճանապարհի ոգին զանգի պես ղողանջում է
սաղարթներում ծառերի, որպես թռչունների
հիշողությու՛ն:
Սերմերի եղանակը:
Դեմքով շրջվել եմ դեպի անհայտություն:
Սիրտս բաբախող լո՛ւյս է:

***

Դարն իր ասելիքը սկսեց քարտեզագրո՞վ
խրամատների:
Սահմանագծերի եղանակն հարվածո՞ւմ է
անկանխատեսելի դիրքերից Ոգու:
Ինչ-որ տեղ ճեղք է տվել պարիսպը հիշողության,
և ճեղքից հոսո՞ւմ է լավան Անսահմանի:

***

Տիեզերական շնչառության մեջ ծառերի
պայթում են բողբոջները լույսի:
Մի ծիտ կտցում է ստվերը պատերազմի:
Ես հայտնվում եմ ցավի զարկերակում,
որպես հիշողության սերմ: Ճանապարհի
դեմքով շարունակվում է գարնան
առերեսո՛ւմը
հավիտենական Հսկումի դիմաց:
Հորիզոնն,
իբրև երազանքի խորհրդանիշ,
անհետանո՞ւմ է,
և տառապանքի
օազիսում
ծաղկում է դուռը...

2.08.2012թ.

***

Բարձրացնում եմ ստվերը ժայռի,
բացում ակունքը հիշողության:
Հայրս գուրգուրում է օդը,
որպես հույսի նշան,
բացահայտում է հասցեն լռության
և ամրացնում բաց ճակատին
տարածության:
Ես վազում եմ ետևից իմ խոհերի
և մոլորվո՜ւմ լուսանցքում
հորիզոնի:
Հորս ձեռքից բռնած՝
վերադառնում է
օրը
և խաղում է տարվա՜ծ,
և խաղում է ինձնով,
որպես…
գնդակո՜վ…

3.08.2012թ.

***

Սիրո աչքերից ընկնում է աստղը ճանապարհի
և բառի զարկերակում բաբախում,
իբրև տիեզերական լո՜ւյս:
Ճակատագրի փեղկը բացում է մի աղջիկ
և սրբում արցունքս.
որպես հիշողության փակուղին հաղթահարող
ոգի,
նստում է կողքիս
և ձուլվո՜ւմ բնակարանիս սպասումների
հողմին:
Ճանապարհի ձեռքը
հանում է առավոտներ և ճաշակո՜ւմ…
Աստծո հանդիմանող հայացքի՛ դիմաց…
Սիրո աչքերից ընկնում է աստղը ճանապարհի...

4.08.2012թ.

ԱԲՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆ

Բառը հաղթահարո՞ւմ է վանդակը տեսողության
և հատում շեմը
Ազատության:
Անհայտի դեմքն իր
խաղացանկերով
ընդառաջ է գնում
տարածության ընկնող-ելնող բեմերին:
Աբսուրդի թատրոն:
Բառը հաղթահարո՞ւմ է որոգայթները…
Խղճի պարապո՞ւրդ է:
Ճանապարհի դեմքից հանում եմ
գործողության
վիհը…
Առասպելի ոգուց բխում է երկինքը:
Աղբյուրը քարի հիշողությո՞ւնն է:
Տիեզերքի շնչառության ե՞լքը:
Իսկ մատներիս արանքով հոսո՞ւմ է...
հավերժությունը…

4.08.2012թ.

***

Անձրևի կաթիլներից ցայտո՞ւմ են երկինքները:
Խոտերն հիշողության
անդրադարձնե՞ր են: Կանաչ պահուստնե՛րը
Անսահմանի:
Մասրենու
թուփը խմո՞ւմ է ճանապարհի
արցունքը սպիտակ:
Երազի թևերը
լուսանցքներ են,
ուր գրելն անգամ պարպվել չէ Ոգու:
Անձրևի կաթիլներից ցայտո՞ւմ են երկինքները:

6.05.2012թ.

***

Ճանապարհը կտցահարում է Անսահմանի ստվերը՝
իբրև ձո՞ւ:
Հորիզոնի կտցից հոսում է արյունը երկնքի:
Տիեզերքի շնչառության մեջ
ծնվո՞ւմ է երազը:
Ճանապարհի խորքից բուսնում է օրը,
որպես ծա՞ռ:
Իմ խորքից բուսնում է ստվերս,
որպես ծի՞լ:
Սերմերի եղանակը հատում է սահմանն
Անսահմանի:
Մի դո՞ւռ է բացվում դեպի խորքերը
Ոգու:
Աղոթքի ձայներից փնջում եմ ծաղիկներ
երկնքի
և նվիրո՞ւմ ինձ սպասող… ճանապարհներին…

8.08.2012թ.

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԳՈՒՅՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ

Հայացքիս ժամանակը սկսվում է
ձեռքերից աղջկա,
որոնք սպիտակ գգվանքնե՞ր են նվիրում
անհայտության կարմիր բաբախյուններին:
Կապո՞ւյտ է հետքը ճանապարհի,
որի մեջ կանգնել
և համբուրո՞ւմ եմ
անեզրության դեղին առեղծվածը:
Սև ժպիտի կարմիր ճառագայթով
բարձրանում է մրջյունը,
ինչպես տողը՝
հիշողության գրչածայրն ի՞ վեր:
Ծիածանի ժամանակը սկսվո՞ւմ է
ոտնահետքերից հրեշտակների:
Ամպերի ճերմակ պատարագի միջով
ձգվո՞ւմ է ժամը:
Իսկ զանգակատան զանգից ճախում են
ղողանջները,
որպես ծիծեռնակնե՞ր:

8.08.2012թ.

ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂՎԱ

Անհունի զոհասեղանին թփրտում են
եզրագծերը տողի:
Բառի հրապարակով անցնում է ամառը՝
քայլերգո՞վ օդի:
Տիեզերքի հենապյո՞ւնն է լռությունը վաղվա:
Հիշողության հիմքերում հալվում են
սառցաբեկորները Ոգու:
Ուր որ է՝ հոգու անկյուններից կճառագի՞
Միֆը:
Աբսուրդի ակունքներում կարթնանա՞ օրը՝
սահմանը Ոգու:
Տիեզերքի միտքը կհատե՞ն տողերը՝
որպես Անհունի ճառագայթներ:
Ես կելնեմ տեսողության վանդակի միջից,
որպես շի՞վ:
Ինքնահաղթահարմա՞ն պատարագներով
ընդլայնվո՞ւմ է հոգիս:
Ես չկա՛մ: Խոսքս
շարունակվո՞ւմ է շնչառությա՞մբ ճանապարհի…
Ցավի դուռը բացվում է
դեպի վի՞հը Լույսի:

17.08.2012թ.

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՊԱՐԸ

Ռ. Ասկարյանին

Լույսը նոր էր բացվում
երբ հանկարծ տեսա հրեշտակների պարը
նկարչի ձեռքը որպես վրձին
բացահայտում էր ոգին լռության
քարի հիշողության առագաստները
թիավարում են արգոնավորդները
մի ծիտ վերադառնում էր իր բույնը
որպես վրձնահարված
լույսը նոր էր բացվում
հրեշտակների պարը փշրում էր շրջանակը
ելքի

25.11.2012թ.

ԿՈՐՈՒՍՅԱԼ ԲԱԽՏԻ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ

Ոգու կափարիչի տակ ծնվո՞ւմ է ճանապարհը:
Բարձրանալ ինքդ քեզնից՝ նշանակում է
դիմանալ հարվածներին Ապագայի:
Մոլորյալ եսը՝
առնչության օազի՞ս:
Քաղաքականության զոհասեղան չէ՛
օրը,
այլ ինքնահաղթահարման լուսացո՞ղ
ակոս,
ուր սերմերն աստղերի պես հասունանո՞ւմ են
կորուսյալ բախտի հասցեներում:
Ափիս մեջ մթնում և լուսանո՞ւմ է
հորիզոնը ցավի:
Հիշողության զանգի ղողանջները կարմիր:
Քաղաքականության զոհասեղանի մոմերը վառվող:
Հիշողության դռները բախում են քայլերն անցնորդի:
Մի դուռ մնացել է բա՞ց:
Լռության խորքից բարձրանո՞ւմ են սյուները Ոգու:
Իմ և իմ միջև:
Ճանապարհի կտցից ջո՞ւր է խմում հորիզոնը Լույսի:

17.08.2012թ.

ԵԼՔԸ

Պոեզիայի միջազգային փառատոնի դափնեկիր
Մաղվալա Գոնաշվիլուն

Ճանապարհը ծնում է տիեզերական շարժում.
«Տոն պոեզիայի»:
Գրչի ծայրով հաղթում է ինքն իրեն խաղաղությունը
և ի մի
բերելով բևեռները Ոգու, հաստատում Պահի
խորհո՜ւրդը:
Ես գրում եմ: Ինքս ինձ հաղթահարո՞ւմ
եմ, թե պարզապես հորիզոնի սպիտակ փետուրով
սրբո՜ւմ եմ
արցունքը ճակատագրի,
որպեսզի Բառը առաջնորդի Ոգուն:
Ես թևերի երկի՜նքն եմ:
Աշխարհի տարբեր անկյունները միավորվո՜ւմ են
ժպիտով Արցախի:
Խաղաղության մունետիկնե՜ր են ծառերը:
Սիրո օրրա՜ն է
լույսը ժամանակի:
Արցախն իր Ոգու նժարը
առաջին գծի՛ վրա է
պահում:
Ժամանակը ճանապարհից կորզում է
դիմագիծ,
որ ներկայանա՜ Հանդեսին Տիեզերքի:
Ազատագրված արշալույս է Բառը, որով ջո՜ւր է խմում
հրեշտակը և պարում Գանձասարի հայացքի ներքո…
Մրրկո՜ւմ է քամին և քարանում Հիշողության գետի
լաբիրինթոսում…

Կառքը
ճանապարհի շնչառությունն է,
որ առաջանալով, երկինք է
ստեղծում:
Ստեղծում է ժամանակ և Տարածություն:
Ավանդույթի մի քանի մեխ է խփում ճանապարհը
աշտարակներին Հորիզոնի:
Բանաստեղծը պեղում է
ինքն իրեն. փոթորկվո՞ւմ է ոգին Տիեզերքի:
Ցավը առաջնորդում է մինչև միջօրեականները
Երազի, ուր տողերը դառնում են
շե՞մը փրկության:
Մի սե՞րմ նետիր
թևերին հիշողության. դա՛ է Ելքը բազմախորհուրդ
Կյանքի:

19.11.2012թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴՌՆԵՐԸ ԾԵԾՈՒՄ ԵՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ.....3
Այստեղից կսկսվեն.....5
Վարք արվեստագետի 7
Թե.....8
Ստեղծագործական եղանակ
1. Ներշնչանքից առաջ.....9
2. Ներշնչանք՝ ոչ առանց լռության.....10
3. Խոսքի ծնունդից առաջ.....11
4. Նոր գրքի ծնունդն է դա.....12
5. Բույնն անսահմանի.....13
6. Ընդլայնելով սահմանը բացահայտումների.....14
7. Լաբիրինթոսը կողմնորոշվում է
բուրմունքով ծաղկի 15
8. Իսկ ապագայի դռները ծեծում են հասցեները.....16
9. Իմ ներշնչանքն ու տանջանքը վերին.....18
10. Նորահայտ առնչություններ.....19
11. Տողերի ճակատագիր 20
Վերնագրից դուրս.....22
Իմ կյանքը.....24
Ցավի լաբիրինթոս 25
Պատմության զոհասեղանը սրբագործվում է
վարդերով արյան.....27
Պատերազմի հետքերը ծաղկել են.....29
Լուսավորում՝ խորքից.....30
Երազների ճմեռ.....31
Կրակի ստվերն է կարծրացել.....32
Ծնունդ.....33
Թանգարան.....35
Ցավի ճանապարհը.....36
Գլորվում են օրերը՝ որպես լուսնի
դատարկ օղակներ 37
Ժամանակի թևերի միջև 38
Տեսողության վանդակ 39

Փլուզված կայսրության կարմիր ստվերը 42
Հուշերի շրջագծեր.....43
Տարածության ելքը.....44
Մարդու մի շնչառություն, մի հայացք լեռան.....46
Հետագիծ.....48
Փրկություն՝ կրակո՞վ.....49
Ելք անսահմանից 50
Մեկուսի կյանք.....52
Անհասություն.....53
Աշունը.....54
Պատերազմ.....55
Աղջկա երազով վերածնվում է 56
Ծարավ.....57
Շեմը անհայտի.....59
Վերածնվող ժամանակի դարպասների դիմաց.....60
Դուռ.....62
Հաղորդության խորան.....63
Հայացքիս ժամանակը երկինքներ է բացում.....65
Եղանակավորվում է ճյուղը անհունի.....66
Ես ապրում եմ ու տեսնում.....67
Ճանապարհն՝ աներևույթ ձեռքերում 68
Այսուհետև.....69
Բանաստեղծի ժամանակը.....70
Սերս թեև հրեշտակ է 71
Երկփեղկված գոյություն.....72
Շուտով կհասունանա եզրագիծը.....73
Խրամատ.....74
Հիշողության եզր.....75
Անպատասխան հարցեր 76
Բառի հայացքը 78
Կողպեք 79
Առօրյայի համապատկեր 80
Թևերիդ երկնքով բարուրիր ժամանակը 82
Անհայտության տեղեկանք 83
Շուտով կբացվեն դարպասները անինքնության.....84
Բարի լույս, աղոթք.....85

Ձմեռ....87
Աբսուրդի ակունքը....88
Միջնորդավորված իրականություն....89
Նայիր քո խորքը....91
Օրը ծավալվում է....93
Հետքերի ավերվող դեմքը....94
54 տող պատերազմի մասին....96
Քաոսի գազանը....98
Բևեռները հույսի....100
Սահմանադրության օր....101
Անձրևի ծաղիկներ....102
Մի բառ եմ գրում գալիքի էջում....103
Համանվագ....104
Փարիզյան խճանկար....106
Զիգզագների ձմեռ....108
Սերը....109
Կյանքը՝ շրջանակից դուրս....111
Հասցեները ցավի....113
Առանցքում քաոսի....114
Հիշողության սպունգը....115
Երկու ծայրերը այս մեծ լռության....117
Բարձրանում է օրը՝ ազատվելով բառերից
փողկապավոր....118
Ելք....120
Ոգին հարության....121
Նկարագիր....123
Խոստովանություն....124
Բառը....126
Լուսատու մատները ճակատագրի....127
Իմ ճանապարհը....128
Դժոխքի օրը....129
Թատրոն....130
Եզր....131
Հավասարակշռություն....132
Ծննդյան վկայականի փոխարեն....133
Արթուր Մկրտչյանի հիշատակին....134

Տառապանքի եղանակ.....135
Սերը երբեք չի սպառում.....136
Շուրթերի մեջ սեղմած ծաղիկը հեռվի.....137
Շրջանակ.....138
Հատվող գծեր.....139
Քրիստափոր Իվանյանին.....141
Ժամանակը քարե վանդակներում.....142
Անկյունների խրոնիկա.....143
Տարածաչափ և ժամանակաչափ բառեր.....145
Ներսը և դուրսը 146
Անձրև.....147
Բանաստեղծի հայացքը.....148
Տիգրանակերտ 149
Ապսպարանք.....150
Ասուպներ են ցայտում թարթիչներից հիշողության.....151
Վազգեն Սարգսյանին.....153
Բևեռից-բևեռ 154

ԴԱ ԻՄ ԺԱՄԱՆԱԿՆ Է.....155
Հնարանքի կիրառում
1. Ստեղծագործական եղանակ.....157
2. Ուղեցույց ոգու.....158
Դա իմ ժամանակն է
1. Լապտերը.....159
2. Լռությունը.....160
3. Ասելիքը 161
4. Դեմք.....162
5. Բանալի.....163
6. Արյան հասցեն.....164
7. Ոգին.....165
8. Մխանք.....166
9. Ճանապարհը.....167
10. Մի երկտող՝ թևին հրեշտակի.....168
11. Նկար 169
12. Համբույրի աչքերից կաթում է արցունքը.....170
13. Ճակատագրի խորշում՝ ազդանշան ոգու 171

14. Ճանապարհի ստվերը սլաքն է ժամացույցի.....172
15. Գրում է ժայռերին.....173
16. Քառսի դարպասին թառել է մի բառ.....174
17. Անսահմանի սերմ.....175
18. Ցանկություն.....176
19. Կարոտի լուսանցքներից դուրս են մղվել.....177
20. Հայտնություն.....178
21. Բառը, որպես հորիզոնի աչք.....179
22. Ժամանակի հետգրությունը.....180
23. Ելքը.....181
Բացակա է.....182
Ճակատագրի ուսերից թափվող տերևներ.....183
Անհունի հետագիծը.....184
Դռներ են բացվում 185
Առաքելություն.....186
Սիրահարների զրույցը.....187
Քո պատուհանը.....188
Ճանապարհ.....189
Բանաստեղծի աչքերում լուսանում է ցավն առավոտի.....190
Պտուղներ ոգու.....191
1992թ. հունվարի 26.....192
Շուրջպար՝ աղոթքներով.....193
Հորիզոնը փռում եմ լավաշի պես.....194
Հաղորդակցություն.....195
Վառվում է արցունքս, ինչպես մոմ.....196
Սկիզբ.....197
Ծնունդ.....198
Երբ երկնում ես դու.....199
Ընթացքի խորհրդանիշը.....200
Ժողովրդավարության վանդակներում.....201
Անցորդների ժպիտը.....202
Ինքնանկարի փորձ.....203
Մենակություն.....204
Լուսանկարչական պահեր.....205
Օրվա անհասցե դռները 207
Բացահայտվում է դեմքը լռության.....208

Կատարելություն....209
Ժամկետանց խոսք....209
Մի դեղին հրճվանք կախելով թևերից անհունի....210
Անի....211
Դիպվածի կյանքը....212
Ողբերգ....213
Ո՞վ է վերադառնում ըմբռնումի նոր լարի վրայով....214
Համբույրներով հղկվում է....215
Անդունդ....216
Հորիզոնի բողբոջը....217
Տարածության ուժը....218
Ժամանակի գալուստը....220
Մենության բուրմունքը....221
Գլորվում է օրը, որպես արցունք....222
Ապագայի դեմքը....223
Թևում են հրեշտակները անտերունչ ցավի....224
Ոգու թռչունների հայրենիքում....225
Սերը....226
Էտյուդ....227
Այսուհետ....228
Ձմռան կայքէջում....229
Սալվադոր Դալիի երևանյան կտավը....230

ՍԵՐՄԵՐԻ ԵՂԱՆԱԿ....231
Սկիզբ....233
Ուղղությունը ելքի....234
Սերմերի եղանակ....235
Բառը....236
Այս պահին....237
Ճառագայթի ճակատն ի վար....238
Համբույրի տիեզերքը....239
Ընտրություն....240
Լուսաբացի բարուր....241
Կինը....242
Բիբլիական մոմ....244
Տարածության խորհուրդը....245

Ձայն ոգու....246
Հարության դռներ....247
Աստղեր....248
Անհունի ոգին....249
Հասարակարգերի միջև ճզմվում են....250
Մեկուսարան - ժամանակը....251
Էլեգիա....252
Եվ բառերից գլորվում են....256
Հարության դեմքը....257
Իմ վերքերից հառնում են....258
Դիպվածի աչքերից կախված....259
Տերևաթափվող մի անեզրություն....260
Պսակ....261
Ոգու ծաղիկ....262
Ահազանգը....263
Ճանապարհս....264
Կինը....265
Բառը....266
Խաչը....267
Հույսի հասցեները....268
Արմատի օրը....269
Ելքը....270
Ներկայությունը ոգու....271
Աստծո օրը....272
Ուղեկցող սեր....273
Աստվածային խորհուրդ....274
Ոգու հասցեները....275
Ներշնչանքիս դեմքով....276
Քաղաքականության մայրամուտը....277
Ցմեռնամուտի երգերը....278
Տան դռները բացվում են....279
Բառերը....280
Բանաստեղծի ճանապարհը....282
Կտավ....283
Ազատության բառեր....284
Արցախ....285

Ինքնահանդիպման տեսիլաժամին 286
Արյան հիշողություն.....287
Ճանապարհի ոգին.....288
Ջրվեժ.....289
Կտավից դուրս.....290
Արյունն աբսուրդի.....291
Հուսո աստղ.....292
Բնության մեծ ելքը.....293
Ճանաչողության շեմը.....294
Ելքը.....295
Խաղ.....296
Վայրկյանների գագաթներին.....297
Ոգու կիրակի.....298
Ինքնամոտեցման վիհը.....299
Ընթացք.....300
Կերպափոխության նորագույն շրջանը.....301
Տարածության անուն.....302
Հաղորդության լարերը.....303
Ինքնաորոնման սահմաններից դուրս.....304
Ճանապարհի հասցեն.....305
Իմ դեմքը.....306
Վառվում են թռիչքի ասպարեզները.....307
Սահմանագծերը.....308
Առանցքը.....309
Բեռնակիրը.....310
Հավատ.....311
Իմ գործը.....312
Ամեն վայրկյան.....313
Խաչը.....314
Դռները.....315
Անհունի գագաթը.....316
Հիշողության ցերեկ.....317
Տարածության խորհուրդը.....318
Մանկության թիրախ.....319
Ծխում եմ մտքերիս ածուխը 320
Ոգու օազիս.....321

Տենդ....323
Բառը....324
Հիշողության բևեռներում....325
Անեզրության ձու....326
Հորս....327
Ապրում եմ այսպես....328
Շրջափակման բնին պատվաստված ստվերները....329
Բառի պատյանից....330
Իսկ երբ կոպերիդ վրա արթնանան....331
Բողբոջի մեջ 332
Ժամանակի ձեռքը....333
Ճակատագրի ձեռքը ծեծում է դուռը....334
Անջատվում է դեմքը կեսօրի....335
Մարդը....336
Երկու ժամանակի միջև....337
Սերմեր ոգու....338
Լռության վիհերը լցվում են....339
Մեր համբույրներում պատանդ է ժամանակը....340
Ծիծեռնակի թռիչքի բանաձևը....341
Լույսը ծաղկում է ակունքում օրվա....342
Գալիս ես լեռան գագաթին գուրգուրելու....343
Բառի ճանապարհը....344
Ներդաշնակություն....345
Նժար....346
Սկիզբը....347
Տեսողության հասցե....348
Ծնունդ....349
Անհայտության աղը....350
Աբսուրդի ակունքում....351
Ինձ մի բառ է պետք....352
Կենսագրություն....353
Խորհուրդը աստղի....354
Բառերի երակներում համբուրվում են բարձունքները....355
Անհունի պատարագը....356
Եվ դուրս են թռչում....357
Սպիտակ պատերի հիշողության մեջ....358

Սպիտակ մի էջ է ճակատը հույսի.....359
Զիգզագների ամառ.....360
Ապագայի ոտնահետքերը.....361
Եվ ցավս դառնում է հիշողության զանգ.....362
Հիշողության վաղը.....363
Եվ արյան երկնքից կանչում է ինձ մի աստղ.....364
Բևեռների համանվագը.....365
Հիշողության ասուպ.....366
Հրեշտակի թևը բարձրացնում եմ
 և նայում իմ… ապագային.....367
Անհայտի օազիսը.....368
Հավատի բևեռները.....369
Ընթացք 370
Առանցք.....371
Պատանդը.....372
Հավատամք.....373
Տողեր՝ հիշողության լուսանցքներում.....374
Հիշողության լուսանցքներում.....375
Ճանապարհի ոգին.....376
Դարն իր ասելիքը սկսեց քարտեզագրով 377
Տիեզերական շնչառության մեջ ծառերի.....378
Բարձրացնում եմ ստվերը ժայռի.....379
Սիրո աչքերից ընկնում է աստղը ճանապարհի.....380
Աբսուրդի թատրոն.....381
Անձրևի կաթիլներից ցայտում են երկինքները.....382
Ճանապարհը կտցահարում է 383
Խոսակցության գույների միջնորդությամբ.....384
Լռությունը վաղվա.....385
Հրեշտակների պարը.....386
Կորուսյալ բախտի հասցեներում.....387
Ելքը.....388

ՌՈԲԵՐՏ ԱՐԱՄԻ ԵՍԱՅԱՆ

ՈԳՈՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Սրբագրիչ՝ Լ. Բաղդասարյան
Համակարգչային շարվածքը
և էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Աբրահամյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 25 տպ. մամուլ, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2013